

**ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՀԱՄԱՅՆԱՐՀԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆ**

Գ. Ա. Քիլիմջյան

**ՀՆԴԿԱՍՏԱՆԻ, ԶԻՆԱՍՏԱՆԻ ԵՎ
ՃԱՊՈՆԻԱՅԻ
ՄԻՋՆԱԴԱՐԻ ՈՒ ՆՈՐ ԺԱՄԱՆԱԿՆԵՐԻ
ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ**

(Դասախոսություններ)

ԵՐԵՎԱՆ - 2017

**Հրադարակվել է ԵՊՀ պատմության ֆակուլտետի
գիտական խորհրդի և Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ
Համաշխարհային պատմության և նրա դասավանդման
մեթոդիկայի ամբիոնի երաշխավորությամբ:**

**Գլխավոր խմբագիր՝ պ.գ.դ., պրոֆեսոր Ա. Ա. Ստեփանյան
Գրախոս՝ պ.գ.դ., պրոֆեսոր Է. Գ. Մինասյան**

Պատմության ֆակուլտետի բակալավրիատի երրորդ կուրսում կարդացվող սույն դասախոսությունները վերաբերում են «Ասիայի ու Աֆրիկայի երկրների պատմության» դասընթացի՝ միջին ու նոր դարերի ժամանակաշրջաններում Հնդկաստանի, Չինաստանի և Ճապոնիայի քաղաքական, պետական ու հասարակական կառուցվածքներին, ազրարային կարգերին, կառավարող շրջանների ներքին քաղաքականության բնագավառներին: Առանձնակի ուշադրություն է դարձվում՝ ներքաղաքական իրադարձություններին, միջազգային հարաբերություններին, նվաճողական պատերազմներին, օտարեկրյա տիրապետության և դրա անմիջական հետևանքներին, այդ երկրների դեմ տերությունների մղած գաղութային պատերազմներին և գաղութային քաղաքականությանը, դրանց առանձնահատկություններին, տերությունների միջև մղած գաղութային պայքարին:

Դասախոսությունները կարող են նաև օգտակար լինել Արևելքի խոշորագույն տերությունների՝ Հնդկաստանի, Չինաստանի և Ճապոնիայի միջին ու նոր դարերի պատմությամբ հետաքրքրվողներին:

*Рекомендовано к печати Научным советом
Исторического факультета ЕГУ и кафедрой
Всемирной истории и методики ее преподавания имени
АГПУ им. Х. Абовяна*

Главный редактор докт. ист. наук А. А. Степанян
Рецензент докт. ист. наук, профессор Е. Г. Минасян

**Очерки средневековой и новой истории
Индии, Китая и Японии**

(Курс лекций)

Настоящий курс лекций, предусмотренный для студентов 3-его курса исторического факультета по программе бакалавриата, является составной частью предмета “История стран Азии и Африки”. Он охватывает период истории начиная от средневековья до новых времен стран Индии, Китая и Японии, касается политического, государственного и общественного устройства этих стран. Особое внимание уделяется внутренней политике, вопросам международных отношений, захватническим войнам, иностранной оккупации и их последствий, колониальной политике сверхдержав в этих странах, особенностям освободительной борьбы против колониальной зависимости.

Курс лекций может быть также полезен для более широкой аудитории, интересующейся вопросами истории средних веков и нового времени крупнейших восточных стран: Индии, Китая и Японии.

*Publication approved by the academic council
of the Faculty of History of Yerevan State University and
Department of World History and Methodics of its Teaching
ASPU after Kh. Aboyan*

Editor-in-Chief professor **A. A. Stepanyan**

Reviewer **E. G. Minasyan**

Aspects of Medieval and Modern History of India, China, and Japan

(*Lectures*)

The lectures delivered at the bachelor's third course of the Faculty of History titled as "the History of countries of Asia and Africa." Particularly, they concern with the political, state and social institutions, home and foreign policies of the ruling elite of India, China and Japan in the medieval and modern times. Special attention is paid to the internal policy and international relations, wars, foreign conquests, colonial policies, liberation movements, as well as to the struggle between the colonial states.

The collection of lectures can also be useful for those interested in the medieval and modern history of the biggest powers of Orient – India, China and Japan.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն

ՀՆԴԿԱՍՏԱՆԸ, ԶԻՆԱՍՏԱՆԸ ԵՎ ՃԱՊՈՆԻԱՆ ՄԻՋՆԱԴՐՈՒՄ

ՀՅՈՒՍԽԱՅԻՆ ՀՆԴԿԱՍՏԱՆԸ 4-6-ՐԴ ԴԱՐԵՐՈՒՄ

Գուպտաների տերությունը: Հռն-հեփթաղների
տիրապետությունը

ՀՅՈՒՍԽԱՅԻՆ ՀՆԴԿԱՍՏԱՆԸ 6-12-ՐԴ ԴԱՐԵՐՈՒՄ

Արաբական արշավանքները: Ղազնիների և Գուրիների
տերությունները

Դելիի սովորանությունը

Դելիի սովորանության պետական համակարգը: Իսլամի
տարածումը

Ֆեոդալական իոդատիրության ձևերը Դելիի
սովորանությունում

Օգդագործված գրականություն.

ԶԻՆԱՍՏԱՆԸ ՍՈՒՅ ԵՎ ՏԱՆ ԱՐՔԱՅԱՏՈՒՄԵՐԻ

ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՆԵՐՈՒՄ

Ագրարային հարաբերությունները Սույ և Տան
արքայատոհմերի ժամանակաշրջաններում

Պետական կառավարման համակարգը Տան արքայատոհմի
ժամանակաշրջանում

ԶԻՆԱՍՏԱՆԸ ՍՈՒՅ ԱՐՔԱՅԱՏՈՒՄԻ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ

(960-1279 թթ.)

Զինաստանի նվաճումը չժուրչժենների և մոնղոլների կողմից

Օգդագործված գրականություն

ՎԱՂ ՖԵՂԴԱԼԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ ՃԱՊՈՆԻԱՅՈՒՄ

645 թ. «Տայկայի հեղաշրջումը»: «Տայկայի»

բարեփոխումները

«Տայկայի» 646 թ. Ագրարային բարեփոխումները

Օգդագործված գրականություն

ՀՆԴԿԱՍՏԱՆԻ, ԶԻՆԱՍՏԱՆԻ ԵՎ ՃԱՊՈՆԻԱՅԻ ՆՈՐ ԺԱՄԱՆԱԿՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ՀՆԴԿԱՍՏԱՆԸ ՄԵԾ ՄՈՂՈԼՆԵՐԻ ԿԱՅՍՐՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ (1526-1858 թթ.)

Մեծ Մողոլների կայսրության ստեղծումը և հզորացումը:
Դավանանքը: Կաստայական կարգը
Պետական կառուցվածքը
Բանակը
Ազրարային հարաբերությունները
Գյուղական համայնքը
Մեծ Մողոլների կայսրության քայլայումը: Նադիր Շահի և
աֆղանների արշավանքները

ՀՆԴԿԱՍՏԱՆԻ ԳԱՂՈՒԹԱՑՈՒՄԸ ՊՈՐՏՈՒԳԱԼԻԱՅԻ ԵՎ ՀՈԼԱՆԴԻԱՅԻ ԿՈՂՄԻՑ

ՀՆԴԿԱՍՏԱՆԻ ԳԱՂՈՒԹԱՑՈՒՄԸ ԱՆԳԼԻԱՅԻ ԿՈՂՄԻՑ (ՄԻՆՉԵՎ 1740 թ.)

ՀՆԴԿԱՍՏԱՆԻ ԳԱՂՈՒԹԱՑՈՒՄԸ ՖՐԱՆՍԻԱՅԻ ԿՈՂՄԻՑ:
ԱՆԳԼՈ-ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐԻ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ
ՀՆԴԿԱՍՏԱՆՈՒՄ

ՀՆԴԿԱՍՏԱՆԻ ԳԱՂՈՒԹԱՑՈՒՄԸ ԱՆԳԼԻԱՅԻ ԿՈՂՄԻՑ ՅՈԹՆԱՄՅԱ ՊԱՏԵՐԱԶՄԻՑ

ՀԵՏՈ (ՄԻՆՉԵՎ 18-ՐԴ ԴԱՐԻ ՎԵՐՋԸ)

ՀՆԴԿԱՍՏԱՆԻ ԳԱՂՈՒԹԱՅՄԱՆ ԱԿԱՐՏԸ ԱՆԳԼԻԱՅԻ ԿՈՂՄԻՑ
(ՄԱՐԱՏՀԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐԻՑ ՄԻՆՉԵՎ 1849 թ.)

ԱՆԳԼԻԱՅԻ ԳԱՂՈՒԹԱՅԻՆ ՎԱՐՉԱԿԱՐԳԸ ՀՆԴԿԱՍՏԱՆՈՒՄ
(ՄԻՆՉԵՎ 1858թ.)

**1857-1859 թթ. ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԱՊԱՏԱՄԲՈՒԹՅՈՒՆԸ
ՀՆԴԿԱՍՏԱՆՈՒՄ**

ՀՆԴԿԱՍՏԱՆԻ ԳԱՂՈՒԹԱՅԻՆ ՎԱՐՉԱԿԱՐԳԸ 1858 թ. ՀԵՏԾՈՒՅՔ
ԱՆԳԼԻԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳԱՂՈՒԹԱՅԻՆ
ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀՆԴԿԱՍՏԱՆՈՒՄ 19-ՐԴ ԴԱՐԻ
ՎԵՐՋԻՆ 30-ԱՄՅԱԿՈՒՄ ԵՎ 20-ՐԴ ԴԱՐԻ ՍԿՂԲԻՆ
Օգտագործված գրականություն

**ԶԻՆԱՍՏԱՆԸ ՄԱՆՋՈՒՐԱԿԱՆ «ՅԻՆ» (ՄԱՔՈՒՐ) ԱՐՔԱՅԱՏՈՒՄԻ
ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ (1644-1911 թթ.)**

1628-1645 թթ. գյուղացիական պատերազմը Զինաստանում
և մանջուրական «Յին» արքայատոհմի հաստատումը
Յինյան կայսրության պետական կառուցվածքը: Դասերը,
քաղաքները, արհեստները և առևտուրը Յինյան
կայսրության տարածքը: Բնակչությունը: Ագրարային
հարաբերությունները

Յինյան կայսրության արտաքին քաղաքականությունը:
Հարաբերությունները Եվրոպական երկրների և
Ռուսաստանի հետ (17-րդ դարի 2-րդ կես-18-րդ դար)
Տերությունների ներթափանցումը Զինաստան 19-րդ դարի
առաջին կեսին:

Առաջին «օկիխում»-ի պատերազմը (1840-1842 թթ.).....
Երկրորդ «օկիխում»-ի պատերազմը (1856-1860 թթ.)
Զինաստանի վերածումը մեծ տերությունների կիսագաղութի
Զինաստանի բաժանումը «ազդեցության գոտիների» ու
«վարձակալված» տարածքների

**1911-1913 թթ. ԶԻՆԱԿԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ
Օգտագործված գրականություն**

**ՃԱՊՈՆԻԱՆ ՏՈԿՈՒԳԱՎԱՅԻ ՍՅՈԳՈՒՆԱՏԻ
ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ (1603-1867 թթ.)**

Ճապոնիայի միավորման ավարտը: Տոկուգավայի
սյոգունատի հաստատումը: Դասերը, կառավարման
համակարգը
Տերությունների ներթափանցումը Ճապոնիա: Ճապոնիայի
ինքնամեկուսացման քաղաքականությունը.
Տերությունների գաղութային քաղաքականությունը
Ճապոնիայում 19-րդ դարի 40-60-ական թթ.

1867-1868 թթ. ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՃԱՊՈՆԻԱՅՈՒՄ:
ՎԵՐԱՓՈԽՈՒՄՆԵՐԸ 19-ՐԴ ԴԱՐԻ ՎԵՐՁԻՆ ՅՈՒՄՅԱԿՈՒՄ
ՃԱՊՈՆԻԱՅԻ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ 19-ՐԴ ԴԱՐԻ
ՎԵՐՁԻՆ ՅՈՒՄՅԱԿՈՒՄ: 1894-1895 թթ. ՃԱՊՈՆԱ-ՉԻՆԱԿԱՆ
ՊԱՏԵՐԱԶՄԸ
ՃԱՊՈՆԻԱՅԻ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ 1900-1914
ԹԹ.

1904-1905 թթ. Ռուս-ճապոնական պատերազմը

Օգլագործված գրականություն

Ներածություն

Համաշխարհային պատմության դիտանկյունից Արևելքը միշտ ներկայացել է իբրև բազմազանության պատկեր, որով առանձնանում է Եվրոպականից: Ի հայտ գալով տարբեր կրոնական-մշակութային ավանդույթների համատեքստում՝ արևելյան որոշ քաղաքակրթություններ զարգացել են հույժ կարևոր շփումների և փոխազդեցությունների, իսկ առանձին դեպքերում՝ համադրությունների շնորհիվ: Ուստի ներկայացվող դասախոսությունները նվիրված են Արևելքի ոչ բոլոր երկրներին, այլ միայն դրանցից առավել տիպականների՝ Հնդկաստանի, Չինաստանի և Ճապոնիայի միջին ու նոր դարերի պատմության հիմնահարցերին:

Միջնադարի սկզբնավորման և նոր դարերի ավարտի ժամանակագրական սահմանները միատեսակ չեն Հնդկաստանի, Չինաստանի և Ճապոնիայի համար, քանի որ, չնայած բազմաթիվ նմանություններին, պատմական զարգացումներին այդ երկրներում ունեն իրենց առանձնահատկությունները:

Հնդկաստանի, Չինաստանի և Ճապոնիայի միջին ու նոր դարերի պատմությունը վերաբերող դասախոսությունների նպատակն է՝ հաղորդել հիմնավոր գիտելիքներ՝ ներկայացնելով ինչպես ներքին ու արտաքին իրադարձությունների համապատկերը, այնպես էլ արժևորելով քաղաքական ու սոցիալ-տնտեսական զարգացումները, խորքային փոխակերպությունները:

Դասախոսությունները կազմված են Հնդկաստանի, Չինաստանի և Ճապոնիայի միջին ու նոր դարերի ներքին կյանքին ու արտաքին հարաբերություններին նվիրված ոուսալեզու բուհական դասագրքերի, աշխատությունների և ոուսերեն թարգմանված դիվանագիտական փաստաթղթերի ժողովածուների հիման վրա:

**ՀՆԴԿԱՏԱՆՅ, ԶԻՒԱՏԱՆՅ
ԵՎ
ՃԱՊՈՆԻԱՆ
ՄԻԶԱՆԱՐՈՒՄ**

ՀՅՈՒՍԽԱՅԻՆ ՀՆԴԿԱՍՏԱՆԸ 4-6-ՐԴ ԴԱՐԵՐՈՒՄ

ԳՈՒՊՏԱՆԵՐԻ ՏԵՐՈՒԹՅՈՒՆԸ: ՀՈՆ-ՀԵՓԹԱՂՆԵՐԻ ՏԻՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ

4-5-րդ դարերում Հյուսիսային Հնդկաստանի գետային հովիտներում գոյություն ունեին կառավարման տարբեր ծևերով և զարգացման անհավասար մակարդակներով հնդկական բազմաթիվ մանր պետություններ ու իշխանապետություններ: Գանգես գետի և նրա վտակ Զամնայի միացման վայրում հնդկական Գուպտա տոհմի կողմից հիմնված մի փոքրիկ թագավորության տիրակալ Զանդրագուպտա Առաջինը (320-335 թթ.) 320 թ. գրավում է Հյուսիսային Հնդկաստանի տնտեսապես ու մշակութային առումով ամենազարգացած Մագաղիա պետությունը՝ նրա մայրաքաղաք Պատալիպուտրան (արդի Պատնա) դարձնելով իր տիրապետության կենտրոնը: Հռչակելով «արքայից արքա» («մահառաջա»)՝ Զանդրագուպտա Առաջինը իր իշխանության ներքո միավորում է լայնածավալ հովտի մի տարածք, որը տարածվում էր Գանգես գետի և նրա վտակ Զամնայի միացման վայրում գտնվող Պրայահա քաղաքից (հետագայում՝ Ալլահաբադ) արևելք՝ մինչև Բենգալյան ծոցը: Զանդրագուպտա Երկրորդի (380-415 թթ.) արշավանքների հետևանքով Գուպտաների տերության ընդլայնված սահմանները Հյուսիսային Հնդկաստանում տարածվում են Բենգալյան ծոցից մինչև Արաբական ծովը: Զանդրագուպտա Երկրորդի կառավարման ժամանակաշրջանում Գուպտաների կայսրությունը հասնում է իր քաղաքական և ռազմական առավելագույն հզորությանը: Տնտեսական բարգավաճումը նպաստում էր գիտության, գրականության ու արվեստների տարբեր բնագավառների զարգացմանը: Զանդրագուպտա Երկրորդի հաջորդների ժամանակ ամբողջ Հյուսիսային Հնդկաստանը մինչև Նարբադա գետը միավորվում է Գուպտաների գերիշխանության

Ներքո: Հնդկաստանի պատմության IV-V դարերի ժամանակաշրջանը պատմագրության մեջ հաճախ բնութագրվում է որպես «Գուպտաների ոսկե դարաշրջան», իսկ պատմական ավանդույթում Չանդրագուպտա II-ը մեծարվում է «Արև հզորության» պատվավոր մականունով:

Գուպտաների լայնածավալ տերությունը կառավարվում էր բյուրոկրատական (դիվանակալական) վարչական մեծ ապարատի միջոցով: Թագավորը իր տերությունը ղեկավարում էր արիստոկրատական տոհմերի բարձրաստիճան պաշտոնյաներից բաղկացած իշխանության բարձրագույն մարմնի՝ Պետական խորհրդի միջոցով: Գուպտաների կայսրությունը բաժանված էր վարչական մարզերի և շրջանների, որոնց կառավարում էին թագավորի կողմից նշանակված փոխարքաները: Այդ փոխարքաներից մի քանիսը գուպտաների կողմից նվաճված նախկին իշխող տոհմերի ներկայացուցիչներն էին: Փոխարքաները մարզերը և շրջանները կառավարում էին իրենց ենթակա վարչական ապարատի միջոցով: Վարչական ապարատի պաշտոնյաները ռոճիկ էին ստանում պետական գանձարանից: Յուրաքանչյուր մարզի և շրջանի ամենաստորին վարչական և հարկային միավորը գյուղական համայնքն էր, որը ղեկավարվում էր գյուղական տանուտերի կողմից: Գյուղական տանուտերի կամ՝ գյուղական համայնքի ավագի օգնականն էր համայնքի հողային ցուցակները կազմող և պահող գրագիրը: Գյուղական համայնքի կարևոր հարցերը վճռվում էին գյուղական համայնքի ավագների մասնակցությամբ: Հնդկական գյուղական համայնքը իր կազմավորումից մինչև վերջ գրեթե մնում է անփոփոխ: Գուպտաների կայսրության ռազմական հզորության ուժն էին կազմում մշտական վարձու բանակը և զինված ռստիկանությունը, որոնց միջոցով նրանք նվաճումներ էին կատարում, հնազանդ պահում հպատակված ցեղերին ու ժողովուրդներին, ճնշում

գյուղացիական և իրենց գերիշխանության դեմ ուղղված ապստամբությունները:

460 թ. Գուպտաների տերության հյուսիսարևմտյան տարածքի վրա են հարձակվում Աֆղանստանի Քարովի հովտում հաստատված կիսաքոչվոր և քաղաքակրթական առումով հնդիկների համեմատությամբ հետամնաց հասարակական աստիճանի վրա գտնվող սպիտակ հոն-հեփթաղները (քուշաններ, էֆտալիտներ), որի հետևանքով Գուպտաների տերությունից անջատվում են մի շարք ծայրամասային շրջաններ:

6-րդ դարի սկզբին սպիտակ հոն-հեփթաղները նորից են հարձակվում Գուպտաների տերության վրա և գրավում նրա հյուսիսարևմտյան տարածքը, իսկ 515 թ. իրենց տիրապետությունն են հաստատում Հյուսիսային Հնդկաստանի զգալի մասի վրա՝ ավերելով քաղաքները, գյուղերը, բուդդայական վանքերը: Հոն-հեփթաղների դեմ մղած պատերազմներում ոչնչանում է նաև ստրկատիրական արիստոկրատական տոհմերի նշանակալի մասը: Այնուամենայնիվ, սպիտակ հոն-հեփթաղների տիրապետությունը Հյուսիսային Հնդկաստանում երկար չի տևում և 530-ական թվականներին տապալվում է: 560-ական թվականներին սպիտակ հոն-հեփթաղների տիրապետությունը տապալվում է նաև Միջին Ասիայում և Աֆղանստանում: 6-րդ դ. վերջին Գուպտաների տերության, այնուինչու՞ Հնդկաստանի հյուսիս-արևմուտքում Շակալա (արդի Սիալկոթ՝ Փենջաբում) կենտրոնով սպիտակ հոն-հեփթաղների պետության անկումից հետո Հյուսիսային Հնդկաստանը մասնատվում է բազմաթիվ մանր իշխանապետությունների:

ՀՅՈՒՍԽԱՅԻՆ ՀՆԴԿԱՍՏԱՆԸ 6-12-ՐԴ ԴԱՐԵՐՈՒՄ

ԱՐԱԲԱԿԱՆ ԱՐՉԱՎԱՆՔՆԵՐԸ: ՂԱԶՆԵՎԻՆԵՐԻ ԵՎ ԳՈՒՐԻՆԵՐԻ ՏԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

7-12-րդ դարերում Հյուսիսային Հնդկաստանը գտնվում էր քաղաքական մասնատվածության պայմաններում բաղկացած բազմաթիվ ֆեոդալական անկախ իշխանապետություններից: Այդ քաղաքական մասնատվածությունը նպաստավոր պայմաններ էր ստեղծում օտարերկյա նվաճումների ծավալման և Հնդկական թերակղզում օտարերկրյա տիրապետության հաստատման համար: 711-712 թթ. արաբները գրավում և իրենց տիրապետությունն են հաստատում հնդոս գետի ստորին հոսանքում գտնվող Սինդ երկրամասի հնդկական անկախ իշխանապետությունների վրա՝ 8-րդ դարի սկզբից Սինդը ենթարկելով մուսուլմանական քաղաքական գերիշխանությանը և հնդկական այդ երկրամասի իսլամականացմանը: 8-րդ դարի կեսերից Սինդի մուսուլմանական իշխանապետությունների փոխարքաները փաստորեն անկախանում են Արաբական խալիֆայության կենտրոնական իշխանությունից՝ դառնալով ինքնուրույն պետություններ: Արաբական արշավանքները թեև չեն տարածվում Հյուսիսային Հնդկաստանի՝ Սինդից արևելք գտնվող հնդկական իշխանապետությունների վրա, այնուամենայնիվ, քաղաքական, մշակութային և առևտրական հարաբերություններ են հաստատվում արաբական աշխարհի և Հնդկաստանի ինչպես հյուսիսային, այնպես էլ հարավային իշխանապետությունների միջև: Արաբական աշխարհի հետ ունեցած հարաբերությունների հետևանքով Հնդկական թերակղզում տարածվում է նաև իսլամը, կառուցվում էին մզկիթներ՝ արգելվների չհանդիպելով ո՞չ իշխանությունների և ո՞չ էլ ժողովրդական զանգվածների կողմից: Այդպիսով, իսլամը, որպես դավանանք, Հնդկաստան է թափանցում 8-րդ դարի սկզբին, սակայն

քաղաքական տիրապետող գաղափարախոսություն է դառնում հետագայում, երբ ամբողջ Հնդկական թերակղզին, բացառությամբ ծայր հարավի հնդկական իշխանապետությունների, ընկնում է մուսուլման նվաճողների քաղաքական տիրապետության տակ:

11-րդ դարի սկզբին (1000-1027 թթ.) Հյուսիսային Հնդկաստանը 17 անգամ ենթարկվում է թյուրքական արքայատոհմի գլխավորությամբ Աֆղանստանում Ղազնի մայրաքաղաքով 962 թ. առաջացած Ղազնիների պետության (962-1186 թթ.) սուլթան Մահմուտ Ղազնի (998-1030 թթ.) ավերիչ արշավանքներին: Սակայն Հյուսիսային Հնդկաստանի նվաճումը իրականացվում է 12-րդ դարի վերջին և 13-րդ դարի սկզբին՝ Աֆղանստանում 1173 թ. Գուրիների (Գուրը Արևմտյան Աֆղանստանի լեռնային շրջաններից մեկն է) արքայատոհմի իշխանությունը հաստատած և 1186 թ. Փենջարում Լահոր կենտրոնով Ղազնիների վերջին տերությունը կործանած սուլթանների կողմից:

Գուրիների արքայատոհմի վերջին սուլթան Մուհամմադ Գուրին (1203-1206 թթ.) գրավում է Աֆղանստանի ամբողջ տարածքը, իսկ Հյուսիսային Հնդկաստանում իր տիրապետությունն է հաստատում Սինդի, Փենջարի, Բենարեսի և հյուսիսարևմտյան այլ շրջանների վրա: Հյուսիսային Հնդկաստանում մուսուլման Գուրիների քաղաքական ու տնտեսական տիրապետությունը ամրապնդելու նպատակով Մուհամմադ Գուրին իր նվաճած հողերի մի մասի կառավարումը հանձնում է իր հզոր զորավարներին: Նվաճված նախկին հնդկական իշխանապետությունները կա'մ ոչնչացվում են, կա'մ հպատակվելով՝ դառնում են Մուհամմադ Գուրիի հարկատու վասալները: Հյուսիսային Հնդկաստանում նվաճած հողերի մյուս մասը Մուհամմադ Գուրին ռազմական ծառայության դիմաց բաժանում է իր բազմաթիվ զորավարներին: Այդպիսով, Հյուսիսային Հնդկաստանում հաստատվում է նվաճված բնիկ հնդիկ բնակչությանը լեզվով, մշակույթով ու դավանանքով, էթնիկական պատկանելությամբ օտար, մուսուլմանական դավանանքին

պատկանող թյուրքական, տաջիկական և աֆղանական վերնախավի քաղաքական, տնտեսական ու կրոնական գերիշխանությունը:

ԴԵԼԻԻ ՍՈՒԼԹԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Գուրիիների տիրապետության ներքո գտնվող Հյուսիսային Հնդկաստանի փոխարքա, միջինասիական թյուրք զորավար Կուտբ ադ-Դին Այբաքը շարունակում է Հյուսիսային Հնդկաստանի նվաճումը՝ 1193 թ. գրավելով Դելին և այն դարձնելով իր փոխարքայության կենտրոնը: Ընդարձակելով իր փոխարքայության սահմանները և օգտվելով Գուրիիների տերության կործանումից՝ 1206 թ. Դելիում իրեն հռչակում է անկախ սովորան (1206-1210 թթ.)՝ Հյուսիսային Հնդկաստանում իիմք դնելով մուսուլմանական ֆեոդալական ավագանու տիրապետության ներքո գտնվող առաջին ինքնուրույն իսլամական պետությանը՝ Դելիի սովորանությանը (1206-1526 թթ.):

Մուսուլմանական տիրապետությունը Հնդկաստանում օրինականացնելու և հինդուաների դեմ մղած կրոնական «սրբազն պատերազմի» միջոցով իսլամական դավանանքը տարածելու նպատակով մուսուլմանական աշխարհի հոգևոր գլուխ Բաղդադի խալիֆը 1229 թ. պաշտոնապես ճանաչում է նվաճման արդյունքում ստեղծված Դելիի սովորանությունը:

Կուտբ ադ-Դին Այբաք սովորանի հաջորդ տիրակալները Հնդկական թերակղզում շարունակում են Դելիի մուսուլմանական սովորանության սահմանների հետագա ընդարձակման ու հնդկական իշխանապետություններում իրենց քաղաքական ու տնտեսական գերիշխանությունը հաստատելու աշխարհավարությունը:

Սովթան Ալա աղ-Դին Հիջհի տիրապետության ժամանակաշրջանում (1296-1316 թթ.) կատարված նվաճումների հետևանքով գրեթե ամբողջ Հնդկական թերակղզին գրավվում և քաղաքականապես միավորվում է մեկ միասնական մուսուլմանական ֆեոդալական տերության մեջ: Սակայն 14-րդ դարի կեսերից սկսվում է Դելիի մուսուլմանական սովթանության թուլացման ժամանակաշրջանը, իսկ միջինասիական Էմիրության՝ Մավերաննահրի տիրակալ Լենկթեմուրի՝ Հյուսիսային Հնդկաստան ձեռնարկած 1398-1399 թթ. կործանիչ արշավանքի հետևանքով Դելիի սովթանությունը քայլայվում է, որի հետևանքով արդեն 15-րդ դարում նրա տարածքը սահմանափակվում է Գանգես գետի և նրա վտակ Ջամնայի միջև գտնվող տարածքով՝ Դոաբով: Ի վերջո 1526 թ. Դելիի սովթանությունը նվաճվում է Չինգիզ խանի և Լենկթեմուրի ստեղծած տերության իրավաժառանգորդ Բաբուր իշխանի կողմից:

ԴԵԼԻԻ ՍՈՒԼԹԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱՐԳԵՐԸ: ԻՍԼԱՄԻ ՏԱՐԱԾՈՒՄԸ

Դելիի սովթանությունը արևելյան տիպի ֆեոդալական բացարձակ միապետություն էր: Սովթանն էր իրականացնում բարձրագույն օրենսդիր, գործադիր, դատական և ռազմական իշխանությունը: Պետությունը կառավարելու գործում սովթանի օգնականն էր գլխավոր վեզիրը, որը ղեկավարում, ուղղորդում և վերահսկում էր պետական բազմաթիվ գերատեսչությունների աշխատանքները: Դելիի սովթանության պետական կառավարման հիմնական բնագավառներից էին հարկային և ռազմական գերատեսչությունները: Հարկային գերատեսչությունը տուրք էր վերցնում սովթանության վասալական իշխանապետություններից, սահմանում հարկերը և հետևում դրանց գանձմանը: Միաժամանակ,

հարկային գերատեսչությունը հետևում էր մաքսերի և ոչ մուսուլման չափահաս տղամարդկանցից զինվորական ծառայության փոխարեն գանձվող գլխահարկի՝ ջիզեի հավաքմանը, ընդ որում ջիզեն հավաքվում էր ըստ նրանց տնտեսական կարողության: Ջիզեից ազատված էին կանայք, հաշմանդամները, ընչազուրկ տղամարդիկ և ոչ մուսուլման հոգևորականները: Հարկային գերատեսչությունը հաշվառում և հարկման էր Ենթարկում բոլոր տեսակի ֆեոդալական հողատիրույթները, ինչպես նաև՝ ղեկավարում ջրաբաշխական կառույցների և ոռոգման համակարգի շինարանությունը: Ռազմական գերատեսչությունը զբաղվում էր բանակի կազմավորմամբ, հանդերձավորմամբ, մատակարարմամբ, տեղաբաշխմամբ և վարձկանների ոռճիկների վճարմամբ: Սովորանության զորքը հիմնականում վարձկաններից կազմված հեծելազորն էր, որը բաղկացած էր Հյուսիսային Հնդկաստանը նվաճած թյուրքերից, աֆղաններից, տաջիկներից և նրանց հետնորդներից: Դելիի սովորանության վարձու հեծելազորը 14-րդ դարի առաջին կեսին, երբ առկա էր մոնղոլական ներխուժման վտանգը, հասնում է 350 հազարի: Դելիի սովորանությունը բաժանված էր մարզերի՝ մութքաների, որոնք կառավարվում էին խոշորագույն զորահրամանատարների՝ մութքադարների կամ՝ վալիների գլխավորած վարչության կողմից: Մարզերից գանձվող հարկերը մութքադարները և վալիները ուղարկում էին սովորանական գանձարան, սակայն այդ հարկերի որոշ մասը նրանք տրամադրում էին իրենց ընտանիքների, սպասավորների, վարչական ապարատի ու զորքի պահպանությանը: Մութքադարների և վալիների հարկային քաղաքականությունը վերահսկում էին ֆինանսական գերատեսչության նշանակած պաշտոնյաները:

Հյուսիսային Հնդկաստանը նվաճած մուսուլման տիրակալները իսլամական դավանանքը դարձնում են Դելիի սովորանության պետական կրոնական պաշտամունքը: Որպես տիրապետող

քաղաքական իշխանության դավանանք՝ ռազմական հրամանատարական և քաղաքացիական բարձրագույն պաշտոնները հանձնվում էին միայն մուսուլման ֆեոդալներին: Պետական և դատական համակարգը նույնպես պատկանում էր մուսուլման հոգևորականությանը: Հինդուսների միջև առաջացած քաղաքացիական գործերը վճռվում էին ըստ հինդուսական սովորական իրավունքի, իսկ մնացած բոլոր դեպքերում դատավճիռները կայացնում էին մուսուլման դատավորները՝ մուսուլմանական իրավունքի՝ Ղուրանից բխող շարիաթի սկզբունքների հիման վրա: Որոշ արտոնություններով էին օժտված նաև մուսուլման վաճառականները, որոնք, օրինակ, ներմուծվող ապրանքների համար վճարում էին երկու անգամ պակաս մաքսատուրք, քան հինդուս վաճառականները: Հինդուս գյուղացիների և հատկապես ստորին արհեստավորական կաստաներին պատկանողների որոշ մասը, աշխատելով ազատվել կաստայական սահմանափակումների կապանքներից, ընդունում էր նվաճողների տիրապետող մուսուլմանական կրոնը:

ՖԵՌԱԼԱԿԱՆ ՀՈՂԱՏԻՐՈՒԹՅԱՆ ՁԵՎԵՐԸ ԴԵԼԻԻ ՍՈՒԼԹԱՆՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Դելիի սովորանությունում նվաճված բոլոր հողերը դառնում էին մուսուլմանական ֆեոդալական պետության սեփականությունը: Պետական հողերի մեծ մասը գինվորական ծառայության դիմաց որպես ժամանակավոր հողատիրույթիքտա, սովորանը բաժանում էր միայն էթնիկական ծագումով թյուրքական, տաջիկական և աֆղանական մուսուլման զորավարներին: Սովորանի շնորհած յուրաքանչյուր ժամանակավոր ֆեոդալական տիրույթի՝ իքտայի մեծությունը և նրանից ստացված եկամուտը պետք է համապատասխաներ սովորանի կողմից տվյալ զորապետին շնորհած գինվորական աստիճանին: Ֆեոդալական ժամանակավոր

տիրույթ՝ իքտա ստացող յուրաքանչյուր մուսուլման զորավար կոչվում էր իքտադար և պարտավոր էր իր զինվորական աստիճանին համապատասխան վարձու բանակով կատարել մշտական զինվորական ծառայություն: Իքտայից ստացված եկամուտը պետք է ծախսվեր իքտադարի անձնական կարիքների բավարարման և նրա վարձու զորքի պահպանության համար: Խոշոր չափերի հասնող իքտաներից բացի՝ սովորաները շնորհում էին նաև զինվորական աստիճանին համապատասխան փոքր իքտաներ, որոնք ստացողները պարտավոր էին որպես սպառագեն հեծյալներ մասնակցել սովորանի մղած պատերազմներին: Զինվորական ծառայության դիմաց սովորանի շնորհած իքտան ժամանակավոր էր և ժառանգական բնույթ չէր կրում: Իքտայի մեծությունը և դրա գտնվելու աշխարհագրական վայրը կարող էր փոխվել ֆեռդալական աստիճանակարգով (հիերարխիա) սովորանի հայեցողությամբ զորավարի աստիճանը բարձրացնելու դեպքում: Պետական հողային ֆոնդից սովորանը հողային տիրույթներ էր նվիրում նաև մուսուլման հոգևորականությանը: Այդ հողատիրույթը կոչվում էր ինամ: Ինամ էին ստանում մուսուլման հոգևորականները, մուսուլման գիտնական աստվածաբանները, մուսուլմանական կրոնական միաբանությունների գլխավորները՝ շեյխները: Պետական հողային ֆոնդից սովորանը հողային տիրույթներ էր նվիրում նաև մզկիթներին, մուսուլմանական հոգևոր ուսումնական հաստատություններին՝ մեդրեսեներին և դրանց նման կրոնական հաստատություններին, որոնք կոչվում էին վակֆեր կամ վակուֆներ: Ինամները և վակուֆները կրում էին ժառանգական բնույթ, հարկման չէին ենթարկվում և ազատված էին զինվորական ծառայությունից: Մուսուլմանական ֆեռդալական Դելիի սովորանության հողային ֆոնդի փոքր մասը հանդիսանում էր սովորանի սեփականությունը և կոչվում էր հաս կամ հալիս: Հալիսներից ստացված հողային հարկը պատկանում էր սովորանական գանձարանին:

Գրավելով Հյուսիսային Հնդկաստանը և ոչնչացնելով հինդուստական իշխանապետությունները՝ մուսուլման նվաճողները հինդուս ֆեոդալ ազնվականներին դարձնում են վասալ հարկատուներ կամ իրենց նախկին տիրութեներից հողային հարկ գանձողներ՝ զամինդարներ, որոնք վերցնում էին հավաքված հողային հարկի մի մասը: Զամինդարությունները կրում էին ժառանգական բնույթ, սակայն պետությունը իրավասու էր վերցնել ցանկացած զամինդարական տիրույթ և հանձնել մեկ ուրիշի: Դելիի սովորականությունում գոյություն ունեին նաև մասնավոր սեփականատիրական հողեր, որոնք կոչվում էին մուլք, իսկ նրանց սեփականատերերը՝ մուլդարներ կամ մալիքներ, մելիքներ: Շարիաթի համաձայն՝ մուլդերը ենթակա էին հարկման՝ բերքի 1/10-րդի չափով: Դելիի սովորականությունում գոյություն ունեցող հողատիրության ձևերը գրեթե առանց փոփոխության պահպանվում են նաև հետագայում՝ մողոլական տիրապետության ժամանակաշրջանում, մինչև որ անգլիական գաղութարարները վերացնում են հողատիրության այդ ձևերը:

ОФСИАЛРУЧЧЫС ҚРЫЦЫЛЫРДЫКИ

- Алаев Л. Б., Южная Индия. Социально-экономическая история. XIV-XVIII вв.**, изд. «Наука», М., 1964.
- Алаев Л. Б., История Индии в средние века**, изд. «Наука», М., 1968.
- Алаев Л. Б., Сельская община в Северной Индии**, изд. «Наука», М., 1981.
- Антонова К. А., История Индии**, изд. «Мысль», М., 1979.
- Ашрафян К. З., Делийский султанат**, изд. Восточной литературы, М., 1960.
- Ашрафян К. З., Аграрный строй Северной Индии (XIII - середина XVIII в.)**, изд. «Наука», М., 1965.
- Ашрафян К. З., Феодализм в Индии: особенности и этапы развития**, изд. «Наука», М., 1977.
- Ашрафян К. З., Средневековый город Индии XIII - середина XVIII в.**, изд. «Наука», М., 1983.
- Ашрафян К. З., Дели: история и культура**, изд. «Наука», М., 1987.
- Всемирная история**, т. III, Соцэкиз, М., 1957.
- Падение рабовладельческого строя и возникновение феодальных отношений в Индии (IV-VI вв.), с. 58-64.
 - Феодальное государство Индии в VII-XII вв., с. 307-316.
 - Образование Делийского султаната, с. 553-564.
 - Народы Китая, Кореи, Японии и Индии в борьбе с монгольскими завоевателями. Восточная и Юго-Восточная Азия в XV в., ч. 5, Индия, с. 553-564.
- История дипломатии**, т. I, под ред. В. А. Зорина и др., Госполитиздат, М., 1959.
- Дипломатия Индии в средние века, с. 224-230.
- История Индии в средние века**, изд. «Наука», М., 1968.
- История стран зарубежного Востока в средние века**, изд. МГУ., М., 1957.
- Индия в ранее средневековье, с. 56-74.
 - Индия XII-XV вв., с. 192-207.
 - Индия под властью Великих Моголов, с. 303-330.
- Осипов А. М., Краткий очерк истории Индии до X века**, изд. МГУ., М., 1948.

Паникар К. М., *Очерк истории Индии*, ред. Антонова К.А. Пер. с англ.
Владимирского Л. А., Каменского Ю. В., Соцэкгиз, М., 1961.

Синха Н. К., Банерджи А. Ч., История Индии, пер. с англ. Степанова Л.
В., Ястребовой И. П., Княжинской Л. А., изд. Иностранный
литературы, М., 1954.

ԶԻՆԱՍՏԱՆԸ ՍՈՒՅ ԵՎ ՏԱՆ ԱՐՔԱՅԱՏՈՀՄԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆԵՐՈՒՄ

Մինչև 6-րդ դարի երկրորդ կեսը Զինաստանը քաղացած էր Հյուսիսային և Հարավային ինքնուրույն ֆեոդալական պետություններից, որոնց միջև եղած տնտեսական և քաղաքական տարբերությունները նշանակալիորեն վերացել էին՝ առաջացնելով մեկ միասնական, միավորված պետություն ստեղծելու անհրաժեշտությունը: Զինաստանի Հյուսիսիային՝ Զժոռու պետության (557-581 թթ.) գորավար Յան Յզյանը 581թ. բռնազավթում է գահը, այնուհետև՝ 589 թ. ոչնչացնում է Հարավային Զինաստանում իշխող Զէն արքայատիմը (557-589 թթ.) և 589 թ. միացնում երկրի հյուսիսային և հարավային մասերը՝ երկարատև քաղաքական մասնատվածությունից հետո Զինաստանը միավորելով մեկ միասնական պետության մեջ: 589 թ. Յան Յզյանը հոչակվում է միավորված չինական պետության կայսր (589-604 թթ.)՝ իհմք դնելով Սույ արքայատոհմի տիրապետությանը (581-618 թթ.): Զինաստանի քաղաքական միավորմանը և մեկ միասնական պետության ստեղծմանը մեծապես նպաստում է բուդդայական Եկեղեցին, որի դավանանքը պետական կրոն էր հոչակվել դեռևս 504 թ.:

Զինաստանի տարբեր թագավորությունների միավորումը մեկ միասնական կայսրության մեջ և ներքին երկպառակությունների դադարումը մեծապես նպաստում է Զինաստանի տնտեսական և մշակութային վերելքին:

Կայսր Յան Յզյանի և նրա հաջորդների ժամանակ ամրապնդվում է Զինաստանի կենտրոնական կառավարման համակարգը: Մայրաքաղաքը տեղափոխվում է Լոյան, որտեղ վերաբնակեցվում են 10 հազար ունկոր ընտանիքներ: 610 թ. ավարտվում է Դեղին ծովից դեպի Յանցզի և ապա՝ դեպի Հուանհե գետը տանող տնտեսական և ստրատեգիական կարևոր

նշանակություն ունեցող ավելի քան 1000 կմ երկարությամբ Մեծ կամ՝ Կայսերական ջրանցքի կառուցումը, որը միացնում է Երկրի հյուսիսային ու հարավային շրջանները։ Վերականգվում է մասնակիորեն ավերված Զինական Մեծ պարիսպը, շահագործվում են նոր ճանապարհներ։ Գյուղատնտեսության բնագավառում արտադրողական ուժերի կատարելագործման և ոռոգման համակարգի ընդլայնման հետևանքով կայսրության մշակովի հողերի ընդհանուր մակերեսը ավելանում է գրեթե երեք անգամ՝ կազմելով 336 մլն. հա հողատարածություն։ Ավելանում է գյուղատնտեսական տարբեր արտադրանքների ընդհանուր ծավալը, որի արդյունքում Սույ արքայատոհմի իշխանության վերջին շրջանում չինական կայսրության շտեմարաններում պահեստավորված էր 50-ից-60 տարվա ցորենի հսկայական պաշար։ Սերտանում են տնտեսական կապերը կայսրության տարբեր շրջանների միջև, ձևավորվում է միասնական ներքին շուկա։ Շրջանառության մեջ է դրվում նոր մետաղադրամ, սահմանվում են ծավալի և երկարության ստանդարտ չափեր, թույլատրվում է ազատորեն գրաղվել առևտրով ու արհեստներով, զարգանում է նավաշինությունը։ Նվաճողական արշավանքների արդյունքում ընդարձակվում են չինական կայսրության սահմանները։ Այդ առումով նաև աճում է կայսրության ընդհանուր բնակչության թվաքանակը։ Եթե ԶԷն արքայատոհմի վերջին տարիներին Զինաստանի բնակչությունը կազմում էր 30 մլն., ապա Սույ արքայատոհմի կառավարման 37 տարիների ընթացքում այն արդեն հասնում է 46 մլն.-ի։

611-618 թթ. Զինաստանում տեղի են ունենում գյուղացիական ապստամբություններ և ֆեոդալական խոռվություններ, գահակալական կոիվներ, որոնց արդյունքում իշխանությունը զավթում և մայրաքաղաք Չանանում (արդի Սիան) 618 թ. կայսր է հոչակվում Տայ Յուան նահանգի փոխարքա Լի Յուանը (618-626 թթ.)՝ Զինաստանում իիմք դնելով նոր՝ Տան արքայատոհմի իշխանությանը (618-907 թթ.):

628 թ. Զինաստանը վերջնականապես միավորվում է Տան արքայատոհմի իշխանության ներքո, միջոցառումներ են ձեռնարկվում կենտրոնական իշխանության ամրապնդման և երկրի տնտեսական վերականգման համար: Ամրապնդվում է հողի նկատմամբ ֆեռդալական պետության սեփականության իրավունքը, կարգավորվում է կայսերական իշխանության օգտին կատարվող հարկային քաղաքականությունը: Կատարելագործվում է պետական քննությունների համակարգը և հաղթողները ստանալով «գիտական» աստիճաններ, մտնում էին պետական ծառայության մեջ: Ամրապնդվում և կատարելագործվում են ռազմական կազմակերպությունները, առավել խոշոր ռազմական միավորումները կենտրոնացվում են մայրաքաղաքում և մայրաքաղաքային շրջաններում, մտցվում է պարտադիր գինվորական ծառայություն: 7-րդ դ. 50-ական թթ. ուժի մեջ է մտնում 500 հոդվածներից քաղկացած քրեական օրենսգիրքը:

Տան արքայատոհմի իշխանության ժամանակաշրջանում մեծ ուշադրություն էր դարձվում կայսրության բնակչության թվաքանակի մեծացմանը: Այդ նպատակով կատարվում էր հարևան երկրներից չինացիներին և այլ ժողովուրդներին Զինաստանում վերաբնակեցնելու քաղաքականություն: Օրինակ, 679 թ. Կորեայից Զինաստան են վերաբնակեցվում ավելի քան 38 հազար տնտեսություններ: Տեղական իշխանություններին հրահանգ էր տրված խրախուսել 20 տարեկան տղամարդկանց և 15 տարեկան կանանց ամուսնությունները: Յուրաքանչյուր վարչական շրջանում տնտեսությունների ավելացումը կամ նվազումը չափանիշ էր տեղի պաշտոնյաների աշխատանքը գնահատելու համար: Բնակչության թվաքանակի ավելացման տարբեր միջոցառումների հետևանքով եթե 740 թ. Զինաստանում հաշվվում էր 8.400 հազ. տնտեսություն՝ ավելի քան 48 մլն. բնակչությամբ, ապա 15 տարի անց՝ 755 թ., արդեն առկա էր մոտ 9 մլն. տնտեսություն՝ 53 մլն. բնակչությամբ:

Դեռևս Սույ արքայատոհմի տիրապետության ժամանակաշրջանում Զինաստանը պատերազմներ էր մղում Կենտրոնական Ասիայում 552 թ. առաջացած Թյուրքական խաքանաթի դեմ, որը նաև ներքին երկպառակությունների պատճառով 588 թ. բաժանվում է իրար թշնամի Արևելյան և Արևմտյան մասերից բաղկացած երկու պետությունների: Տան արքայատոհմի իշխանության ժամանակ նվաճված այդ երկու թյուրքական պետություններից Արևելյան խաքանաթը անկախանում է 7-րդ դարի երկրորդ կեսին, իսկ Արևմտյան խաքանաթը՝ 704 թ. : Հետագայում՝ 740 թ. Արևմտյան խաքանաթը, իսկ 745 թ. Արևելյան խաքանաթը ներքին երկպառակությունների և արտաքին հարվածների հետևանքով վերանում են պատմության ասպարեզից: Դեպի Արևմուտք ընդարձակվելու Տան արքայատոհմի ձեռնարկած ռազմական վերջին արշավանքները ավարտվում են անհաջողությամբ: Այսպես. Թալաս գետի ափին 751 թ. տեղի ունեցած ճակատամարտում չինացիները պարտություն են կրում արաբներից, որից հետո Միջին Ասիա ներթափանցելու չինացիների հետագա փորձերը դադարում են:

Տան կայսրությունը Արևելյան Ասիայի խոշորագույն քաղաքական և մշակութային տերություններից մեկն էր: Զինաստանի մայրաքաղաք Չանանում գործում էր ակադեմիա, որտեղ սովորում էին անգամ Կորեայից, Ճապոնիայից, Տիբեթից ժամանած ռազմանողները: Տան արքայատոհմի տիրապետության ժամանակաշրջանում դիվանագիտական դեսպանություններ են ժամանել հարևան երկրներից, 640 թ.¹ Բյուզանդական կայսրությունից, իսկ 713 թ. Արաբական խալիֆայությունից: Տան կայսրությունը աշխույժ ցամաքային և ծովային առևտրական հարաբերություններ ուներ Առաջավոր Արևելքի երկրների հետ: Մեկ միլիոն բնակչություն ունեցող մայրաքաղաք Չանանը ամբողջ Արևելյան, Հարավ-Արևելյան և Միջին Ասիայի խոշորագույն առևտրական կենտրոնն էր: Այդ առումով մեծանում է դեռևս մ.թ.ա.

2-րդ դ. Զանանից ավելի քան 7 հազ. կմ երկարությամբ դեպի Արևմուտք ձգվող Մետաքսի Մեծ ճանապարհի միջազգային նշանակությունը: Այդ խոշորագույն առևտրական քարավանային մայրուղուց բացի, Զինաստանից յոթ տարբեր ցամաքային առևտրական ճանապարհներ էին ուղղված դեպի արտաքին երկրներ, անգամ ծովային ուղիով կապվում արաբական աշխարհի և Պարսկաստանի հետ: Այդ առումով մեծ նշանակություն ուներ Հարավ-Զինական ծովի Գուանչոու նավահանգիստը, որտեղ արդեն 9-րդ դարի վերջերին առաջացել էր օտարերկրացիներից բաղկացած 100 հազարանոց համայնք: Անդրծովյան երկրների հետ Զինաստանի առևտրում հիմնական դերը պատկանում էր արաբներին ու պարսիկներին: Անդրծովյան երկրների հետ կատարվող այդ խոշոր ծովային առևտուրը կանոնավորելու համար չինական իշխանությունը Գուանչոու նավահանգստում 632 թ. հիմնում է առևտրի վերահսկչի պաշտոն, 714 թ.' մաքսատուն, իսկ 8-րդ դ. Երկրորդ տասնամյակում՝ Առևտրանավերի վարչություն: Արաբական առևտրականների հետ 626 թ. Զինաստան է ներթափանցում իսլամը, իսկ 634 թ.' քրիստոնեական դավանանքի նեստորական ուղղությունը:

ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՍՈՒՅ ԵՎ ՏԱՆ ԱՐՔԱՅԱՏՈՒՄԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՆԵՐՈՒՄ

Դեռևս 280 թ. կայսրի գերագույն իշխանության ներքո ամբողջ հողային ֆոնդը դարձել էր պետության ֆեոդալական սեփականությունը: Սույ և Տան արքայատոհմերի կառավարման ժամանակաշրջաններում, որոշակի փոփոխություններով, հիմնականում տիրապետում էին Հյուսիսային Վէյ (386-535 թթ.) արքայատոհմի կայսրի 485 թ. իրամանագրով օդինականացված ազրարային հարաբերությունները: Դրա համաձայն, համայնական

գյուղացին պետական հողային ֆոնդից ստանում էր տարբեր չափերի երեք տեսակի հողաբաժիններ: Այսպես. 21-ից մինչև 60 տարեկան համայնական գյուղացին պետական հողային ֆոնդից ստանում էր 100 մու հողաբաժին (1 մուն = 1/16 հա-ի), որից 80 մուն՝ որպես հացահատիկի վարելահող, իսկ 20 մուն՝ արդյունագործական նպատակների համար: Երրորդը 1 մու կազմող տնամերձ հողաբաժինն էր՝ տնատեղով և տնտեսական օժանդակ շինություններով: Մշակողի աշխատունակության կորստի կամ մահվան դեպքում 80 մու հերկովի վարելահողը վերադարձվում էր պետությանը, իսկ 20 մու արդյունագործական և 1 մու տնամերձ հողաբաժինը պետությանն էր վերադարձվում միայն ընտանիքը բոլոր աշխատունակ անդամներից զրկվելու դեպքում: Անժամկետ օգտագործման էին տրվում նաև գյուղացիների մշակած խամ ու խոպան հողամասերը:

80 մու կազմող վարելահողից գյուղացին պետք է պետությանը վճարեր հողի հարկ՝ հացահատիկից ստացված բերքի 2/5-րդ մասը, իսկ 20 մու արդյունագործական հողաբաժնից՝ արհեստագործական արտադրանքներ՝ գործվածքներ և հումք: Բացի երկու բնամթերային հարկերից, գյուղացին տարվա ընթացքում 20 օր պետության համար պետք է կատարեր պարտադիր անվճար աշխատանքային պարհակներ, ինչպես նաև որոշակի ժամկետով գտնվեր զինվորական ծառայության մեջ: Սակայն գյուղացիական տնտեսության ոչ բոլոր աշխատունակ տղամարդիկ էին հողաբաժիններ ստանում: Այսպես. մեկ տնտեսության մեջ չորս աշխատունակ տղամարդկանցից հողաբաժիններ էին ստանում և պարհակներ կատարում միայն երկուսը, իսկ երեքի դեպքում հողաբաժին էր ստանում և պարհակներ կատարում միայն մեկը: Ոչ մեծ հողաբաժիններ էին տրվում կանանց, դեռահասներին և մեծահասակներին: Պետական ստրուկները ստանում էին ամբողջական կամ կես հողաբաժին և վերածվում սովորական հարկատու գյուղացիների: Սակավաթիվ բնակչություն ունեցող

Վայրերում առևտրականներին ու արհեստավորներին պետական հողերից տրվում էին կիսով չափ հողաբաժիններ, իսկ տարբեր դավանանքների յուրաքանչյուր շարքային հոգևորական ստանում էր 20 մու հողաբաժին:

Տարերային աղետների հետևանքով բերքի 40%-ը վնասվելու դեպքում գյուղացիներն ազատվում էին հողի հարկից, բերքի 60%-ի կրճատման դեպքում՝ նաև արհեստագործական արտադրանքների հարկից, 70% կորստի դեպքում՝ բոլոր տեսակի հարկերից և աշխատանքային պարհակներից, իսկ անբերրիության տարիներին աշնանը վերադարձնելու պայմանով պետական պահուստներից չքավորներին տրվում էր սերմացու: Եթե հարկատու համայնական գյուղացին պետության համար կատարում էր սահմանված օրերից ավելի աշխատանքային պարհակներ, ապա նա ազատվում էր տնայնագործական արտադրանքների հարկից, իսկ 30-ից մինչև 50 օր աշխատանքային պարհակներ կատարելու դեպքում՝ նաև հացահատիկի հարկը վճարելու պարտավորությունից: Իրենց գյուղերում վերահաստատված գյուղացիները մեկ տարով ազատվում էին հարկային ու աշխատանքային, իսկ արտասահմանից հայրենիք վերադարձները 3-ից 5 տարով աշխատանքային պարհակներից: Սակավաթիվ բնակչությամբ գյուղերում հաստատված տարբեր ժողովուրդների ներկայացուցիչները տասը տարով ազատվում էին հարկային ու աշխատանքային պարհակներից:

Քաղաքացիական ծառայության պաշտոնյաները իրենց աստիճանակարգին ու զբաղեցրած պաշտոնին համապատասխան որպես վարձատրություն «Կերակրման համար» ստանում էին 100-ից մինչև 500 մու, իսկ զինվորականները՝ 80-ից մինչև 600 մու հողաբաժիններ: Քաղաքացիական ու ռազմական ծառայության դիմաց շնորհված հողաբաժինները մշակում էին պետական հարկատու, ինչպես նաև անձնապես կախյալ գյուղացիները, կիսաստրուկները և ստրուկները: «Կերակրման համար»

հողաբաժինները շնորհվում էին միայն ծառայության ժամանակաշրջանի համար և ազատված էին պետական հարկերից ու տուրքերից: Առանձնապես վաստակաշատ և հատուկ ծառայություններ մատուցած քաղաքացիական պաշտոնյաներին և զինվորականներին շնորհվում էին 300-ից մինչև 6 հազ. մու հողաբաժիններ: Քաղաքացիական պաշտոնյաները աստիճանակարգ և դրան համապատասխան «կերակրման համար» լրացուցիչ հողաբաժիններ էին ստանում երեք, իսկ զինվորականները՝ հինգ տարի ծառայելուց հետո:

Գոյություն ունեին նաև կայսրի կողմից ֆեռդալական բարձրագույն արիստոկրատիայի տիտղոսներին համապատասխան շնորհված հողաբաժիններ: Այսպես. կայսերական ընտանիքի անդամները, որոնք կրում էին վան՝ իշխան, տիտղոսը, ստանում էին մինչև 10 հազ. մու հողաբաժին: Ամենացածր տիտղոսավոր կոչումը կրող ժառանգական ավագանու ներկայացուցիչը ստանում էր 500 մու, իսկ արքունական աստիճանակարգի արիստոկրատիան՝ 500-ից մինչև 6 հազ. մու հողաբաժին: Ֆեռդալական արիստոկրատիային շնորհված հողաբաժիններիը կրում էին ժառանգական բնույթ: Ֆեռդալական արիստոկրատիան տիրում էր նաև մինչև 5 հազ. մու պետական հողաբաժինների և օգտվում էր բազմապիսի արտոնություններից:

Խոշորագույն ֆեռդալական տիրույթներ ունեին բուդդայական վանքերը: 6-րդ դ. սկզբին Հյուսիսային Չինաստանում 2 մլն. վանականներով 30 հազ. բուդդայական վանքերը արդեն տիրում էին խոշոր հողատարածությունների, որոնք 9-րդ դ. կեսերին հասնում էին ավելի քան 60 մլն. հեկտարի: Բուդդայական վանքապատկան հողատիրույթները կազմվում էին գյուղական համայնքներից խլած, ինչպես նաև՝ պետական ու կայսրի շնորհած հողաբաժիններից և ազատված էին պետության հանդեպ հարկային պարտավորություններից: Բուդդայական վանքապատկան հողատիրույթներին էին դասվում նաև տարբեր չարաշահումներից

Վիրկվելու նպատակով վանքերի հովանավորության ներքո անցած համայնական գյուղացիների հողերը: Բուդդայական վանքերին թույլատրված էր հարկեր գանձել բուդդայական կրոնը դավանող համայնական գյուղացիներից, բուդդայական վանականներին էր հանձնված գյուղական հասարակական շտեմարանների ղեկավարությունը: Որպես ստրուկներ բուդդայական վանքերին էին հանձնվում իշխանությունների կողմից մահապատժի դատապարտված հանցագործները: Բուդդայական եկեղեցու աջակցությունը ստանալու և իրենց արքայատոհմերի իշխանությունը ամրապնդելու նպատակով չինական կայսրերը տարբեր նվիրատվություններից բացի նաև ոսկի էին տրամադրում Բուդդայի ոսկե արձանները ձուլելու համար: Բուդդայական եկեղեցին առանձնապես հատուկ արտոնություններ է ստանում Չինաստանի պատմության մեջ միակ կայսրութիւն Ու Ցզէ-Շյանի (690-705 թթ.) կառավարման ժամանակ:

Պետական, ինչպես նաև կայսրի շնորհած տարբեր տեսակի հողաբաժիններից բացի, կային նաև հողի նկատմամբ մենաշնորհային սեփականատիրության իրավունք հաստատած առանձին ֆեոդալների խոշոր հողատիրույթներ՝ մշակվելով այդ հողատերերից ոչ մեծ հողամասեր ստացած և դրանց դիմաց ֆեոդալական պարհակներ կատարող անձնապես կախյալ տարբեր կարգերի գյուղացիների, նաև ստրուկների կողմից: Հետզիետե Չինաստանում տիրապետող է դառնում ֆեոդալական մասնավոր հողատիրությունը, որի հետևանքով արդեն 763 և 780 թթ. օրենքներով ֆեոդալները դառնում են իրենց հողատիրույթների լիիրավ սեփականատերերը, իսկ նախկին պետական համայնականները վերածվում են ֆեոդալներից անձնապես կախում ունեցող հողեր վարձակալած գյուղացիների:

ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ ՏԱՆ ԱՐՔԱՅԱՏՈՒՄԻ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ

Ինչպես նախկին արքայատոհմերի, այնպես էլ Տան արքայատոհմի տիրապետության ժամանակաշրջանում գերագույն իշխանության ներկայացուցիչը կայսրն էր, որն օժտված էր պետական կառավարման անսահմանափակ իրավունքներով։ Դարերից եկող ավանդույթի համաձայն, կայսրը համարվում էր «Երկնքի որդի»՝ հանդես գալով երկնային գերագույն ուժերի ներկայացուցիչ, նրանց կամքի արտահայտիչ ու իրականացնող։ Կայսրի գլխավորությամբ պետական կարևորագույն խնդիրները վճռվում էին արքայատոհմին պատկանող մեծատոհմիկ ազնվականներից բաղկացած Պետական խորհրդի կողմից։ Այնուամենայնիվ, պետական կարևորագույն խնդիրները ի վերջո փաստորեն վճռվում էին կայսրի մերձավոր երկու օգնականների կողմից։

Տան կայսրության կենտրոնական կառավարությունը բաղկացած էր երեք՝ վարչական, կայսերական հրովարտակների ու կառավարական հրամանագրերի պալատներից։ Առաջին՝ գլխավոր պալատի ենթակայության ներքո էին գտնվում գործադրի իշխանության մարմինները, իսկ երկրորդ ու երրորդ պալատները պատրաստում և հրապարակում էին կայսերական հրովարտակներն ու հրամանագրերը, կազմակերպում հանդիսավոր արարողություններ և կայսերական ընդունելություններ։ Առաջին պալատի ղեկավարը իր երկու՝ ավագ և կրտսեր օգնականներով միաժամանակ նաև կայսրության գլխավոր նախարարն էր։ Առաջին պալատի ենթակայության ներքո էին գտնվում ֆինանսական, ռազմական, արդարադատության, պաշտամունքների, հասարակական շինությունների և կադրային նշանակումների գերատեսչությունները։ Յուրաքանչյուր գերատեսչություն բաժանվում էր առանձին ստորաբաժանումների, բաժինների և այլն։

Այդ վեց գերատեսչություններից բացի, գոյություն ունեին ոստիկանական ծառայության, կայսրին ու արքունիքին սպասարկող, դեսպանություններ ընդունող, կայսերական դեսպանություններ առաջող, վասալական պետությունների գործերը ղեկավարող վարչություններ: Պետական կառավարման համակարգում առանձնահատուկ նշանակություն ուներ անմիջականորեն կայսրին ենթական տեսուչների պալատը: Տեսուչները պարտավոր էին հետևել պալատական կյանքի կարգ ու կանոնի պահպանմանը, վերահսկել տեղական ու նահանգային իշխանությունների գործունեությունը և ընդհանրապես կայսրությունում տիրող ներքաղաքական դրությանը՝ դրանց վերաբերյալ իրենց զեկույցները ուղղակիորեն ներկայացնելով կայսրին: Պետական ծառայության համակարգում պաշտոնյաներ պատրաստելու նպատակով կայսրության մայրաքաղաքում գործում էին վեց տեսակի ուսումնական հաստատություններ, որոնք ղեկավարվում էին բարձրագույն ուսումնական հաստատությունների գլխավոր վարչության կողմից: Այդ ուսումնական հաստատություններում ուսանում էին պաշտոնյաների երեխաները: Կայսերական ընտանիքի, տոհմային ավագանու և բարձրագույն պաշտոնյաների երեխաների համար մայրաքաղաքում գործում էին երկու ուսումնական հաստատություններ: Ուսումնական հաստատություններ կային նաև կայսրության մարզերում, շրջաններում և գավառներում: Ուսումնական հաստատություններում հիմնական ուշադրությունը նվիրվում էր քաղաքական կառավարման մեթոդների ուսումնասիրությանը, որոնց սկզբունքները արտացոլված էին կոնֆուցիականության կանոնական գրքերում և դրանց մեկնաբանություններում: Պետական պաշտոն զբաղեցնելու համար ուսումնական հաստատության յուրաքանչյուր շրջանավարտ պետք է հանձներ քննություն և ստանար «գիտական» աստիճան: Մարզերում, շրջաններում և գավառներում հաջողությամբ պետական

քննություններ հանձնած ուսումնական հաստատությունների շրջանավարտները ստանում էին «գիտական» ստորին և միջին աստիճաններ և դրանց համապատասխան պաշտոններ: Կարևորագույն պաշտոններ ստանձնելու համար բարձրագույն ազնվապատկանները պետք է «գիտական» բարձր աստիճաններ ստանային երեք տարին մեկ անգամ կայսրի նախագահությամբ պալատում անցկացվող պետական քննություններում: Այնուամենայնիվ, բարձրագույն պաշտոնատար ազնվականության որդիները երեք տարին մեկ անգամ, տարբեր հանդիսությունների և տոնակատարությունների առիթով, ինքնաբերաբար պաշտոններ էին ստանձնում կամ ծառայողական առաջընթաց էին ունենում առանց պետական քննություններ հանձնելու:

Տան արքայատոհմի ժամանակաշրջանում կայսրությունը բաղկացած էր տասը վարչական նահանգներից, որոնցից յուրաքանչյուրը բաժանվում էր մարզերի, շրջանների, գավառների, գավառակների և գյուղերի: Փոքրագույն վարչական միավորը բաղկացած էր գյուղական համայնքի յուրաքանչյուր հինգ հարևան բակերից: Յուրաքանչյուր հնգյակի ավագը պատասխանատվություն էր կրում բնակիչների հաշվառման, հողաբաժինների բաժանման ու անթերի մշակման, պետական հարկերի հավաքման, աշխատանքային ու զինվորական պարհակների, համապատ երաշխավորությունների, կրոնական արարողությունների ու պաշտամունքային ծիսակատարությունների անշեղ կատարման, պետականորեն սահմանված գյուղական կյանքի կարգ ու կանոնի պահպանման համար և այլն: Նույն պատասխանատվությունն էր կրում 100 բակերից բաղկացած գյուղական, իսկ 500 բակերից բաղկացած տնտեսությունների դեպքում՝ գավառակի ավագը: Որպես փոխհատուցում իրենց պարտականությունների կատարման, գյուղական ավագների ընտանիքների հարկատունների մի մասը ազատվում էր պետական հարկերից ու պարհակներից:

Բացի գյուղական համայնքներից, բոլոր վարչական շրջանների պաշտոնյաները և դրանց ղեկավարները նշանակվում և վերահսկողության էին ենթարկվում պետական իշխանության կենտրոնական մարմինների կողմից:

Յուրաքանչյուր երեք տարին լրանալուց հետո նահանգային պաշտոնյաները տեղափոխվում և ծառայողական նշանակումներ էին ստանում այլ շրջաններում: 991 թ. կենտրոնական կառավարությունը դատախազական հսկողություն է սահմանում տեղական կառավարման վարչական համակարգի վրա: Տեղական մարմինները գրկվում են քաղաքացիական կարևոր գործերի վերաբերյալ ինքնուրույն որոշումներ կայացնելու և պաշտոնյաներին ծառայությունից հեռացնելու իրավունքներից: Նվաճված երկրամասերում ռազմական նահանգապետերի գլխավորությամբ ստեղծվում են հատուկ ռազմական վարչություններ, որոնք լիովին անկախ էին քաղաքացիական իշխանություններից: Սակայն նվաճված երկրամասերի ժողովուրդները պահպանում էին իրենց ներքին կառավարման նախկին համակարգը:

Կայսրության բանակը բաղկացած էր տարբեր նշանակության ռազմական ստորաբաժանումներից, որոնք տեղաբաշխված էին մայրաքաղաքում, քաղաքամերձ շրջաններում, նահանգներում, սահմանային տարածքներում և նվաճված երկրներում: Կայսերական պալատի և մայրաքաղաքի պաշտպանությունը իրականացնում էին գվարդիական զորամասերը: 677 թվականից ձևավորվում են հատուկ սահմանապահ զորքեր, որոնց հրամանատարները՝ գեներալնահանգապետերը, օժտված էին ռազմական և քաղաքացիական իշխանության անսահմանափակ լիազորություններով: 742 թ. վերջնականորեն արդեն ձևավորված էին կայսրության տասը սահմանապահ շրջաններ: Կայսրության սահմանամերձ շրջաններում և նվաճված երկրներում 623 թվականից ստեղծվում են ռազմական բնակավայրեր, որոնցում գինվորները միաժամանակ գրաղվում էին նաև հողագործական

աշխատանքներով: Կայսրության սահմանների պաշտպանության նպատակով օգտագործվում էին նաև օտար քոչվորական ցեղերից պայմանագրային հիմունքներով հավաքագրված հեծելազորային վարձկան ջոկատները: 11-րդ դ. առաջին կեսին կայսրության բանակի ավելացած թվակազմը հասնում է մոտ 1 մլն. 250 հազարի, որի պահպանման համար ծախսվում էր ամբողջ պետական եկամուտների 5/6-րդ մասը:

Կառավարությունը մեծ ուշադրություն էր դարձնում կայսրության տարբեր մասերի ու երկրամասերի միջև կապեր հաստատելու, ճանապարհներ ու հաղորդակցության ուղիներ կառուցելու, փոստային ծառայությունը կազմակերպելու գործերին:

Սույ արքայատոհմի ժամանակաշրջանում ձևավորված և Տան արքայատոհմի կառավարման ընթացքում վերջնականորեն կազմավորված չինական կայսրության պետական կառավարման համակարգը մինչև 20-րդ դարի սկիզբը գրեթե առանց էական փոփոխությունների կիրառվում է նաև հետագա արքայատոհմերի ժամանակաշրջաններում:

ԶԻՆԱՏԱՆԸ ՍՈՒՆ ԱՐՔԱՅԱՏՈՀՄԻ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ **(960-1279 թթ.)**

ԶԻՆԱՏԱՆԻ ՆՎԱՃՈՒՄԸ ԶՃՈՒՐՉԵՆՆԵՐԻ ԵՎ ՄՈՆԴՈԼՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ

8-րդ դարի կեսերից Զինատանի ծայրամասային ռազմական նահանգապետերի հզորության աճի, ֆեոդալական տարբեր խմբավորումների միջև իշխանության համար մղվող պայքարի և գյուղացիական ապստամբությունների հետևանքով Տան արքայատոհմի իշխանությունը սկսում է թուլանալ: Արդյունքում 907 թ. Տան արքայատոհմի վեցին կայսրը գահընկեց է արվում և Զինատանը կրկին մասնատվում է ինքնուրույն պետությունների:

Հյուսիսային Զինաստանի Զժոռու պետության (951-960 թթ.) հզոր գորավար Զժառ Կուան-ինը 960 թ. փետրվարին հոչակվում է կայսր (960-976 թթ.)՝ Զինաստանում իիմնելով Հյուսիսային Սուն արքայատոհմը (960-1279 թթ.): Մինչև 980 թ. տեղի ունեցած պատերազմների արդյունքում մնացյալ չինական ինքնուրույն պետությունները միավորվում են, որի հետևանքով Սուն արքայատոհմն իր իշխանությունն է տարածում ամբողջ Զինաստանի վրա: Միավորված Զինաստանի մայրաքաղաքն է դառնում Կայֆինը (960-1127 թթ.): Սուն արքայատոհմի կայսրերը սահմանափակում են ռազմական նահանգապետերի և խոշոր ֆեոդալների իրավունքները՝ Զինաստանի վարչական շրջաններում նշանակելով քաղաքացիական պաշտոնյաների: Արդյունքում ուժեղանում է կայսրության կենտրոնացված ռազմական իշխանությունը և վարչական կառավարումը: Սակայն, Սուն արքայատոհմը նույնպես սկսում է ենթարկվել արտաքին հարձակումների: 1125 թ. Հյուսիսային Զինաստան են ներխուժում 1115 թ. Մանջուրիայում (արդի Զինաստանի հյուսիս-արևելյան) իրենց «Ցզին» («Ռուկե») անունով պետությունը հիմնած (1115-1234 թթ.) չժուրչժեններ կոչված ցեղերը, որոնք արդեն 1127 թ. գրավում են ամբողջ Հյուսիսային Զինաստանը: Սուն արքայատոհմի տիրապետության տակ է մնում Յանցզի գետից հարավ գտնվող չինական տարածքը, որտեղ 1127 թ. Հանչժոռու մայրաքաղաքով ստեղծվում է Հարավային Սուն կայսրությունը (1127-1279 թթ.): Կարճ ժամանակ անց՝ 1139 թ., Հարավային Սուն կայսրությունը վասալական կախվածության մեջ է ընկնում չժուրչժենների Ցզին պետությունից՝ պարտավորվելով վճարել ամենամյա հարկ:

Զերծ մնալով չժուրչժենների նվաճումից՝ Հարավային Սուն կայսրությունը ունենում է որոշակի տնտեսական վերելք, մասնավորապես արհեստագործական արտադրության և առևտության բնագավառներում: Զարգանում է նաև ծովային առևտություն: Զինաստանի հարավ-արևելյան՝ Տայվանի նեղուցում գտնվող

Յյուանչտու նավահանգիստը վերածվում է խոշոր առևտրական կենտրոնի:

Սուն կայսրության դարաշրջանը նշանավորված է նաև գիտատեխնիկական նվաճումներով: Հայտնաբերվում և ուսումնական նպատակներով օգտագործվում է վառողը, հրազենը, ծովագնացության կողմնացույցը, շարժական շրիֆտով գրատպությունը: 10-րդ դարում շրջանառության մեջ է դրվում թղթադրամը, որը նպաստում է առևտրի զարգացմանը, կատարելագործվում է նավաշինությունը:

13-րդ դարի սկզբին Զինաստանը նույնպես ենթարկվում է մոնղոլական կործանիչ արշավանքներին: 1127 թվականից չժուրչժենների տիրապետության տակ գտնվող ամբողջ Հյուսիսային Զինաստանը 1209-1234 թթ. ընթացքում նվաճվում է մոնղոլների կողմից: 1234 թ. մոնղոլները ներխուժում են նաև Հարավային Զինաստան և 1279 թ. պատմության ասպարեզից վերացնում Հարավային Սուն կայսրություն՝ Զինաստանում հաստատելով մոնղոլական Յուան արքայատոհմի տիրապետությունը (1279-1368 թթ.): Գրեթե 100 տարվա մոնղոլական տիրապետությունից հետո ապստամբած չինացիները ազատագրում են ամբողջ Զինաստանը: 1368 թ. հունվարին Զինաստանում իշխանության գլուխ է գալիս ապստամբության ղեկավարներից մեկը՝ ծագումով գյուղացի, նախկին բուդդայական վանական Զժոյ Յուան-Զժանը՝ Զինաստանում իիմնելով Մին արքայատոհմը (1368-1644 թթ.)՝ նոր էջ բացելով Զինաստանի պատմության մեջ:

ОФОРМЛЕНИЕ ГИЧИЛДЫРЫ

Воробьев М. В., Чжурчжени и государство Цзинь (X в. -1234 г.).

Исторический очерк, изд. «Наука», М., 1975.

Всемирная история, т. III, Соцэкиз, М., 1957.

- Развитие феодальных отношений в Китае (III-VIII вв.), с. 25-43.
- Китай в период развитого феодализма (VIII-XII вв.), с. 277-290.
- Образование монгольской державы и монгольские завоевания, с. 513-527.
- Народы Китая, Кореи, Японии и Индии в борьбе с монгольскими завоевателями. Восточная и Юго-Восточная Азия в XV в., с. 528-537.

История дипломатии, т. I, под ред. В. А. Зорина и др., Госполитиздат, М., 1959,

- Дипломатия в Китае в средние века, с. 217-224.

История стран зарубежного Востока в средние века, изд. МГУ, М., 1957.

- Создание всекитайского феодального государства, с. 27-39.
- Усиление экономического и политического могущества феодалов и крестьянская война в IX в. в Китае, с. 108-121.
- Аграрный строй, развитие городов и обострение классовых противоречий в Китае в X-XII вв., с. 122-138.
- Борьба китайского народа против монгольского ига и создание Минской империи, с. 154-161.
- Начало разложения феодальных отношений в Китае, с. 268-282.

История Китая с древнейших времен до наших дней, изд. «Наука», М., 1974.

Итс Р. Ф., Смолин Г. Я., Очерки истории Китая с древнейших времен до середины 17 в., Учпедгиз, Л., 1961.

Очерки истории Китая. С древности до «опиумных» войн, пер. с китайского, под ред. Шан ЮЭ, изд. Восточной литературы, М., 1959.

Очерки по новой истории Китая, пер. с китайского, изд. Иностранный литературы, М., 1956.

Свистунова Н. П., Аграрная политика минского правительства во второй половине XIV в., изд. «Наука», М., 1966.

Фань Вэнь-лань, Древняя история Китая. От первобытно-общинного строя до образования централизованного феодального государства, пер. с китайского, изд. Академии наук СССР, М., 1958.

Хрестоматия по истории Китая в средние века (XV-XVII вв.), изд. Московского ун-та, М., 1960.

ՎԱՂ ՖԵՌԴԱԼԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ ՃԱՊՈՆԻԱՅՈՒՄ

645 թ. «ՏԱՅԿԱՅԻ ՀԵՂԱՇՐՋՈՒՄԸ»: «ՏԱՅԿԱՅԻ» ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԸ

Խաղաղ օվկիանոսի արևմտյան մասում՝ 372 հազար քառ. կմ կազմող Կյուայու, Սիկոկու, Հոնսյու, Հոկայդո խոշոր, դրանց հարակից մանր կղզիների և Ռյուկյու արշիպելագի վրա է առաջացել ժամանակակից զարգացած տերություն ճապոնիան: Դեռևս մ.թ. 3-րդ դարի առաջին կեսին Կյուայու կղզու հյուսիսային և Հոնսյու կղզու հարավային մասում ձևավորվում է բավականին մեծ մի ցեղային միություն, որի հիման վրա էլ աստիճանաբար առաջանում է ճապոնական պետությունը: Ճապոնական պետության ձևավորումը կատարվում է տարբեր ցեղերի միջև գերիշխանության համար մղվող պայքարի ընթացքում: 3-րդ դարի վերջին-4-րդ դարի կեսին այդ ցեղերի միջև մղվող պայքարում Յամատո ցեղային միության գլխավորությամբ գերիշխանությունն անցնում է 29 ցեղային պետություններից բաղկացած կոնֆեդերացիային: Այդ 29 ցեղային պետությունների կոնֆեդերացիան գլխավորող Յամատո ցեղի անունից էլ ծագում է ճապոնիայի սկզբնական անուններից Յամատո անունը: Ճապոնիայի արդի «Նիհոն» կամ «Նիպպոն» անունը առաջացել է ավելի ուշ՝ 6-7-րդ դարերում և թարգմանաբար նշանակում է «Ծագող արևի երկիր»: Ճապոնիայի եվրոպական անվանումներն սկիզբ են առնում վենետիկցի ճանապարհորդ Մարկո Պոլոյից, որը Զինաստանում էր գտնվել 1275-1295 թթ.:

Յամատո ցեղային միության գերիշխանությամբ 4-րդ դարի կեսին միավորված 29 ցեղային միությունների հիմքի վրա աստիճանաբար ձևավորվում է ճապոնական պետությունը: Միավորված 29 ցեղային միությունների մեջ գերիշխանությունը թեև պատկանում էր Յամատո ցեղախմբին, և այդ պատճառով իշխալ ցեղախումբն ուներ քաղաքական մեծ կշիռ, այնուամենայնիվ,

իրական իշխանությունը պատկանում էր ցեղային առաջնորդներին և դրանց մեջ առաջին հերթին՝ Սոգա տոհմին, որը ձգտում էր իր վերահսկողության տակ պահել Յամատոյի թագավորին՝ իրեն վերապահելով «գլխավոր նախարարի», այսինքն՝ նրա վարչության ղեկավարի պաշտոնը: Յամատո ցեղի իշխանության թուլացման հետևանքով 536 թ. ղեկավարությունն անցնում է Սոգա տոհմին:

Դասակարգային հասարակության ծևավորման և դասակարգային պայքարի սրման պայմաններում առաջանում է իշխանության կենտրոնացման և ամրապնդման անհրաժեշտություն: Պաշտոնների նախկին ժառանգական կարգի փոխարեն 603թ. կիրառության մեջ է մտնում ծառայողական 12 արքունական աստիճանների ցուցակը: 604 թ. ընդունվում են վերին և ստորին խավերի նկատմամբ պետական քաղաքականության սկզբունքները որոշող 17 օրենքները:

Ֆեոդալական պետության իշխանության ամրապնդման կարևոր քաղաքական գործոններից մեկը 552 թվականից ճապոնիայում տարածվող բուդդայական դավանանքն էր: Արդեն 624 թ. ճապոնիայում իրենց վանականներով և միանձնուիիներով գործում էին 46 բուդդայական տաճարներ:

Ճապոնական ցեղերի միջև իշխանության համար մղված պայքարում իշխանությունից հեռացված Սումերագի թագավորական և Նակատոմի քրմական տոհմերը 645 թ. տապալում են Սոգա տոհմի իշխանությունը՝ ոչնչացնելով նրա անդամներին: 645 թ. հեղաշրջմամբ ավարտվում է մեկ դարից ավելի տևած Սոգա տոհմի իշխանությունը: Ճապոնիայի պատմության մեջ 645 թ. հեղաշրջումը հայտնի է «Տայկայի հեղաշրջում», բառացիորեն՝ «Մեծ փոփոխություն» անունով, որի հետևանքով Տեննո («Երկնքի որդի») տիտղոսով կայսր է դառնում Սումերագի տոհմի «թագավորական տան» ավագագույն ներկայացուցիչը՝ Կոտոկուն (645-654 թթ.): «Տայկայի հեղաշրջումը» ճապոնական տարբեր տոհմերի միջև իշխանության համար մղված պայքարի ավարտական փուլն էր:

645 թ. հեղաշրջումից հետո՝ Կոտոկու կայսրի իշխանության ժամանակ, Ճապոնիայում կատարվում են մի շարք բարեփոխումներ, որոնք պատմության մեջ են մտնում «Տայկայի»՝ «Մեծ փոփոխության» բարեփոխումներ անունով: «Տայկայի» բարեփոխումների հիմնական սկզբունքները որոշակիորեն բխում էին չինական ֆեոդալական պետության օրենսդրության դրույթներից: «Տայկայի» բարեփոխումները ճապոնիայում սկիզբ են դնում կենտրոնացված պետական կառավարման համակարգին: Պետական կառավարման բնագավառում կատարվում են վարչական բարեփոխումներ՝ ստեղծելով կենտրոնացված պետական ապարատ՝ բաղկացած կենտրոնական և տեղական կառավարման մարմիններից: Պետական կառավարման բարձրագույն իշխանությունը կայսեր գլխավորությամբ իրականացնում էր Գերագույն պետական խորհուրդը՝ գլխավորելով ութ տարբեր գերատեսչություններ, որոնք իրենց բաժիններով գրաղվում էին կայսերական արքունիքի, քաղաքացիական բնակչության, ռազմական և ռստիկանական գործերով: Այդ գերատեսչությունները նշանակում էին իրենց պաշտոնյաներին, վերահսկում տեղական իշխանությունների գործունեությունը: Երկիրը բաժանվում է կառավարության կողմից որոշակի ժամկետներով նշանակված նահանգապետերի և գավառապետերի կողմից կառավարվող վարչական շրջանների: 710 թ. ավարտվում է Հոնսյու կղզում Նարա քաղաքի կառուցումը, որը դառնում է Ճապոնիայի առաջին մայրաքաղաքը (710-784 թթ.): Նախկին տոհմային դրուժինաների փոխարեն՝ համընդհանուր պարտադիր գինվորական ծառայության հիմունքներով ստեղծվում է մշտական կենտրոնացված բանակ: Քաղաքական հարաբերություններ են սկսվում Չինաստանի հետ: 607 թ. Չինաստան է մեկնում ճապոնական առաջին դիվանագիտական պատվիրակությունը: Ուժեղանում է Չինաստանի քաղաքական, մշակութային, գաղափարախոսական ուսմունքների ազդեցությունը Ճապոնիայի

վրա: Չինացիներից են ճապոնացիներն ընդօրինակում հիերոգլիֆը, գրականությունը, արվեստի որոշ բնագավառներ, բժշկությունը: Չինաստանից է տարածվում բուդդայականությունը, որն այնուինու դառնում է պետական դավանանք: Աշխարհիկ կրթությունը ստեղծվում է չինական օրինակով, չինարեն լեզուն դառնում է պետական պաշտոնական լեզու և այլն:

ՏԱՅԿԱՅԻ» 646 թ. ԱԳՐԱՐԱՅԻՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԸ

«Տայկայի հեղաշրջման» արդյունքում 646 թ. կատարվում են նաև ագրարային բարեփոխումներ: Վերացվում են հողի նկատմամբ բոլոր տեսակի մասնավոր սեփականատիրական ձևերը, և երկրի ամբողջ հողային ֆոնդը դառնում է պետության բացարձակ սեփականությունը, որի ներկայացուցիչն ու ղեկավարը կայսրն էր: Բնակչության մեծամասնությունը կազմող գյուղացիությունը դառնում է պետական հողերի վարձակալ: Յուրաքանչյուր գյուղացիական ծուխ, ընտանիքի անդամների թվին համապատասխան, վեց տարեկանից սկսած՝ ժամանակավոր օգտագործման համար ստանում էր վարելահող, ընդ որում արական սեռի ներկայացուցչի հողաբաժնի չափը հասնում էր 0,24 հա, իսկ իգական սեռի ներկայացուցչը ստանում էր այդ տարածության 2/3-ը: Պարբերաբար, վեց տարին մեկ անգամ, ընտանիքի թվի համեմատ, տեղի էր ունենում հողի վերաբաժանում: Բացի վարելահողից՝ սեփականության իրավունքով գյուղացիական ընտանիքին էր ամրացվում այգին ու տնամերձը: Պաշտոնապես թույլատրվում էր օրինական գրանցմամբ ընդամենը մեկ տարի ժամկետով հող վարձակալել: Հետագայում՝ 743 թ. գյուղացիներին թույլատրվում է սեփականացնել իրենց յուրացրած անմշակ ու խոպան հողատարածքները: Շնչապատկան վարելահող ստացած գյուղացիները պետք է պետությանը վճարեին հացահատիկի հարկ

և տնայնագործական արտադրանքների հարկ՝ գործվածքներով ու զանազան իրերով: Այնուհետև գյուղացիները տարվա մեջ 100 և ավելի օր պարտավոր էին պետության և տեղական վարչական մարմինների համար կատարել նաև տարբեր տեսակի պարտադիր անվճար աշխատանքային պարհակներ: Ճապոնացի գյուղացիները ծնականորեն անձնապես ազատ էին, ունեին իրենց սեփական ունեցվածքը և արտադրության գործիքները, անկախ էին իրենց տնտեսական գործունեության մեջ: Սակայն նրանք փաստորեն ամրացված էին հողին և իրավունք չունեին հեռանալ գյուղից: Գյուղացու հեռանալը հողաբաժնից կամ դրանից հրաժարվելը պատժվում էր, քանի որ դա կարող էր նվազեցնել պետության և իշխող դասակարգի կողմից գյուղացիներից գանձվող հարկերն ու եկամուտները: Փաստորեն ճապոնիայում հաստատվում է գյուղացիության պետական ճորտացման համակարգը:

Գյուղական համայնքի բազմանդամ ընտանիքից կամ սակավանդամ մի քանի ընտանիքներից կազմվում էր մեկ տնտեսական ու հարկային միավոր՝ բակ: Յուրաքանչյուր բակի պաշտոնապես ճանաչված ավագը հսկում էր իր ենթակայության ներքո գտնվող տնտեսությունների հարկային պարտավորությունների, աշխատանքային պարհակների, նախնիների ավանդական պաշտամունքային արարողությունների ու ծեսերի, հանդիսությունների, կենցաղային սովորույթների անշեղ կատարմանը, տնօրինում ընտանեկան գույքը: Պետությունը ամեն կերպ ծգտում էր ամրապնդել նահապետական ավանդույթների ու սովորույթների վրա հիմնված ընտանիքը: «Տայկայի» բարեփոխումների արդյունքներն ամրագրող 701 թ. օրենսգրքի համապատասխան հոդվածները հարազատներին պարտավորեցնում էին խնամել իրենց ընտանիքների հիվանդներին, զառամյալներին, հաշմանդամներին, իսկ նրանց միայնակ լինելու դեպքում խնամատարության պարտականությունը հանձնարարվում էր համայնքին կամ տեղական իշխանություններին: Պետությունը

պարտավոր էր օգնություն ցույց տալ անբերրիության և տարերային աղետների հետևանքով տուժած գյուղական համայնքի ընտանիքներին: Օրենքը արգելում էր անզամ միայնակ մանկահասակ կամ այրի կնոջ մեկ միասնական միավոր կազմող տնտեսության բաժանումը: Այնուամենայնիվ, որպես բացառություն, գույքի մասնահանում էր կատարվում միայն ժառանգության բաժանման դեպքում և այն էլ եթե կասկած չէր հարուցում, որ առանձնացողը ի վիճակի է ընտանիքը գլխավորելու:

646 թ. ազրարային բարեփոխումների հետևանքով որոշ կարգերի համայնական կիսաստրուկներ իրավականորեն նույնպես դառնում են ճորտացված գյուղացիներ: Սակայն պահպանվում են պետական, ինչպես նաև տիրապետող դասակարգերի սեփականությունը հանդիսացող ստրուկների որոշ կատեգորիաներ: Բոլոր կատեգորիաների ստրուկները պետությունից ստանում էին տարբեր չափերի հողաբաժիններ: Պետությանը պատկանող յուրաքանչյուր ստրուկ ստանում էր ազատ համայնական գյուղացուն հատկացվող 0.24 հա հավասար հողաբաժին, իսկ ստրկատիրոջ ստրուկը ստանում էր այդ հողաբաժնի ընդամենը 1/3 մասը: Հողաբաժին ստացած բոլոր կարգերի ստրուկները ազատվում էին հարկային պարտավորություններից:

7-8-րդ դարերում ճապոնիայի վեց մլն. բնակչության 10-15%-ը կազմում էին ստրուկները, որոնց աշխատանքը պետությունը հիմնականում օգտագործում էր շինարարական աշխատանքներում: Ստրուկներն են կառուցել Նարա քաղաքը, 796 թ. ձուել ճապոնիայում իր մեծությամբ երկրորդը համարվող Բուդդայի 16 մ բարձրությամբ հսկա արձանը: Սակայն 8-րդ դարի վերջերից և 9-րդ դարի կեսերից ստրկությունը ճապոնիայում աստիճանաբար վերանում է: Այսպես. 830 թ. օրենքի համաձայն, հողօգտագործման իրավունքներով և պետական պարհակները կատարելու պարտավորություններով բոլոր կարգերի ստրուկները

հավասարեցվում են ազատ համայնական գյուղացիների կարգավիճակին:

646 թ. ագրարային բարեփոխման համաձայն՝ կառավարող դասակարգի ներկայացուցիչները իրենց ղեկավարած պաշտոնին կամ տիտղոսին համապատասխան՝ պետությունից ստանում էին հողաբաժիններ, որոնք շնորհվում էին պետական ծառայության դիմաց և ժառանգական բնույթ չելին կրում: Կային նաև հողաբաժիններ, որոնք իշխող դասակարգի ներկայացուցիչների առաջին երեք սերունդներին շնորհվում էին «պետության հանդեպ ունեցած ծառայությունների» համար: Սակայն պետության հանդեպ կատարած առանձնապես կարևոր և հատուկ ծառայությունների դիմաց կայսրը հողը շնորհում էր ընդմիշտ, որը դառնում էր տվյալ բարձրաստիճան պաշտոնյայի և նրա ժառանգների մասնավոր սեփականությունը: Պետական ծառայության դիմաց տրված նվազագույն հողաբաժինը 40 անգամ մեծ էր գյուղացու հողաբաժնից, իսկ շնորհված հողաբաժինները՝ 1250 անգամ: Ֆեոդալական դասակարգի հողերը ազատված էին հարկերից: Բացի վերոհիշյալ հողաբաժիններից՝ ֆեոդալական դասակարգի համար գոյություն ունեին նաև այսպես կոչված «կերակրման շնորհներ», երբ ֆեոդալական դասակարգի ներկայացուցիչներին տրվում էր նաև իրենց կցված գյուղական ծխերի եկամուտների մեծ մասը: Օրինակ, ֆեոդալներին կցված գյուղացիական ծխերի թիվը կարող էր հասնել 100-3000-ի: Կայսերական տունը օգտվում էր ոչ միայն իր կալվածքների, այլև ամբողջ երկրում հողաբաժիններ ունեցող գյուղական ծխերի եկամուտներից: Այդ եկամուտների մի մասը, ըստ ծառայողական կարգերի և տիտղոսների, որպես ոռնիկ՝ արքունիքը բաժանում էր տիրապետող դասակարգի ներկայացուցիչներին, ինչպես նաև 645 թ. հեղաշրջման մասնակիցներին: Այդպիսով, ճապոնական ֆեոդալական ազնվականության տարբեր դասերի ներկայացուցիչները պետության կողմից ստանում էին ոչ միայն արտոնյալ

հողաբաժիններ և «կերակրման համար» հողեր, այլև կայսերական արքունիքից կանոնավոր ռոճիկ, որը հիմնականում տրվում էր բնամթերքով, մետաքսե գործվածքներով, բամբակով, գյուղատնտեսական գործիքներով և այլն: Այդ ֆեռալական տիրույթները, որոնք «Տայկայի հեղաշրջման» հետևանքով առաջանում են 7-րդ դարի կեսին, արդեն 11-րդ դարում սկսում են ազատվել հողի նկատմամբ պետական սեփականության իրավունքից և տիրապետող է դառնում մասնավոր սեփականատիրական հողատիրությունը, իսկ ֆեռալներն իրենց տիրույթներում օժտվում են վարչական և դատական լիազորություններով:

ОФСИАЛІРДА АУЦЫЛЫМАЗЫ

Воробьев М. В., Япония в III-VII вв., изд. «Наука», М., 1980.

**Воробьев М. В., Японский кодекс «Тайхо Еро ре» (VIII в.) и право
раннего средневековья**, изд. «Наука», М., 1990.

Всемирная история, т. III, Соцэкгиз, М., 1957.

- Возникновение и развитие феодализма в Японии (III-VIII вв.), с. 52-57.
- Развитие феодализма в Японии (VIII-XII вв.), с. 302-306.
- Народы Китая, Кореи, Японии и Индии в борьбе с монгольскими завоевателями. Восточная и Юго-Восточная Азия в XV в., ч. 3, с. 541-549.

Гальперин А. Л., Очерки социально-политической истории Японии в период позднего феодализма, изд. Восточной литературы, М., 1963.

Искендеров А. А., Феодальный город Японии XVI столетия, изд. Восточной литературы, М., 1961.

История стран зарубежного Востока в средние века, изд. МГУ, М., 1957.

- Зарождение и развитие феодальных отношений в Японии, с. 47-55.
- Япония в период развитых феодальных отношений (X-XV вв.), с. 176-191.
- Япония в позднее средневековье, с. 283-294.

Жуков Е., История Японии. Краткий очерк, Соцэкгиз, М., 1939.

Хани Горо, История японского народа, пер. с японского, изд. Восточной литературы, М., 1957.

Эйдус Х. Т., Очерки новой и новейшей истории Японии, Госполитиздат, М., 1955.

Эйдус Х. Т., История Японии с древнейших времен до наших дней. Краткий очерк, изд. «Наука», М., 1968.

**ՀԵՂԱՍՏԱՆԻ, ԶԻՆԱՍՏԱՆԻ
ԵՎ
ՃԱՊՈՆԻԱՅԻ
ՆՈՐ ԺԱՄԱՆԱԿՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ**

ՀՆԴԿԱՍՏԱՆԸ ՄԵԾ ՄՈՂՈԼՆԵՐԻ ԿԱՅՍՐՈՒԹՅԱՆ
ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ
(1526-1858 թթ.)

ՄԵԾ ՄՈՂՈԼՆԵՐԻ ԿԱՅՍՐՈՒԹՅԱՆ ՍՏԵՂՇՈՒՄԸ ԵՎ
ՀՉՈՐԱՑՈՒՄԸ: ԴԱՎԱՆԱՆՔԸ:
ԿԱՍՏԱՅԱԿԱՆ ԿԱՐԳԸ

15-րդ դարի վերջին և 16-րդ դարի սկզբին Հնդկական թերակղզում առաջացել էին բազմաթիվ ինքնուրույն ֆեոդալական պետություններ և իշխանապետություններ: Հնդկական ֆեոդալական պետությունների և իշխանապետությունների կողքին Միջին Ասիայից, Իրանից և Աֆղանստանից հարծակված մուսուլման նվաճողները Հյուսիսային Հնդկաստանում ստեղծել էին մի շարք իշխանապետություններ, որոնցից ամենաուժեղը 1206 թ. առաջացած Դելիի ֆեոդալական միապետությունն էր (1206-1526 թթ.): Միջինասիական թյուրքական Հիլջի ցեղին պատկանող Ալա ադ-Դին սուլթանի գահակալության օրոք (1296-1316 թթ.) գրեթե ամբողջ Հնդկական թերակղզին միավորվում է մեկ միասնական մուսուլմանական տերության մեջ: Սակայն 14-րդ դարի վերջին՝ 1398-1399 թթ., Դելիի սուլթանությանը միջինասիական էմիրության տիրակալ Լենկթեմուրի կատարած խորտակիչ արշավանքի և այնուհետև դրան հաջորդած ֆեոդալական երկպառակչական պատերազմների հետևանքով այդ հսկայածավալ մուսուլմանական տերությունը քայլայվելով՝ մասնատվում է առանձին ինքնուրույն ֆեոդալական իշխանապետությունների: Կրճատված ու փոքրացած Դելիի սուլթանության սահմանները Հյուսիսային Հնդկաստանում պարփակվում են Գանգես գետի և նրա վտակ Զամնայի՝ պատմական Դոարի միջև գտնվող տարածքով, Դելիի շրջանով և Փենջաբով: Հնդկական թերակղզու քաղաքական

մասնատվածությունը, մուսուլմանական ու հնդկական իշխանապետությունների միջև մղված պատերազմները մեծապես դժվարացնում էին օտար նվաճողների արշավանքները կասեցնելու և հնդկական իշխանապետությունների անկախությունը պահպանելու պայքարը:

16-րդ դարի առաջին քառորդում իրական նոր վտանգ է ստեղծվում Հնդկական թերակղզում օտարերկրյա տիրապետության հաստատման համար: Ֆերգանայի ֆեռդալական իշխանապետության նախկին տիրակալ Բաբուրը, որը գահազրկվել էր քոչվոր ուզբեկների կողմից Միջին Ասիան նվաճելու հետևանքով, հարկադրաբար հեռացել էր Աֆղանստան՝ 1504 թ. Քաբուլ քաղաքը դարձնելով իր նստավայրը:

Բաբուր Զահիր աղ-Դին Մուհամմադը (1483-1530 թթ.) մայրական գծով սերում էր մոնղոլ Չինգիզ խանից, իսկ հայրական գծով՝ մոնղոլական թյուրքացված Բառլաս ցեղին պատկանող Լենկթեմուրից: Լինելով այդ երկու հզրո և անպարտելի մոնղոլ տիրակալների իրավահաջորդ ժառանգորդներից մեկը՝ Բաբուրը հանդես է գալիս 1398-1399 թթ. Լենկթեմուրի նվաճած Հյուսիսային Հնդկաստանի Դելիի սուլթանությունում իր տիրապետությունը հաստատելու նախաձեռնությամբ: Այդ քաղաքական նպատակը դիվանագիտական ճանապարհով իրականացնելու համար Բաբուրը Դելիի սուլթանությունում 1451 թվականից իշխող աֆղանական արքայատոհմի տիրակալ Իբրահիմ Լոդիին (1517-1526 թթ.) «հանուն խաղաղության պահպանման» պահանջում է վերադարձնել վաղուց ի վեր Լենկթեմուրի արքայատոհմին պատկանող հողերը: Ստանալով մերժում՝ իրանոթներով զինված 12 հազարանոց ընտիր բանակով 1525 թ. վերջին Բաբուրն անցնում է հնդոս գետը Փենջարի Աստոկ վայրի մոտ և ներխուժում Հյուսիսային Հնդկաստան: Օգտագործելով Հնդկաստանի ռազմական թուլությունը և ֆեռդալական երկպառակությունները՝ Դելիից հյուսիս գտնվող Պանիպատի դաշտում 1526 թ. ապրիլի 21-ին տեղի ունեցած

ճակատամարտում Բաբուրը ջախջախում է Դելիի սովթանության զորքերին, գրավում Դելին, այնուհետև Հյուսիսային Հնդկաստանը և իրեն հռչակում կայսր՝ Դելին դարձնելով իր կայսրության մայրաքաղաքը: Այդպիսով, 1526 թ. Հյուսիսային Հնդկաստանում հաստատվում է նոր՝ Զինգիզ խանի և Լենկթեմուրի շառավիղներից Բաբուրի հիմնած մոնղոլական մուսուլմանական արքայատոհմի տիրապետությունը: Պարսիկների կողմից մոնղոլներին «մողոլ» կոչած ցեղանունով էլ Հյուսիսային Հնդկաստանում Բաբուրի հիմնած արքայատոհմը եվրոպացիները Զինգիզ խանի և Լենկթեմուրի պատվին անվանել են Մեծ Մողոլների արքայատոհմ:

Բաբուրը Հյուսիսային Հնդկաստանում իշխում է ընդամենը իինգ տարի և մահանում 1530 թ.: Բաբուրն իր ժամանակաշրջանի ամենահզոր մուսուլման տիրակալներից էր և տաղանդավոր զորավար: Իր անվեհերության հետևանքով ժամանակակիցների կողմից ստացել էր «Բաբուր»՝ «Առյուծ» մականունը: Նա զարգացած, նրբանկատ, արվեստները հասկացող ու գնահատող տիրակալ էր: Նա պարզ, մատչելի լեզվով գրել է իր կենսագրությունը՝ «Բաբուր նամեն», որը հետաքրքրական պատմական աղբյուր է այդ ժամանակաշրջանի իրադարձություններն ուսումնասիրելու համար: «Բաբուր նամեից» բացի՝ գրել է նաև քնարական բանաստեղծություններ:

Զալալ աղ-Դին Մուհամմադի՝ «Աքքար» (մեծ) մականունով հայտնի միապետի (1556-1605 թթ.) գահակալության առաջին տարում՝ 1556 թ. նոյեմբերի 5-ին, Պանիպատում կրկին հաղթական ճակատամարտ է մղվում հնդկական իշխանների դեմ: Այդ ճակատամարտից հետո Մեծ Մողոլների արքայատոհմը ամրապնդում է իր տիրապետությունը ամբողջ Հյուսիսային և Կենտրոնական Հնդկաստանում, ինչպես նաև Աֆղանստանում:

Հաջորդ մողոլական վերջին իրական տիրակալը Մուհամմադ Մուխի աղ-Դին Ալումգիր I-ն էր (1658-1707 թթ.), որը պատմության մեջ է մտել «Առլանգզեբ» («Թագի գեղեցկություն») մականունով:

Նրա իշխանության ժամանակ՝ 17-րդ դարի երկրորդ կեսին, նվաճվում են Հնդկաստանի ԳողաՎարի գետից հարավ գտնվող ինքնուրույն հնդկական իշխանապետությունները, որոնցից էին Ահմադնագարը, Բիջաբուրը, Գոլկոնդան: Միայն թերակղզու ծայր հարավում մի շարք հնդկական փոքր իշխանապետություններ են պահպանում իրենց անկախությունը:

Առաջանձերը սիրում էր փառահեղությունը, պերճանքը, իր պալատն էր հրավիրում գիտնականների, հովանավորում արվեստները, հիմնում դպրոցներ, գրադարաններ:

Առաջանձերի մահից հետո Մեծ Մողոլների կայսրությունը սկսվում է քայքայվել, թեև ձևականորեն Մեծ Մողոլները մինչև 1858 թ. համարվում էին Հնդկաստանի կայսրեր, մինչև որ 1858 թ. անգլիական գաղութային իշխանությունները ֆիզիկապես ոչնչացնում են Մեծ Մողոլների արքայատոհմը:

Արաբական և հետագա մուսուլման նվաճողները Հնդկաստան են բերել իսլամը, որը մեծ տարածում էր գտել Հնդկաստանի հյուսիս-արևմուտքում և Արևելյան Բենգալիայում: Իսլամը Մեծ Մողոլների պետական դավանանքն էր: Իսլամ էր դավանում տիրապետող ֆեոդալական ավագանու մեծ մասը, իսկ Հնդկաստանի բնակչության ավելի քան 2/3-ը դավանում էր հինդուիզմը: Մողոլական տիրակալների վերաբերմունքը հինդուիզմի նկատմամբ տարբեր էր: Օրինակ՝ Մողոլական մուսուլմանական կայսրությունը մեկ միասնական, համախմբված պետության մեջ միավորվելու քաղաքական նպատակներով Աքբարը հանդուրժողական վերաբերմունք էր ցուցաբերում հինդուաների և հինդուիզմի նկատմամբ: Անձամբ ինքը՝ Մողոլական տերության մուսուլման կայսրը, ամուսնանում է իսլամական դավանանքին չպատկանող ռաջպուտ իշխանուհու հետ՝ այդպիսով ազգակցական ամուր դաշինք ստեղծելով Հյուսիսային Հնդկաստանում առավել ուժեղ քաղաքական կազմակերպություն ունեցող ռաջպուտական իշխանապետության հետ:

Աքբարը բարենպաստ պայմաններ էր ստեղծում հինդուսական սովորույթների և ավանդույթների կատարման համար՝ թույլատրելով հենց արքունիքում անցկացնել հինդուսական ազգային ու կրոնական տոնախմբություններ, արարողություններ ու ծիսակատարություններ, նաև անձամբ ընդօրինակելով հինդուսների ազգային ու կրոնական ավանդույթներն ու բարքերը: Աքբարի ժամանակ խրախուսվում էր հինդուիզմի ուսումնասիրությունը, թույլատրվում էր կառուցել հինդուսական տաճարներ, անցկացնել հինդուսական կրոնական տոններ, արարողությունների սրահում կազմակերպված կրոնադավանաբանական բանավեճերին թույլատրում էին մասնակցել նաև այլ կրոնների ներկայացուցիչներին, նույնիսկ Եվրոպացի ճիզվիտներին:

Հինդուսական ավագանուն իր կողմը գրավելու և նրան իր դաշնակիցը դարձնելու նպատակով Աքբարը նրա ներկայացուցիչներին շնորհում էր պետական ու ռազմական բարձր պաշտոններ՝ այդպիսով թուլացնելով մուսուլմանական տիրապետության օտարերկրյա ու նվաճողական բնույթը: Աքբարը կատարում է մինչ այդ աննախադեպ համարձակ քայլ՝ վերացնելով ոչ միայն ուստագնացության համար հինդուսներից գանձվող հարկը, այլև չեղյալ հայտարարելով Ղուրանով սահմանված ոչ մուսուլման տղամարդկանց վճարած պարտադիր գլխահարկը (ջիզյե), թեև այդ երկու հարկերը տարեկան տասնյակ միլիոնների հասնող ռուփիի հասույթ էին տալիս պետական գանձարանին:

Հինդուսների հանդեպ դրսևորած իր կրոնական հանդուրժողական քաղաքականությունը արդարացնելու, ինչպես նաև խալիֆների պահանջախնդրություններից խուսափելու նպատակով Աքբարը հրապարակում է անսխալականության մասին հրամանագիր՝ այդպիսով իրեն լիովին անկախ հայտարարելով Ղուրանի ուղղակառ դոգմաներին հետևելու պարտականությունից:

Իր հաջորդ գահակալներին ավանդած պատգամներում նա պատվիրում էր պահպանել միավորված պետությունը, հանդուրժողական և հաշտվողական վերաբերմունք ցուցաբերել կայսրության մեծամասնությունը կազմող հինդուսների ազգային ու կրոնական սովորույթների ու ավանդույթների նկատմամբ:

Հինդուիզմի նկատմամբ Աքբարի ցուցաբերած հանդուրժողականությունը անխուսափելիորեն առաջացնում էր ուղղահավատ մոլեռանդ մուսուլմանների աննկարագրելի դժգոհությունը և ատելությունը: Սակայն, անկախ իր անձնական համոզմունքներից, մինչև իր կյանքի վերջը Աքբարը հավատարիմ է մնում իսլամի դոգմաներին:

Ի տարբերություն հինդուսների և հինդուիզմի նկատմամբ Աքբարի վարած հանդուրժողական քաղաքականության՝ Առլանգգերը հինդուիզմի մոլի թշնամին էր և ցանկանում էր Մողոլական կայսրությունը վերածել սունիհական ուղղության ուղղափառ իսլամական տերության: Իր գահակալման առաջին իսկ շրջանում Առլանգգերը հրապարակում է հրամանագիր, որի համաձայն Մողոլական կայսրության հասարակության կյանքը պետք է կազմակերպվեր իսլամի սուրբ գրքի՝ Ղուրանի սահմանած սկզբունքների և կարգադրությունների համապատասխան: Այդ հրամանագիրը իրականացնելու նպատակով նա նշանակում է կրոնական բարձրագույն պաշտոնյա՝ մուհթասիր՝ մուսուլմանական բարքերի պահապան, որի պարտականությունն էր հետևել Ղուրանի կարգադրությունների ու սկզբունքների խստագույն կատարմանը: Այդպիսով, իր գահակալման սկզբին Առլանգգերը հանդես է գալիս Մողոլական կայսրությունը Ղուրանի օրենքներով կառավարելու խստագույն քաղաքականությամբ: «Իսլամը տարածելու և անհավատներին վերջ տալու համար» Առլանգգերը վերականգնում է հինդուսներից գանձվող գլխահարկը, հաստատում նոր հարկեր, այդ թվում նաև միայն հինդու առևտրականների վրա մաքսատուրքեր: Կայսրության բոլոր նահանգապետերին ուղղած

հրահանգում Առլանգզեթը կարգադրում է «անհավատների» բոլոր դպրոցները, տաճարները կործանելու և նորերի կառուցումը արգելելու մասին: Արգելվում են արքունական արարողությունների ժամանակ կատարվող հինդուսական ծիսակատարությունները, ինչպես նաև երաժշտությունը: Բացի ռաջպուտներից՝ հինդուսներին արգելվում էր զենք կրել, ծածկույթավոր պատգարակներով տեղափոխվել, փղերով և ազնվացեղ ձիերով երթելեկել: Հինդուիզմի հանդեպ Առլանգզեթի դրսնորած անհանդուժողական վերաբերմունքը և մոլեռանդորեն իսլամական դավանանքը տարածելու քաղաքականական որոշակիորեն նպաստում էր Մեծ Մողոլների հսկայածավալ մուսուլմանական կայսրության քայլայմանը:

Կաստայական առաջին բաժանումներն առաջացել էին դեռևս Հին Հնդկաստանում: Հետագայում կաստաները դառնում են հնդկական ֆեոդալական հասարակության հիերարխիկ՝ «աստիճանական» կառուցվածքի հիմքը: Բարձրագույն կաստաների մեջ էին բրահմաները՝ զինվորները: Նրանցից ներքև գտնվում էին առևտրական, հողագործական և արհեստագործական կաստաները: Կաստայի ամենացածր աստիճանին էին գտնվում արհամարհիվածները: Կաստաները իրենց հերթին բաժանվում էին ենթակաստաների: Յուրաքանչյուր կաստայի վարքագիծ կանոնակարգված էր: Արգելվում էին հարաբերությունները կաստաների միջև, իսկ կանոնակարգը խախտելու դեպքում կաստայի անդամը համարվում էր օրենքից դուրս: 1950 թ. ընդունված Հնդկաստանի հանրապետության սահմանադրությամբ բոլոր կաստաները օրենքի առաջ հոչակվել են հավասար: Սահմանադրությունն արգելում է կրոնական, ռասայական և կաստայական խորականությունները: Սահմանադրությամբ վերացված է արհամարհիվածների կաստան:

ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Մողոլական կայսրությունը կենտրոնացված, արևելյան տիպի ֆեոդալական բացարձակ միապետություն էր: Մողոլական տերության ղեկավարը՝ կայսրը (փառիշահը), պետության քաղաքական գլուխն էր և, որպես արևելյան միապետ, նա էր իրականացնում բարձրագույն վարչական, ռազմական և դատական իշխանությունը: Պետության կառավարման գործում Մեծ Մողոլի օգնականն ու խորհրդականն էր կայսրության վեզիրը, որը, սակայն, օժտված չէր իրական իշխանության լիազորություններով: Բացի վեզիրից՝ կենտրոնական կառավարման համակարգում մեծ դեր ունեին կայսեր անձնական քարտուղարը և կայսեր գրավոր հրամաններն ու կարգադրությունները խմբագրող և վերջնական տեսքով նրա հաստատմանը ներկայացնող պաշտոնյան:

Մեծ Մողոլ Աքբարի ժամանակ հաստատված էր պետության կառավարման հետևյալ աշխատակարգը: Այսպես. շաբաթվա յուրաքանչյուր օրվա ընթացքում Աքբարը կազմակերպում էր երեք ընդունելություն: Առաջինը ընդհանուր արքունական ընդունելությունն էր, երկրորդը վերաբերում էր պետական ընթացիկ գործերի քննարկմանը, իսկ երրորդը՝ կրոնական և պետական քաղաքականությանը վերաբերող խնդիրներին: Մեկ օր տրամադրվում էր դատական խնդիրների հետաքննությանը:

Մեծ Մողոլին էին ներկայացվում բոլոր կարևորագույն գործերը, որոնք վերաբերում էին բարձրագույն ռազմական և քաղաքացիական նշանակումներին, պետական եկամուտներին և այլ բազմաթիվ կարևորագույն խնդիրների: Պետության կառավարման հաստատված այդ աշխատակարգը պահպանվում էր նաև պատերազմների և կայսեր կողմից անձամբ արշավանքները ղեկավարելու ժամանակ:

Աքբարի ժամանակ գոյություն ունեին կայսրության կառավարման չորս հիմնական գերատեսչություններ, որոնք

տնօրինում էին ֆինանսական, ռազմական, արհեստանոցների ու արհեստների, պաշտամունքային ու դատական բնագավառները: Այդ գերատեսչությունները գտնվում էին հատուկ պաշտոնյաների, ինչպես նաև կայսրի խստագույն վերահսկողության ներքո:

Կառավարման կենտրոնական ապարատի տարբեր գերատեսչությունները գլխավորող բարձրաստիճան բոլոր պաշտոնյաները գործնականում սույն իրականացնում էին կայսեր կամ վեզիրի իրամաններն ու կարգադրությունները:

Աքբարի ժամանակ Մողոլական կայսրությունը քաղկացած էր 15 նահանգներից՝ սուբաներից: Առլանգգերի նվաճողական քաղաքականության և կայսրության սահմանների ընդարձակման հետևանքով նահանգների թիվն ավելանում է՝ հասնելով 21-ի: Նահանգների կառավարումը կայսրության կենտրոնական կառավարման համակարգի՝ չորս հիմնական գերատեսչությունների տեղայնացված ընդօրինակությունն էր: Նահանգում գործադիր իշխանության չորս գերատեսչությունների ղեկավարը նահանգապետն էր՝ սուբադարը, որը պաշտոնապես կոչվում էր նազիմ: Սուբադարները նշանակվում էին կայսեր կողմից՝ մուսուլման ավագանու ներկայացուցիչներից և իշխող արքայատոհմի անդամներից: Սուբադարները հենվում էին իրենց սեփական բանակի վրա և օժտված էին իշխանության լայն լիազորություններով:

Խոշոր քաղաքները կառավարում էին նշանակովի քաղաքապետները, որոնք հետևում էին նաև կարգ ու կանոնի և օրինականության պահպանմանը:

Կենտրոնական կառավարությունը նահանգային կառավարման համակարգի վրա իր վերահսկողությունն էր իրականացնում՝ իշխանությունը մի շարք պաշտոնյաների միջև բաժանելով, սուբադարների կառավարման ժամկետը կրճատելով կամ պաշտոնատար անձանց հաճախակի տեղափոխություններ կատարելով:

Կենտրոնական կառավարությունը իրազեկիչների միջոցով բացահայտ կամ գաղտնի տեղեկություններ էր ստանում նահանգներում տիրող իրավիճակների, սուբադարների և այլ բարձրաստիճան պաշտոնյաների տրամադրությունների և վարքագծի մասին:

Մողոլական կայսրության կառավարման վարչական համակարգը և բանակը կազմակերպված էր զինվորական աստիճանակարգով: Պետական կառավարման համակարգի յուրաքանչյուր պաշտոնյա և բանակի զորապետ Մեծ Մողոլից ստանում էր զինվորական աստիճան՝ մանսար, և դրան համապատասխան պաշտոն: Այդպիսի պաշտոն ստացողը կոչվում էր մանսաբդար: Պետական կամ ռազմական ծառայության մեջ գտնվող յուրաքանչյուր մանսաբդար իր զինվորական աստիճանի և դրան համապատասխան զբաղեցրած պաշտոնի համար պետք է պետական գանձարանից ստանար ռոճիկ կամ հարկ հավաքեր Մեծ Մողոլի շնորհած հողային տիրույթից՝ ջագիրից: Յուրաքանչյուր զորապետ մանսաբդար պարտավոր էր իր զինվորական աստիճանին և պաշտոնին համապատասխան իրեն շնորհված ջագիրից հավաքած հարկերով պահել և ռազմի դաշտ բերել Մեծ Մողոլի որոշած թվով հեծելազորային ջոկատներ, սպասարկող անձնակազմով փոխադրամիջոցներ, իսկ բարձրագույն աստիճան ունեցողները՝ նաև մարտական փողեր:

ԲԱՆԱԿԸ

Մողոլական կայսրության հզորության, հակաֆեոդալական ապստամբությունները ճնշելու և նվաճումներ կատարելու ուժը բանակն էր: Հզոր և մարտունակ բանակի միջոցով է Բաբուրը նվաճում Հյուսիսային Հնդկաստանը, իսկ Առևանգգերը ավարտում գրեթե ամբողջ Հնդկական թերակղզում մողոլական

տիրապետության հաստատման համար մղած պատերազմները՝ հսկայածավալ տերության հարավային սահմանը դարձնելով Կավերի գետը:

Մողոլական կայսրության բանակը հիմնականում բաղկացած էր ջագիր ստացած մանսաբդար զորապետերի վարձկան հեծելազորային ջոկատներից:

Մողոլական բանակը էթնիկական կազմով մեծ մասամբ բաղկացած էր Հնդկաստանում հաստատված և իրենց զորապետերի հրամանատարությամբ շարունակաբար դեպի մուսուլմանական տիրապետության ներքո գտնվող այդ տերությունը հոսող միջինասիական, թյուրք-մոնղոլական և աֆղանական ցեղերից կազմված զորախմբերից: Մողոլական բանակում, մասնավորապես Աքբարի ժամանակ, իրենց հեծելազորային ջոկատներով զինվորական ծառայություն էին կատարում նաև հնդիկ մանսաբդար զորապետերը: Առանձնահատուկ նշանակություն ուներ ռազարտական ոչ թե վարձկան, այլ՝ աշխարհազորային հեծելազորը՝ անօրինակ համախմբվածությամբ մարտնչելով իր զորապետի հրամանատարությամբ:

Մողոլական բանակը չուներ մեկ միասնական հրամանատարական ղեկավար կենտրոն, մշտական ռազմական խորհուրդ, չուներ նաև մշտական գլխավոր հրամանատար. նա Մեծ Մողոլի կողմից նշանակվում էր խոշոր մանսաբդար ջագիրդարներից միայն պատերազմի և անգամ՝ վճռական ճակատամարտի նախօրյակին: Ռազմական գործողություններում մանսաբդար զորապետերը իրենց զորաջոկատներով կռվում էին առանց ընդհանուր մարտական համաձայնեցված պլանի, ինքնուրույն նախաձեռնությամբ, որը խիստ բացասական հետևանքներ էր ունենում ճակատամարտի վերջնական արդյունքի վրա: Մողոլական բանակի մարտունակության վրա բացասաբար էր անդրադառնում նաև այն հանգամանքը, որ զինվորները չէին անցնում հատուկ ռազմական պատրաստվածություն:

Հնդկական թերակղզին և հնդկական իշխանապետությունները նվաճելու համար Մեծ Մողոլների մղած պատերազմներում մեծ նշանակություն ուներ թուրքական զինվորական մասնագետների կողմից կիրառվող հրետանին: Օրինակ՝ Պանիպատի մարտադաշտում 100 հազ. բանակով և 1000 մարտական փղերով ճակատամարտող Դելիի սուլթան Իբրահիմ Լոդիի զորքերին Բաբուրը իր 25 հազ. բանակով կարողանում է ջախջախել Հնդկաստանում՝ առաջին անգամ օգտագործելով նաև հրետանու կործանիչ ուժը: Սակայն արդեն Աքբարի գահակալության ժամանակ մողոլական բանակի հրետանին տեխնիկական տվյալներով շատ ետ էր մնում ոչ միայն Եվրոպական, այլև թուրքական հրետանու մակարդակից:

Մողոլական կայսրությունը չի ստեղծել ռազմական նավատորմ: Ուստի Հնդկական թերակղզու մեծագույն մասում քաղաքական գերիշխանություն հաստատած այդ հսկայածավալ կայսրությունը նույնիսկ ռազմական առավել հզորության ժամանակաշրջանում ծովում անզոր էր օտարերկրյա ռազմանավերի դեմ պայքարելու, տարածքային ամբողջականությունը Եվրոպական գաղութարարների նվաճումներից պաշտպանելու և իր պետական անկախությունը պահպանելու համար: Հնդիկ պատմաբան Պանիկարը նշում է, որ Աքբարը իր միջինասիական ավանդույթներով երբեք չի հասկացել ծովում գերիշխանություն հաստատելու անհրաժեշտությունը: Նա առաջին անգամ օվկիանոս է տեսել գահակալման տասնվեցերորդ տարում՝ 1572 թ., Արևմտյան Հնդկաստանի հինդուստական Գուջարաթ իշխանապետությունը նվաճելու ժամանակ: Ռազմական նավատորմ ստեղծելու գաղափարը, հավանաբար, երբեք չի առաջացել ո՞չ Աքբարի և ո՞չ Էլ Նրա հետնորդների ժամանակ, Եգրակացնում է Պանիկարը:

ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ինչպես Դելիի սովորականության, այնպես էլ Մեծ Մողոլական կայսրության ժամանակաշրջանում արտադրության հիմնական միջոցը՝ հողը, հանդիսանում էր պետության ֆեռալական սեփականությունը, իսկ Մեծ Մողոլը ամբողջ կայսրության հողային տարածքների գերագույն սեփականատերն էր: Մեծ Մողոլական կայսրությունում գոյություն ուներ հողի պետական սեփականության երկու ձև: Այդ պետական ֆեռալական սեփականության երկու հիմնական ձևերն էին հալիսեն և ջագիրը: Մեծ Մողոլական կայսրությունում բոլոր նվաճված տարածքները և հողատարածությունները ամբողջությամբ դառնում էին պետական հողային սեփականության ֆոնդը, որը կոչվում էր հալիսե: Հալիսե կոչված պետական ամբողջ հողային ֆոնդը բաժանված էր երկու անհավասար մասերի: Այդ հողային ֆոնդի 8-րդ մասը մնում էր պետության անմիջական տնօրինության տակ՝ շարունակելով կոչվել հալիսե: Այդպիսով, հալիսեն պետության ֆեռալական սեփականությունն էր: Հալիսե կոչված պետական սեփականության տարածքում հողային հարկը հավաքում էին Մեծ Մողոլի նշանակած հարկահանները և հողի հարկը անմիջականորեն փոխանցում կայսերական գանձարան: Հալիսեից հավաքված հարկերը ծախսվում էին արքունիքի, բոլոր այն պաշտոնյաների և զինվորների վրա, որոնք ոռճիկ էին ստանում բնամթերքով կամ դրամով: Հալիսեի որոշ հողատարածություններում կազմակերպված էին նաև արքունական տնտեսություններ, որոնցում հիմնականում աշխատում էին ստրուկները: Սակայն նման արքունական տնտեսությունների տեսակարար կշիռը շատ փոքր էր: Պետական սեփականություն էին նաև մի շարք անտառներ ու մարգագետիններ:

Հալիսեի տարածքից դուրս գտնվող մյուս պետական հողային ֆոնդը Մեծ Մողոլը ռազմական ծառայության դիմաց շնորհում էր

մուսուլման ֆեոդալական ավագանու ներկայացուցիչներին: Ռազմական ծառայության դիմաց շնորհված հողատարածությունը կոչվում էր ջագիր, իսկ նրա տնօրինումը չէր կրում ժառանգական, անգամ ցմահ բնույթ՝ շարունակելով հանդիսանալ պետության ֆեոդալական սեփականությունը: Ռազմական ծառայության դիմաց ջագիր ստացած ֆեոդալը կոչվում էր ջագիրդար: Յուրաքանչյուր ջագիրի տարածությունը և դրանից ստացված հողային հարկը, եկամուտները պետք է համապատասխանեին ջագիրդարի զինվորական աստիճանին: Յուրաքանչյուր ջագիրի գտնվելու աշխարհագրական վայրը, դրանից ստացվող հողային հարկի չափը, այն գանձելու միջոցները և ձևերը որոշում էր տերության ֆինանսական գերատեսչությունը: Սովորաբար ջագիրը խոշոր ֆեոդալական տիրույթ էր՝ երբեմն ընդգրկելով մի քանի տասնյակ հազար հեկտար հողատարածություն: Զագիրի միջին չափերը ահռելի էին՝ կազմելով մոտավորապես 100 հազ. հեկտար հողատարածություն: 16-րդ դարի վերջին Մողոլական կայսրությունում կային մոտ 450 խոշոր և 1,4 հազ. մանր ջագիրներ:

Զագիրդարների հնարավոր անջատողական ծգտումները և տրամադրությունները կանխելու նպատակով շնորհված ջագիրը մեկ ամբողջական միասնական հողատիրույթ չէր կազմում և առանձին մասերով շերտընդմեջ գտնվում էր կայսրության աշխարհագրական տարբեր վայրերում: Այնուհետև, դեռևս ծառայության ընթացքում ջագիրդարից կարող էին վերցնել ջագիրը և կամ փոխել ջագիրների գտնվելու աշխարհագրական վայրերը:

Զագիրդարի զինվորական աստիճանը բարձրացնելու դեպքում ջագիրի տարածքը պետք է ընդլայնվեր, իսկ նրա գտնվելու աշխարհագրական վայրը պետք է փոխվեր:

Բացի հողային հարկից՝ գյուղացիներից գանձում էին նաև չսահմանված տուրքեր՝ ստիպելով նրանց աշխատել նաև պալատների, մզկիթների, դամբարանների կառուցման, ոռոգման համակարգերի, ճանապարհների վերանորոգման վրա:

Զագիր ստացած մուսուլմանական խոշոր ֆեոդալական ավագանին պարտավոր էր շնորհված հողատիրույթի՝ ջագիրի եկամուտներին և իր զինվորական աստիճանին համապատասխան պահել վարձու զորամիավորումներ, իիմնականում՝ հեծելաջոկատներ, որոնք էլ կազմում էին Մեծ Մողոլի բանակի հիմնական միջուկը: Այդպիսի զինվորական միավորումներ պահելու համար խոշոր ջագիրդարները ծախսում էին իրենց ջագիրից ստացված հողային հարկի 1/3 –րդ մասը, իսկ մանր ջագիրդարները՝ կեսից պակաս: Բացի ռազմական ծառայության դիմաց մուսուլմանական ավագանուն շնորհված ժամանակավոր ֆեոդալական տիրույթ ջագիրից՝ Մեծ Մողոլ Աքբարի ժամանակ հպատակություն հայտնած հնդիկ ռաջաներին հաճախ նրանց նախկին իշխանական տիրույթները շնորհվում էին որպես ջագիրներ, որոնք, սովորաբար, կրում էին ժառանգական բնույթ: Դրանք ոչ մուսուլման հնդիկ ռաջաների ժառանգական ջագիրներն էին:

Մողոլական կայսրության ժամանակաշրջանում գոյություն ունեին նաև ոչ մուսուլման ֆեոդալների ժառանգական հողային տիրույթներ՝ զամինդարություններ, որոնց սեփականատերերը կոչվում էին զամինդարներ: Զամինդարները կայսրության վասալական իշխանապետությունների կառավարիչներն էին կամ ցեղերի առաջնորդները, որոնք սահմանված տարեկան հարկ էին վճարում պետական գանձարանին և իրենց աշխարհազորով նույնպես պարտավոր էին մասնակցել Մեծ Մողոլի մղած պատերազմներին: Զամինդարները իրենց հողային տիրույթները՝ զամինդարությունները, սեփականատիրության իրավունքով որպես ժառանգություն կարող էին փոխանցել, սակայն միայն Մեծ Մողոլի շնորհագրային իրովարտակի հիման վրա: Կայսրության հարկային գերատեսչությունը չէր միջամտում զամինդարության ներքին գործերին: Զամինդարները իրենք էին նշանակում հարկերը, նրանց չափը և գանձելու ձևերը:

Մողոլական կայսրությունում գոյություն ունեին նաև մուսուլման մանր ու միջին հոգևոր ֆեոդալների՝ շեյխների և մուսուլմանական հոգևոր հիմնարկությունների՝ մզկիթների, մեդրեսեների՝ կրոնական դպրոցների հողային տիրություններ, որոնք կոչվում էին սոյուրգալներ: Այդ հողային հոգևոր տիրությունները կոչվել են նաև սույուրգալ, մուլք, վակֆ, վակուֆ, ինամ: Սոյուրգալը կառավարության հատուկ հրովարտակով՝ վակֆ – նամեռվ որպես սեփականություն շնորհված մանր հողային տիրությունները էր և փոխանցվում էր ժառանգաբար՝ առանց որևէ հարկային կամ զինվորական ծառայության, բացի կայսեր կյանքի հարատևության և արևշատության համար աստծուն ամենօրյա աղոթքներ առաքելուց: Բացառիկ դեպքերում սոյուրգալ էր շնորհվում նաև հոգևոր կոչում չունեցող բարձրաստիճան աշխարհիկ անձանց: Աքբարի կրոնական հանդուրժողական քաղաքականության հետևանքով սոյուրգալներ էին շնորհվում նաև ոչ մուսուլման հոգևորականներին: Սոյուրգալ կոչվող հողային հոգևոր տիրությունները կազմում էին պետական հողային ֆոնդի ընդամենը 3%-ը: Սոյուրգալներից ստացված եկամուտները տրամադրվում էին նաև կրոնական, բարեգործական և ուսումնական հաստատություններին: Սոյուրգալները՝ վակուֆները, կառավարում էին հատուկ պաշտոնյաները՝ մութեվալիները կամ նազիրները, որոնք հետևում էին հարկերի հավաքմանը և դրանց նպատակային բաշխմանը:

Ինչ վերաբերում է հինդուստական տաճարական հողատիրությանը, ապա այն խլվել էր դեռևս Դելիի սովորանության ժամանակ: Միայն զամինդարների տիրություններում էին պահպանվել հինդուստական տաճարներին պատկանող որոշ հողային սեփականություններ:

ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԸ

Հնագույն ժամանակներից Հնդկաստանում ազրարային համակարգի հիմքն էր գյուղական համայնքը: Հողը թեև ֆեոդալական պետության սեփականությունն էր, այնուամենայնիվ այն լիովին տնօրինում էր գյուղական համայնքը: Գյուղական համայնքի տնօրինությանը պատկանող վարելահողը ժառանգական օգտագործման իրավունքով բաժանվում էր գյուղական յուրաքանչյուր ընտանիքի: Սովորաբար գյուղական համայնքներում վարելահողը հիմնականում բաժանվում էր ըստ ընտանիքի անդամների թվի: Համայնքի յուրաքանչյուր ընտանիք իր սեփական միջոցներով էր մշակում իրեն բաժին հասած վարելահողը: Սակայն որոշ գյուղական համայնքներում շարունակում էր տիրապետել վարելահողի կոլեկտիվ մշակությունը: Գյուղական համայնքներում տիրում էր վարելահողի շերտընդմիջություն, որովհետև վարելահողը բաժանվում էր այն սկզբունքով, որպեսզի յուրաքանչյուր ընտանիք ունենար համայնքի վարելահողերի տարբեր որակների հավասար հողաբաժիններ: Բացի իր բնակված համայնքում վարելահող ունենալուց՝ գյուղացին կարող էր հարևան գյուղական համայնքում ձեռք բերել լրացուցիչ հողամաս, սակայն առանց դառնալու այդ գյուղի իրավահավասար անդամը: Յուրաքանչյուր գյուղական համայնք և համայնական ազատ էր իր տնտեսական գործունեության մեջ: Յուրաքանչյուր համայնական սեփական հայեցողությամբ կարող էր ազատորեն տնօրինել և մշակել իր հողը, վաճառել, ժառանգության հանձնել և այլն: Սակայն հողի մշակումը պետական պարտադիր պարտավորություն էր և հարկահանները խստորեն հետևում էին հողատարածությունների անթերի մշակմանը: Գյուղական համայնքին պատկանող արոտավայրերը և անմշակ հողատարածությունները գտնվում էին կոլեկտիվ տնօրինության ներքո և հարկման չէին ենթարկվում:

Գյուղական համայնքը բաղկացած էր արտոնյալ պաշտոնատար անձանցից, շարքային գյուղացիներից, արհեստավորներից, անիրավահավասար «եկվորներից» և ստրուկներից: Յուրաքանչյուր համայնքում գոյություն ունեին բազմաթիվ կաստայական, կրոնական և այլ կարգի բաժանումներ, որոնց հիման վրա էլ սահմանվում էին համայնականների հարկերի չափերը, նրանց իրավունքներն ու պարտականությունները: Իրավագործկան կարգավիճակում էին համայնքի ստորին կաստաները: Հնդկական գյուղական համայնքի հիմնական առանձնահատկություններից էր այն, որ առանց որևէ բացառության բոլոր պաշտոնները, արհեստավորների մասնագիտությունները և շարքային համայնականների իրավունքներն ու պարտականություններն կրում էին ժառանգական բնույթ:

Գյուղական համայնքը պետական հարկային համակարգի ստորին միավորն էր: Գյուղական համայնքն էր վճարում մշակվող հողատարածություններից գանձվող պետական հողի հարկը: Սակայն հողի հարկը վճարելուց հետո գյուղացին կարող էր իր մնացյալ բերքը ստանալ համայնքի պաշտոնյաներին, արհեստավորներին և ծառաներին նախատեսված համապատասխան բաժինը տալուց հետո: Հողի հարկը վճարելուց բացի՝ համայնականները ստիպված էին պետության համար կատարել նաև պարտադիր ծրի աշխատանքային պարհակներ՝ ժամանակավորապես աշխատելով բերդերի և բազմաթիվ այլ կառույցների վրա:

Աքբարի ժամանակ համայնքի անդամները հողի հարկ էին վճարում իրենց համախառն բերքի 1/3-րդ մասը, որը կազմում էր տարեկան 166 մլն. ռուփի: Առլանգզեթի ժամանակ հողի հարկը սահմանվում է բերքի համախառն արդյունքի $\frac{1}{2}$ – րդ մասը՝ հասնելով տարեկան մոտ 387 մլն. ռուփիի՝ այդպիսով ավելանալով ավելի քան երկու անգամ:

ՄԵԾ ՄՈՂՈԼՆԵՐԻ ԿԱՅՍՐՈՒԹՅԱՆ ՔԱՅՔԱՅՈՒՄԸ: ՆԱԴԻՐ ՇԱՀԻ ԵՎ ԱՖԴԱՆՆԵՐԻ ԱՐԺԱՎԱՆՔՆԵՐԸ

17-րդ դարի վերջերին ուժեղանում է Հնդկաստանի տարբեր մարզերի և շրջանների առանձնացման կամ անջատողական գործընթացը։ Դրա հետևանքով Մողոլական կայսրության կենտրոնական կառավարության իշխանությունն աստիճանաբար թուլանալով՝ ստանում է ձևական բնույթ։ Հնդկաստանի քաղաքական մասնատման հետևանքով 18-րդ դարի սկզբին Մողոլական կայսրության խոշորագույն մարզերի կառավարիչները՝ սուբադարները և նավաբները, վերածվում են անկախ իշխանապետերի։ Մասնատված և ինքնուրույնություն ձեռք բերած մարզերից էին Փենջաբը, Բենգալիան, Հայդարաբադը և այլ իշխանապետություններ։ Այդ մասնատման հետևանքով Մեծ Մողոլների տերությունը կրճատվում է՝ սահմանափակվելով Հյուսիսային Հնդկաստանի տարածքում։ Սակայն Մեծ Մողոլներին էին պատկանում նաև Աֆղանստանի հարավ-արևելյան մասերը՝ Փեշավարով և Քաբուլով։ Թեև մողոլական կայսրերը շարունակում էին համարվել Հնդկաստանի գերագույն կառավարիչներ, բայց իրականում նրանց իշխանությունը սահմանափակվում էր սուկ Դելիի շրջակա տարածքներով։

Այդպիսին էր Մողոլական կայսրության քաղաքական իրավիճակը, երբ թույլ պաշտպանված հյուսիսարևմտյան Հնդկաստանը 1738-1739 թթ. ենթարկվում է Իրանի Նադիր շահի կործանիչ արշավանքին։ 1738 թ. Նադիր շահը գրավում է Աֆղանստանի արևելյան տարածքները, այդ թվում՝ Քաբուլը, ապա անցնելով Ինդոս գետը՝ ներխուժում է Փենջաբ և 1739 թ. վետրվարին գրավում Մողոլական կայսրության մայրաքաղաք Դելին։ Մեծ Մողոլը և ամբողջ արքունիքը հանձնվում է Նադիր շահի ողորմածությանը։ Նադիր շահը արյունալի հաշվեհարդար է տեսնում մայրաքաղաքի բնակչության հետ, թալանում Դելին,

զավթում Մեծ Մողոլի 70 մլն. ռուփի կազմող գանձերը, այդ թվում կայսեր՝ 80 մլն. ռուփի արժողությամբ «Սիրամարգի գահը» և Երկրագնդի խոշորագույն աղամանդը: Իրանին միացնելով Ինդոս գետից արևմուտք գտնվող տարածքները՝ հնդկական Սինդը, աֆղանական հողերը, այդ թվում՝ Փեշավարը, Քաբուլը, 1739 թ. մայիսին Նադիր շահը դուրս է գալիս Հնդկաստանից: Նադիր շահի ավերիչ արշավանքը Մողոլական կայսրությանը հասցնում է լիակատար կործանման եզրին:

1747 թ.' Նադիր շահի սպանությունից հետո, իրանական տերության քայլայման հետևանքով առաջանում է ինքնուրույն աֆղանական պետությունը՝ Նադիր շահի նախկին զորավարներից Ահմեդ շահ Դուրրանիի գլխավորությամբ (1747-1773 թթ.):

18-րդ դարի 50-ական թվականներին աֆղաններն իրենց գերիշխանությունն են հաստատում հյուսիսարևմտյան Հնդկաստանի վրա՝ (Փենջար, Քաշմիր) և գրավելով ու թալանելով Դելին՝ մողոլական կայսրին են թողնում սոսկ ծևական իշխանություն: Սակայն աֆղանները չեն կարողանում ամրապնդել իրենց տիրապետությունը հյուսիսարևմտյան Հնդկաստանում և վերադառնում են Աֆղանստան: Հնդկաստանի միավորման համար պայքար է սկսվում հնդկական իշխանապետությունների միջև, սակայն աֆղանները վերսկսում են իրենց արշավանքները դեպի Հնդկաստան և 1761 թ. հունվարի 14-ին Պանխատի դաշտում տեղի ունեցած վճռական ճակատամարտում աֆղանները թեև հաղթանակ են տանում, բայց նորից չեն ամրապնդվում հյուսիսարևմտյան Հնդկաստանում: Այնուամենայնիվ, 1761 թ. Պանխատի ճակատամարտից հետո Մեծ Մողոլների կայսրությունը կործանվում է՝ վերածվելով անկախ, ինքնուրույն իշխանապետությունների կոնֆեդերացիայի: Միաժամանակ 18-րդ դարի կեսերին ուժեղանում են գահակալական կոհվները, ֆեոդալական երկպառակությունները, որոնք էլ բարենպաստ պայմաններ են

ստեղծում Հնդկաստանը Եվրոպական տերությունների կողմից գաղութացնելու համար:

ՀՆԴԿԱՍՏԱՆԻ ԳԱՐՈՒԹԱՑՈՒՄԸ ՊՈՐՏՈՒԳԱԼԻԱՅԻ ԵՎ ՇՈԼԱՆԴԻԱՅԻ ԿՈՂՄԻՑ

15-րդ դարի կեսերից Եվրոպական զարգացող Երկրներում տեղի է ունենում արտադրողական ուժերի և ապրանքային արտադրության հետագա աճ: Նման պայմաններում Եվրոպական Երկրներում սկսում է զգացվել թանկարժեք մետաղների պակաս: Դրա հետ մեկտեղ, Եվրոպական Երկրներին անհրաժեշտ էին հումքի նոր աղբյուրներ և վաճառահանման շուկաներ: Դեռևս մ.թ.ա. 2-րդ դարում Հռոմը, Հռոմաստանը ցամաքային և ծովային ճանապարհներով առևտրական հարաբերություններ ունեին Հնդկաստանի հետ: Հետագայում՝ Օսմանյան կայսրության նվաճումների հետևանքով դեպի Հնդկաստան և Չինաստան տանող ծովային և ցամաքային ճանապարհը, որը հայտնի էր նաև Մետաքսի Մեծ ճանապարհ անունով, փակվում է: Ուստի, իրատապ նշանակություն էր ստանում դեպի Հնդկաստան տանող ծովային նոր ուղու հայտնագործումը: Այդ ուղու հայտնագործման առաջնությունը պատկանում է պորտուգալացի ծովագնացներին: Շրջանցելով Աֆրիկան՝ 1498 թ. մայիսի 20-ին երեք նավերից բաղկացած պորտուգալական նավատորմը ծովագնաց Վասկո դա Գամայի գլխավորությամբ հասնում է Հնդկաստանի հարավարևմտյան՝ Մալաբարյան ափի Կալիկուտ քաղաքը: Վասկո դա Գաման առևտրական և դիվանագիտական կապեր է հաստատում Կալիկուտի կառավարչի հետ և արևելյան համեմունքներով, թանկարժեք քարերով, մետաքսով բեռնված նավերով 1498 թ. օգոստոսի վերջին բռնում է Ետդարձի ճանապարհը: Դեպի

Հնդկաստան կատարած Վասկո դա Գամայի ծովային նավագնացությունը ունենում է համաշխարհային պատմական նշանակություն, որովհետև առաջին անգամը լինելով՝ հայտնաբերվում է Աֆրիկայի շրջանցումով Եվրոպայից դեպի Հնդկաստան տանող ծովային ուղին: 1502 թ. Վասկո դա Գաման՝ որպես «Հնդկաստանի ծովակալ», արդեն 20 նավերով, երկրորդ նավագնացությունն է կազմակերպում դեպի Մալաբարի ափերը: Այդ անգամ նա դաժան հաշվեհարդար է կազմակերպում Կալիկուտի նկատմամբ, մի շարք հենակետեր ստեղծում Մալաբարի ափին և հսկայական ավարով 1503 թ. վերադառնում Լիսաբոն: Հետագայում՝ 1524 թ., Վասկո դա Գաման նշանակվում է Հնդկաստանում պորտուգալական տիրույթների փոխարքա: Վասկո դա Գամայից հետո՝ 1505-1515 թթ., դեպի Հնդկաստանի արևմտյան ափերը կատարած պորտուգալացի ծովագնացներ Ալմեյդայի և Ալբուկերկիի արշավանքների հետևանքով պորտուգալացիները իրենց տիրապետությունն են հաստատում Հնդկաստանի արևմտյան ափի Կաննանուր, Կոչին, Դիու, Դաման, իսկ 1510 թ.' Գոա քաղաքների վրա: Վերջինս դառնում է պորտուգալական բոլոր տիրույթների կենտրոնը Արևելքում: 1532 թ. պորտուգալացիները Հնդկաստանի արևմտյան ափին գրավում են նաև Բոմբեյը: Սակայն պորտուգալացիները մարդկային անհրաժեշտ ուժեր չունեին Հնդկաստանի խորքերը ներթափանցելու համար, ուստի քավարարվում էին միայն ծովափնյա շրջանների տարածքները գաղութացնելով: Այդ գաղութացմանը նպաստում էր նաև պորտուգալական հոգևորականությունը՝ ավերելով հինդուստական տաճարները և ինկվիզիցիայի միջոցով բռնությամբ տարածելով կաթոլիկական դավանանքը:

1505 թ. Հնդկական թերակղզու ծայր հարավ-արևելքում գտնվող Ցեյլոն կղզու արևմտյան ափին է հայտնվում առաջին պորտուգալական նավատորմը: Տեղական իշխանության հետ 1517 թ. կնքած առևտրական պայմանագրի համաձայն՝

պորտուգալացիներն իրավունք են ստանում արտահանել համեմունքներ, ինչպես նաև կղզու արևմտյան ափին հիմնել առևտրական գործակալություններ և կառուցել ամրություններ: Պորտուգալացիների ամրացված կենտրոնն է դառնում Հնդկական օվկիանոսի կարևորագույն առևտրական կենտրոններից մեկը՝ կղզու արևմտյան ափի Կոլոմբո վերանվանված Կոլոնտուտա քաղաք-նավահանգիստը:

Պորտուգալացիներն իրենց հնդկական գաղութները ենթարկում էին գաղութային թալանի և շահագործման՝ ստիպելով հնդիկ իշխաններին կայուն գներով իրենց վաճառել անխնա հնդկական ապրանքները: Հնդկաստանի հետ կատարվող առևտուրը թագավորական մենաշնորհ էր և Հնդկաստանից բոլոր ապրանքները Պորտուգալիա էին բերվում միայն թագավորական նավերով: Այդ առևտուրն ահենի շահույթ էր բերում, որովհետև Հնդկաստանում ձեռք բերված ապրանքները Լիսաբոնում վաճառվում 700-800%-ով թանկ գներով: Շուկայում հնդկական ապրանքների բարձր գները պահպանելու նպատակով Հնդկաստանից տարեկան Պորտուգալիա էր ժամանում ընդամենը 5-6 նավ:

Հնդկական գաղութների հետ իրենց մենաշնորհային առևտուրը այլ երկրների մրցակցությունից ապահովելու նպատակով պորտուգալացիները ռազմական վերահսկողություն են սահմանում Հնդկաստան տանող ծովային ուղիների վրա՝ զավթելով օտար դրոշների ներքո նավարկող եվրոպական առևտրանավերը և օվկիանոսում ջրասույզ անելով դրանց հրամանատարական անձնակազմերն ու վաճառականներին: Ինչ վերաբերում էր հնդիկ և ասիական այլ երկրների առևտրականներին, ապա նրանք կարող էին Հնդկաստանի և արևելյան երկրների միջև ծովային առևտուր կատարել պորտուգալացիներին ծանր հարկեր վճարելու պայմանով:

16-րդ դ. վերջին Հնդկաստան տանող ծովային ուղիների վրա իրենց նախկին գերիշխանությունը կորցրած պորտուգալացիները,

հանձինս հոլանդացիների, տեսնում են իրենց մրցակիցներին, որոնք արդեն 1599 թ. ի վեր առևտրական կանոնավոր հարաբերություններ էին հաստատել Հնդկաստանի հետ: Հոլանդական կառավարության աջակցությամբ 1602 թ. ստեղծվում է միացյալ Օստ-Հնդկական (Արևելա-Հնդկական) առևտրական ընկերությունը: Հենց սկզբից Հոլանդիայի Գլխավոր շտատները Օստ-Հնդկական ընկերությանն են օժտում պետական կարգավիճակին հավասար առանձնաշնորհումներով: Դրա հետևանքով այդ ընկերությունը ստանում է Արևելքի հետ նավագնացության և արտոնյալ առևտրի իրավունք: Ընկերությունը կարող էր կառուցել ամրություններ, հիմնել առևտրական գործակալություններ (ֆակտորիաներ), դրամ հատել, բանակ պահել, պատերազմ հայտարարել և հաշտություն կնքել: Ընկերությունը Հոլանդիայի շտատհալթերի անունից իրավունք է ստանում պայմանագրեր կնքել գրաված տարածքների ղեկավարների հետ, իրականացնել դատական և վարչական ֆունկցիաներ ինչպես՝ իր ծառայողների, այնպես էլ՝ տեղաբնիկների նկատմամբ: Այնուհետև ընկերությունն իրավունք է ստանում առանց մաքսի անդրծովյան ապրանքներ ներմուծել Հոլանդիա, իսկ Հոլանդիայից արտահանվող ապրանքների վրա դրվում էր միայն 3% մաքս: Այդ ընկերության նախնական կապիտալը կազմում էր 6,5 մլն. ֆլորին, որը հավասար էր անգլիական 540 հազար ֆունտ ստեղնինգի: Արդեն 1605 թ. հոլանդացիները սկսում են զավթել պորտուգալացիների հնդկական տիրույթները: Արդյունքը լինում է այն, որ 17-րդ դարի կեսերին պորտուգալացիները զրկվում են Հնդկաստանում ունեցած իրենց հիմնական տիրույթներից՝ պահելով միայն Գոան, Դամանը, Դիուն և Չառլզը: Այդ ժամանակից էլ Պորտուգալիան դադարում է Հնդկաստանում էական քաղաքական դեր ունենալուց: 1910 թ. պորտուգալական հանրապետության հոչակման հետևանքով հիշյալ գաղութները ստանում են սահմանափակ ինքնավարություն, իսկ 1961 թ. դեկտեմբերին դրանք

ազատագրվում Են պորտուգալական գաղութային տիրապետությունից և միանում Հնդկաստանի հանրապետությանը: Հոլանդացիները պորտուգալական գաղութային տիրույթներին Են տիրանում նաև Ֆեյլոնում՝ 1658 թ. գրավելով դրանց կենտրոն Կոլոմբոն:

Գաղութային շահագործման ու կողոպուտի անմիջական հետևանքերը Եվրոպական զարգացած երկրներում առաջացնում Են տնտեսական հսկայական փոփոխություններ: Նախ՝ գաղութացված տարածքներից մեծաքանակ ուսկու և արծաթի ներհոսքը նպաստում է այդ թանկարժեք մետաղների ինքնարժեքի նվազմանը՝ առաջացնելով գների հեղափոխություն, որն էլ հանգեցնում է բոլոր ապրանքների թանկացմանը: Ուսկու և արծաթի մեծաքանակ առկայությունը չի սառեցվում, այլ ներդրումների շնորհիվ մեծ ազդակ է ծառայում ինչպես արդյունաբերության, այնպես էլ գյուղատնտեսության բնագավառներում կապիտալիստական արտադրական հարաբերությունների հետագա զարգացման համար: Այդ երևույթը ցայտուն կերպով դրսևորվում է Անգլիայում և Հոլանդիայում: Սակայն, հսպանիայում և Պորտուգալիայում թանկարժեք մետաղները չեն ներդրվում և չեն նպաստում այդ երկրներում կապիտալիստական հարաբերությունների զարգացմանը, և, հետևաբար, այդ երկրներում ինչպես քաղաքական, այնպես էլ տնտեսական բնագավառներում շարունակվում են պահպանվել ֆեոդալական հարաբերությունները:

ՀՆԴԿԱՍՏԱՆԻ ԳԱՂՈՒԹԱՑՈՒՄԸ ԱՆԳԼԻԱՅԻ ԿՈՂՄԻՑ (ՄԻՆՉԵՎ 1740 Թ.):

Անգլիայում կապիտալիստական հարաբերությունների զարգացման հետևանքով 16-րդ դարի երկրորդ կեսին առաջանում են մի շարք առևտրական մենաշնորհային ընկերություններ,

որոնցից էին Մոսկովյան, Մարոկկոյան և այլն: 1600 թ. Լոնդոնում ստեղծվում է Օստ-Հնդկական առևտրական ընկերությունը, որը կառավարությունից ստանում է Հնդկաստանի հետ մենաշնորհային առևտուր անելու թագավորական խարտիա: Եթե հիմնադրման տարում այդ ընկերության բաժնետերերի հիմնական կապիտալը կազմում էր ընդամենը 30 հազ. ֆունտ ստեղնինգ, ապա երկու տասնամյակ անց 9,5 հազ. բաժնետերերից բաղկացած ընկերության կապիտալը հասնում է 1 մլն. 600 հազ. ֆունտ ստեղնինգի: Հիշյալ մենաշնորհային առևտրական ընկերությունը ոչ միայն առևտուր էր անում անդրծովյան երկրների հետ, այլև մեծ դեր է ունենում անգլիական հսկայածավալ գաղութային կայսրության ստեղծման գործում: Հնդկաստանի հետ հարաբերություններ հաստատելու նպատակով Մողոլական կայսրության մայրաքաղաք Էջին ուղևորվում Օստ-Հնդկական ընկերության և Անգլիայի թագավորի դեսպանությունները:

1613 թ. Օստ-Հնդկական ընկերությունն իր առաջին գրասենյակն է հիմնում Արևմտյան Հնդկաստանի առևտրական հարուստ նավահանգիստ Սուլաթում (մինչ այդ Սուլաթում հաստատվել էին հայերը): 1617 թ. Օստ-Հնդկական ընկերությունը Մեծ Մողոլից ստանում է ֆերման՝ կայսրության բոլոր տարածքներում 3,5% կայուն մաքսի պայմանով առևտուր կատարելու և առևտրական ֆակտորիաներ (գրասենյակներ) հիմնելու համար: Մեծ Մողոլն իր ֆերմանը շնորհում է՝ նպատակ ունենալով Օստ-Հնդկական ընկերությունը հակադրել պորտուգալացիներին՝ նրանց ազդեցությունը թուլացնելու նպատակով: Այնուհետև՝ 1639 թ., Օստ-Հնդկական ընկերությունն ամրություն է կառուցում, ինչպես նաև ֆակտորիա հիմնում Հնդկաստանի հարավարևելյան՝ Կորոմանդեյան ափի Մադրաս նավահանգստում: 1639 թ. Մադրասը դառնում է Օստ-Հնդկական ընկերության կենտրոնը Հարավային Հնդկաստանում: Մադրասից հետո Օստ-Հնդկական ընկերության երկրորդ խոշոր տիրույթն է դառնում Հնդկաստանի

Բոմբեյ նավահանգիստը: Կղզու վրա գտնվող Բոմբեյը 1661 թ. Կառլ 2-րդ Ստյուարտին էր նվիրել Պորտուգալիայի թագավոր ժուան 4-րդը՝ որպես իր դուստր Կատերինե Բրագանցայի օժիտ՝ բայց հիմնականում՝ որպեսզի ստանար Անգլիայի աջակցությունը Պորտուգալիայի միջազգային հարաբերություններում: Հետագայում՝ 1668 թ., Կառլ 2-րդը Բոմբեյը նվիրում է Օստ-Հնդկական ընկերությանը: 1687 թ. Օստ-Հնդկական ընկերությունն իր ֆակտորիան Սուրաթից տեղափոխում է Բոմբեյ, որը գտնվում է աշխարհագրական հարմար դիրքում: Օստ-Հնդկական ընկերությունն այդտեղ կառուցում է առևտրական նոր ֆակտորիա, ուազմածովային հենակետ և Բոմբեյը վերածում առևտրական խոշոր կենտրոնի: Այդպիսով, 1687 թ. Բոմբեյը դառնում է Օստ-Հնդկական ընկերության կենտրոնը Արևմտյան Հնդկաստանում:

Բոմբեյը տնտեսապես զարգացնելու նպատակով Օստ-Հնդկական ընկերությունը Սուրաթից նպաստավոր պայմաններով հայերին տեղափոխում է Բոմբեյ՝ նրանց տրամադրելով հողամասեր, վարկեր, տներ: Բոմբեյում է գործել Հնդկաստանի մեծահարուստ հայ վաճառականներից խոչա Մինասը, որն ունեցել է խոշոր առևտրանավեր: Աստիճանաբար ամրապնդվելով Հնդկական թերակղզում՝ 1690 թ. Օստ-Հնդկական ընկերությունը Գանգես գետի ստորին հոսանքում՝ Բենգալիայում, հիմնում է Կալկաթա քաղաքը: 1717 թ. Օստ-Հնդկական ընկերությունը կարողանում է Մեծ Մողոլից ստանալ նոր ֆերման՝ Բենգալիայում առանց մաքսատուրքի առևտուր կատարելու համար: Սակայն, անմաքս առևտրի կայսերական ֆերմանը Օստ-Հնդկական ընկերությունը ստանում էր Մեծ Մողոլի գանձարանը տարեկան երեք հազար ռուփի մուծելու պարտադիր պայմանով: Այդ կայսերական ֆերմանը ստանալուն Օստ-Հնդկական ընկերությանն իր միջնորդությամբ օգնել է հնդկահայ նշանավոր վաճառական խոչա Իսրայել Սարհաթը, որը սերտ հարաբերություններ ուներ Մեծ Մողոլի հետ: Այդ ժամանակից սկսած բենգալական ապրանքները

գերակշռություն են ստանում Հնդկաստանից Օստ-Հնդկական ընկերության արտահանած արտադրանքների ծավալում: Այդ առումով ընկերության եկամուտներն ահռելի գումարների են հասնում՝ 1717 թ. 278,6 հազ. ֆունտ ստեղնինգից 1729 թ. հասնելով 364 հազ. ֆունտ ստեղնինգի: Բենգալիայից արտահանվող հիմնական ապրանքներն էին բամբակագործական և մետաքսե գործվածքները, մետաքսի հումքը, շաքարը, բուսական և կենդանական յուղը, բրինձը, օփիումը:

ՀՆԴԿԱՍՏԱՆԻ ԳԱՂՈՒԹԱՑՈՒՄԸ ՖՐԱՆՍԻԱՅԻ ԿՈՂՄԻՑ: ԱՆԳԼՈ-ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐԻ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ ՀՆԴԿԱՍՏԱՆՈՒՄ

Ֆրանսիական գաղութային քաղաքականությունը սկիզբ է առել դեռևս 16-րդ դարում՝ աշխարհագրական մեծ հայտնագործությունների ժամանակաշրջանում: Ֆրանսիական բացարձակ միապետությունն անմիջական մասնակցություն էր ցուցաբերում գաղութային արշավախմբեր կազմակերպելու գործում: Ֆրանսիական ռազմածովային նավատորմն օգտագործվում էր նաև գաղութներ զավթելու նպատակով: Այդպիսով, բացարձակ միապետությունը նախաձեռնում էր Ֆրանսիական գաղութային կայսրության ստեղծմանը՝ արտոնություններ և առանձնաշնորհումներ նվիրելով առևտրական ընկերություններին: 1638 թ. Ֆրանսիացիները Հնդկական օվկիանոսում տիրում են մի կղզու, որն, ի պատիվ իշխող Բուրբոնյան արքայատոհմի, անվանում են Բուրբոն (արդի՝ Ռեյունյոն կղզին): Սակայն Ֆրանսիական գաղութային քաղաքականության փաստական իրականացումը կապված է Ֆրանսիայի ֆինանսների Գլխավոր տեսուչ ժան Բատիստ Կոլբերի գործունեության հետ: 1664թ. Կոլբերը հիմնում է

Երկու գաղութային ընկերություններ. մեկը՝ Ատլանտյան օվկիանոսի տարածաշրջանում՝ Վեստ-Հնդկական, մյուսը՝ Հնդկական օվկիանոսի տարածաշրջանում առևտուր կատարելու համար՝ Օստ-Հնդկական ընկերությունը: Օստ-Հնդկական ընկերության նախնական կապիտալը կազմում էր 6մլն. լիվր, որն այնուհետև հասնում է 15 մլն. լիվրի: Այդ 15 մլն. լիվր կապիտալի 3 մլն.-ը ներդրել էր թագավորական արքունիքը, մնացած գումարը՝ քաղաքները, ազնվականությունը: Ֆրանսիական Օստ-Հնդկական ընկերությունը ղեկավարում էր թագավորական կառավարությունը: Հիմնադրումից կարճ ժամանակ անց ֆրանսիական Օստ-Հնդկական ընկերությունը 1668թ. հիմնում է իր առաջին ֆակտորիան Արևմտյան Հնդկաստանում՝ Սուլաթում: 1674թ. ֆրանսիական Օստ-Հնդկական ընկերությունը հաստատվում է Հնդկաստանի արևելյան ափին՝ ձեռք բերելով Պոնդիշերի նավահանգիստը: Ֆրանսիական այդ առաջին տիրույթից հետո, որը 1701թ. դառնում է Հնդկաստանում ֆրանսիական տիրույթների կենտրոնը, ձեռք են բերվում նաև Մաե, Կարիկալ տիրույթները, ինչպես նաև 1688 թ. Չանդեռնագործ Բենգալիայում:

1719 թ. ֆրանսիական Օստ-Հնդկական ընկերությունը միանում է ձեռներեց Զոն Լոռի ստեղծած Հնդկական ընկերությանը, որն էլ մոնոպոլացնում է ֆրանսիայի ամբողջ անդրծովյան առևտուրը:

Հնդկաստանում ֆրանսիական գաղութարարներին է պատկանում 1740 թ. տեղացի բնակչությունից զորքեր կազմակերպելու և իրենց գաղութային շահերին ծառայեցնելու նախաձեռնությունը: Այդ զորքերը կոչվեցին սիփահիական գնդեր, որոնք կազմվում էին պայմանագրային հիմունքներով: Ֆրանսիացիների օրինակով 1746 թ. սիփահիական զորքեր սկսեցին կազմակերպել նաև անգլիացի գաղութարարները:

Շուտով Հնդկաստանում գաղութային մրցակցություն է սկսվում Անգլիայի և Ֆրանսիայի միջև: Այդ գաղութային մրցակցությունը, որ մղվում էր ոչ միայն Հնդկաստանում, մասնավորապես բռնկվում էր

համաեվրոպական պատերազմների ժամանակ, երբ Անգլիան, օգտվելով Եվրոպայում ծավալվող պատերազմներում Ֆրանսիայի զբաղվածությունից, իր ռազմածովային հզոր նավատորմով զավթում էր Ֆրանսիական գաղութներն աշխարհի տարբեր տարածաշրջաններում, ինչպես նաև Հնդկաստանում: Անգլո-Ֆրանսիական այդպիսի գաղութային պայքար է բորբոքվում 1740-1748 թթ. համաեվրոպական պատերազմում, որը հայտնի է «Պատերազմ ավստրիական ժառանգության համար» անունով: Սակայն անգլո-ֆրանսիական գաղութային մրցակցությունն իր վերջաբանին է հասնում 1756-1763 թթ. Եվրոպայում տեղի ունեցած Յոթնամյա պատերազմի հետևանքով: Այդ պատերազմում պարտված Ֆրանսիան 1763 թ. փետրվարի 13-ին Փարիզում կնքած հաշտությամբ իր գաղութային տիրույթների մեծ մասը զիջում է Անգլիային: Ֆրանսիան Հնդկաստանում պահում է միայն հինգ առափնյա տիրույթներ, որոնցից էին՝ Պոնդիշերին, Չանդեռնագոր, Մաեն, Կարիկալը և Յանաոնը: Այդպես ֆեռդալա-միապետական Ֆրանսիան Հնդկաստանի համար մղած գաղութային պայքարում պարտություն է կրում բուրժուական Անգլիայից: Հնդկաստանում իր տիրույթները կորցնելու հետևանքով ֆրանսիական Օստ-Հնդկական ընկերությունը ի վերջո լուծարվում է 1769 թ.: Ինչ վերաբերում է ֆրանսիական հիշյալ տիրույթներին, ապա դրանք 1954 թ. միացվում են Հնդկաստանին:

Փաստորեն, Յոթնամյա պատերազմի հետևանքով անգլիական Օստ-Հնդկական ընկերությունը առևտրական տերությունից վերածվում է ռազմական և տարածքային տերության: Հենց Յոթնամյա պատերազմի հետևանքով էլ հիմք է դրվում Բրիտանական գաղութային կայսրությանը Արևելքում:

Յոթնամյա պատերազմի ընթացքում Օստ-Հնդկական ընկերությունը ձեռնարկում է Հնդկաստանի հյուսիսարևելյան իշխանապետություններից Բենգալիայի գաղութացումը: 18-րդ դարի կեսերին Բենգալիայն ուներ մոտ 30 մլն. բնակիչ և հնդկական

հարուստ իշխանապետություններից էր՝ տուժած չլինելով ֆեռդալական երկպառակություններից: 1756 թ. Օստ-Հնդկական ընկերությունը, որի կենտրոնն էր Կալկաթան, պատերազմ է հրահրում Բենգալիայի նավաբի դեմ: 1757 թ. հունիսի 23-ին՝ Պլեսսիի մոտ տարած հաղթանակից հետո Օստ-Հնդկական ընկերությունը իրեն է ենթարկում Բենգալիայի իշխանապետությանը, որի գրավումով մեծանում են նրա նյութական հնարավորությունները: Միայն 1757-1765 թթ. ընթացքում Բենգալիայի իշխանապետության գանձարանից անգլիացիները հափշտակում են 5 մլն. 260 հազ. ֆ. ստեղծնագ:

1765 թ. Օստ-Հնդկական ընկերությունը Մեծ Մողոլից ստանում է Բենգալիայում ֆինանսահարկային քաղաքականության, քաղաքացիական գործեր վարելու իրավասության և բանակ պահելու արտոնագիր: Իշխանապետության նավաբի իրավասությունը պետք է տարածվեր միայն քրեական բնույթի գործերի վրա:

Բենգալիայի նվաճումից հետո Կալկաթան դառնում է Անգլիա արտահանվող ապրանքների, իսկ 1773 թվականին՝ անգլիական գաղութային տիրույթների կենտրոնը Հնդկաստանում: 1774 թ. Օստ-Հնդկական ընկերությունը Բենգալիայում ստեղծում է ֆինանսահարկային և վարչական կառավարման սեփական համակարգը: Իշխանապետության նավաբները վերածվում են Օստ-Հնդկական ընկերության բարձրագույն պաշտոնյաների: 1774 թ. Բենգալիան փաստորեն վերածվում է անգլիական գաղութային վարչության կողմից կառավարվող երկրամասի:

Բենգալիայում Օստ-Հնդկական ընկերությունը կրկնապատկում է հողահարկը՝ ուժեղացնելով գյուղացիության շահագործումը: Այսպես. եթե 1765 թ. հողային հարկից ստացած Օստ-Հնդկական ընկերության գուտ եկամուտը կազմում էր 15 մլն. ռուփի, ապա տասը տարի անց այն կրկնապատկվելով՝ հասնում է 30 մլն. ռուփիի: Ընկերությունը իր մենաշնորհն է հաստատում Բենգալիայի

արտաքին առևտրում, նաև աղի ու օփիումի վաճառքում: Գաղութային բազմաբնույթ շահագործման ու բացահայտ թալանի հետևանքով Օստ-Հնդկական ընկերությունը 1757 թվականից մինչև 1780 թվականը միայն Բենգալիայից արտահանում է 12 մլն. ֆունտ ստեռլինգի տարատեսակ ապրանքներ: Ինչ վերաբերում է գաղութացված Հնդկաստանի անգլիական տիրույթների շահագործումից ստացված Օստ-Հնդկական ընկերության ուղղակի եկամուտներին, ապա 1757 թվականից մինչև 1812 թվականը դրանք հասնում են ավելի քան 100 մլն. ֆունտ ստեռլինգի: Գաղութային անխնա շահագործման հետևանքով 1769-1770 թթ. Բենգալիայում սովամահության է ենթարկվում մոտ 10 մլն. մարդ, այսինքն՝ իշխանապետության հնդիկ բնակչության 1/3-ը:

ՀՆԴԿԱՍՏԱՆԻ ԳԱՂՈՒԹԱՑՈՒՄԸ ԱՆԳԼԻԱՅԻ ԿՈՂՄԻՑ ՅՈԹՆԱՄՅԱ ՊԱՏԵՐԱԶՄԻՑ ՀԵՏՈ (ՄԻՆՉԵՎ 18-ՐԴ ԴԱՐԻ ՎԵՐՋԸ)

1756-1763 թթ. Յոթնամյա պատերազմից հետո Օստ-Հնդկական ընկերությունը շարունակում է Հնդկաստանի նվաճումը և գաղութացումը: 1764 թ. հոկտեմբերի 22-ին Առողի իշխանապետության Բուքսար քաղաքի մոտ Օստ-Հնդկական ընկերության բանակը պարտության է մատնում Բենգալիայի նախկին նավաբի և նրա դաշնակիցների միացյալ բանակներին, իսկ 1765 թ. մայիսին՝ Առողի նավաբին և նրա դաշնակիցներին: Այդ հաղթանակների հետևանքով Օստ-Հնդկական ընկերությունն իր տիրապետությունն է հաստատում Բենարեսի և Առողի իշխանապետությունների վրա՝ Հնդկաստանի Հյուսիս-Արևելքում ավարտելով Բենգալիայի, Բիհարի և Օրիսի հպատակեցումը:

Բենգալիայի նվաճումից հետո՝ 1767 թ. մինչև 1799 թ. Օստ-Հնդկական ընկերությունը չորս պատերազմներ է մղում

Հնդկաստանի հարավում գտնվող Մայսուրի իշխանապետությունները գրավելու համար: Այդ պատերազմների ընթացքում 1798 թ. Օստ-Հնդկական ընկերությունը վասալական կախվածության է ենթարկում Հայդարաբադի իշխանապետությանը: 18-րդ դարի երկրորդ կեսին Հնդկաստանում մղած գաղութային պատերազմների հետևանքով Բենգալիան՝ հարակից իշխանապետություններով՝ Բիհարով, Օրիստվ և Աուդով, ինչպես նաև ամբողջ Հարավային Հնդկաստանը՝ Հայդարաբադով և Մայսուրի իշխանապետություններով, վերածվում են անգլիական գաղութի: Միաժամանակ Օստ-Հնդկական ընկերությունը պատերազմ է մղում Հոլանդիայի դեմ, որի հետևանքով 1795-1796 թթ. անգլիացիները գրավում են Ցեյլոն կղզին՝ 1802 թ. այն վերածելով առանձին գաղութի: Ցեյլոնի կորստից երկու տարի անց՝ 1798 թ., հոլանդական Օստ-Հնդկական 500 բաժնետերերից բաղկացած ընկերությունը լուծարվում է, իսկ նրա գաղութային տիրույթները և ֆինանսական միջոցները դառնում են պետության սեփականությունը: Ինչ է վերաբերում է Անգլիայի գաղութացրած Ցեյլոն կղզուն, ապա 1972 թ. այն հոչակում է իր անկախությունը՝ Շրի Լանկա (Առյուծի կղզի) հնագույն անունով:

ՀՆԴԿԱՍՏԱՆԻ ԳԱՂՈՒԹԱՑՄԱՆ ԱՎԱՐՏԸ ԱՆԳԼԻԱՅԻ ԿՈՂՄԻՑ **(ՄԱՐԱՏՀԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐԻՑ ՄԻՆՉԵՎ 1849 Թ.)**

18-րդ դարի վերջին 30-ամյակում Օստ-Հնդկական ընկերությունը միաժամանակյա պատերազմներ էր մղում Կենտրոնական Հնդկաստանի Մարատհական իշխանապետությունները նվաճելու համար: Այդ նպատակով 1775-1818 թթ. մղվում են երեք պատերազմներ: Այդ պատերազմների ընթացքում անգլիացիները 1803 թ. գրավում են նաև Մողոլական

կայսրության մայրաքաղաք Դելին: Այդ պատերազմների հետևանքով Օստ-Հնդկական ընկերությունը նվաճում է Կենտրոնական Հնդկաստանը՝ Արաբական ծոցից մինչև Բենգալյան ծոց՝ Մողոլական կայսրության Դելի մայրաքաղաքով: Միաժամանակ Օստ-Հնդկական ընկերությունը 1814-1816 թթ. պատերազմ է մղում Նեպալի թագավորության դեմ, որի հետևանքով այդ պետության մի շարք տարածքներ միացվում են Հնդկաստանին: Նեպալի մայրաքաղաք Կատմանդուում հաստատվում է անգլիական ռեզիդենտը: Օստ-Հնդկական ընկերությունն իր վերահսկողությունն է սահմանում Նեպալի արտաքին հարաբերությունների վրա:

Օստ-Հնդկական ընկերությունը 1824-1826 թթ. պատերազմ է մղում նաև Բիրմայի դեմ, որի հետևանքով այդ երկրի որոշ տարածքներ նույնացն անջատվում և միացվում են Հնդկաստանին: Բիրման պարտավորվում էր Օստ-Հնդկական ընկերությանը վճարել 1մլն. ֆունտ ստեղնագով ռազմատուգանք և թույլ տալ անգլիական ռեզիդենտին հաստատվելու մայրաքաղաք Ռանգունում: Անգլիան ստանում էր ազատ առևտրի իրավունք, իսկ մինչև 50 տ. ջրատարողությամբ անգլիական առևտրանավերը ազատվում էին մաքսատուրքերից: Անգլիացիները հետագայում ևս երկու պատերազմ են մղում Բիրմայի դեմ, որի արդյունքում 1886 թ. Բիրման վերջնականացն գաղութացվում և միացվում է Հնդկաստանին, իսկ 1937 թ. վերածվում է բրիտանական առանձին գաղութի (1948 թ. հունվարին հոչակվում է Բիրմայի անկախությունը: 1989 թ. Բիրման ստանում է Մյանմա՝ «Բիրմական միություն» անունը): Միաժամանակ Օստ-Հնդկական ընկերությունը շարունակում է պատերազմները հոլանդացիների դեմ: Հետևանքը լինում է այն, որ 1824 թ. հոլանդացիները հեռանում են Հնդկաստանից՝ հօգուտ Անգլիայի հրաժարվելով իրենց հնդկական տիրույթներից:

Շարունակելով Հնդկաստանի գաղութացում՝ 1843 թ. անգլիացիները նվաճում են Ինդոս գետի ստորին մասում գտնվող Սինդ երկրամասը՝ այն միացնելով Բոմբեյի պրեզիդենտությանը (1947 թ. Սինդը մտնում է Պակիստանի կազմի մեջ): Վերջապես 1845-1846 և 1848-1849 թթ. պատերազմների հետևանքով Օստ-Հնդկական ընկերությունը նվաճում է Հնդկաստանի հյուսիսարևմտյան մասում դեռևս անկախ մնացած վերջին տարածքը՝ Սիկիերի պետությունը Փենջաբում: Այդպիսով, 1849 թ. լիովին և վերջնականապես ավարտվում է Հնդկաստանի նվաճումը և գաղութացումը Օստ-Հնդկական ընկերության կողմից: Մողոլական կայսրը, որը վաղուց գրկվել էր իրական իշխանությունից, վերածվում է իրավագուրկ մարիոնետի: Օստ-Հնդկական ընկերությունը Մողոլական կայսրին նշանակում է տարեկան 120.000 ֆունտ ստեղծինգ դրամաթոշակ: Իրականում, Մողոլական կայսեր իշխանությունը չէր տարածվում Դելիի պալատի սահմաններից այն կողմ:

ԱՆԳԼԻԱՅԻ ԳԱՂՈՒԹԱՅԻՆ ՎԱՐՉԱԿԱՐԳԸ ՀՆԴԿԱՍՏԱՆՈՒՄ (ՄԻՆՉԵՎ 1858 Թ.)

1600 թվականից մինչև 1773 թվականը Հնդկաստանի անգլիական գաղութային տիրույթները Գլխավոր դիրեկտորի ղեկավարությամբ կառավարում էր Օստ-Հնդկական ընկերության 24 դիրեկտորներից բաղկացած Լոնդոնի կոմիտեն: Օստ-Հնդկական ընկերության այդ ղեկավար մարմինն ընտրվում էր մեկ տարի ժամկետով՝ ֆինանսական ավագանու բաժնետերերի ընդհանուր ժողովում: Իր հիմնադրումից հետո՝ 17-րդ դարի երկրորդ կեսին, Օստ-Հնդկական ընկերությունը պառամենտից և կառավարությունից ստանում է սեփական բանակ և նավատորմ ունենալու, դրամ հատելու, ռազմադաշտային դատարաններ

հիմնելու, պատերազմ հայտարարելու և հաշտություն կնքելու իրավունք: Օստ-Հնդկական ընկերությունը, այդպիսով, ստանում է պետական իշխանության մի շարք առանձնաշնորհներ (պրեռոգատիվներ) և վերածվում հնդկական գաղութային տիրույթները կառավարող պետական կազմակերպության:

Օստ-Հնդկական ընկերությունը նշանակալիորեն ուժեղանում է, երբ 1708 թ. ձուլվում է 1698 թ. առաջացած նոր Օստ-Հնդկական ընկերության մեջ: Այդ ընկերության կապիտալները գնալով մեծանում են: Այսպես 1760 թ. Օստ-Հնդկական ընկերության կապիտալն արդեն հասնում է 12 մլն. ֆունտ ստեղնագի, որից զուտ եկամուտը՝ 5 մլն. ֆունտ ստեղնագի: Սակայն, պաշտոնապես հրապարակված տվյալները իրականում չեն արտահայտում Օստ-Հնդկական ընկերության եկամուտները: Այնուամենայնիվ, Հնդկաստանի անխնա գաղութային թալանը և շահագործումը կարևորագույն հիմք է հանդիսանում Անգլիայում կապիտալի նախակազմական կուտակման համար:

Մինչև 18-րդ դարի 70-ական թթ. Օստ-Հնդկական ընկերության վարչական կենտրոնները Հնդկաստանում գտնվում էին Կալկաթայում, Բոմբեյում և Մադրասում: Այդ երեք քաղաքներից յուրաքանչյուրն իր հարակից շրջաններով կազմում էր մեկ պրեզիդենտություն (վարչական միավոր): Յուրաքանչյուր պրեզիդենտություն կառավարում էին Օստ-Հնդկական ընկերության Լոնդոնի դիրեկտորների կոմիտեի նշանակած նահանգապետը և նրան կից պաշտոնյաների խորհուրդը: Երեք պրեզիդենտություններից յուրաքանչյուրում քաղաքական և ռազմական իշխանությունն ինքնուրույն էր, բայց այդ երեք պրեզիդենտությունները անմիջականորեն ենթարկվում էին Օստ-Հնդկական ընկերության Լոնդոնի դիրեկտորների կոմիտեին: Օստ-Հնդկական ընկերության դեկավար մարմինը՝ Լոնդոնի դիրեկտորների կոմիտեն, ստորաբաժանվում էր մասնագիտական հանձնախմբերի, որոնցից յուրաքանչյուրը երեք

պրեգիդենտությունների նահանգապետերին էր առաքում մանրամասն ցուցումներ և կարգադրություններ, որոնցով նրանք պետք է առաջնորդվեին գաղութային քաղաքականության բոլոր կարևորագույն խնդիրներն իրականացնելու համար։ Պրեգիդենտությունների նահանգապետերն իրավունք ունեին ինքնուրույն գրագրություն ունենալու Լոնդոնի դիրեկտորների կոմիտեի հետ, պարտավոր էին իրենց հաշվետվությունները կամ պատասխաններն ուղարկել դեկավար մարմնի շրջաբերականներին։

Յուրաքանչյուր պրեգիդենտությունում նահանգապետը և նրա վարչակազմը հենվում էր ռազմական ուժի վրա։ Պրեգիդենտությունում տեղական բնակչության նկատմամբ դատական իշխանությունը, հարկային քաղաքականությունը իրականացնում էին ընկերության անգլիացի պաշտոնյաները։

Այդպիսին էր Հնդկաստանի անգլիական գաղութային տիրույթների կառավարումը մինչև 1773 թ.։

Հնդկաստանում ռազմական գործողությունների համաձայնեցման, ինչպես նաև պրեգիդենտությունների վրա վերահսկողություն իրականացնելու նպատակով անգլիական պառլամենտը 1773 թ. ընդունում է Հնդկաստանում անգլիական գաղութային տիրույթների կառավարման առաջին օրենքը՝ «Կարգավորող ակտը»։ Այդ օրենքի համաձայն՝ Հնդկաստանում անգլիական բոլոր գաղութային տիրույթների կառավարման համար մտցվում էր գեներալ-նահանգապետի պաշտոնը։ Հնդկաստանում անգլիական գաղութային տիրույթների գեներալ-նահանգապետը միաժամանակ պետք է լիներ նաև Բենգալիայի նահանգապետը։ Գեներալ-նահանգապետի գլխավորությամբ ստեղծվում էր չորս անդամներից՝ «խորհրդականներից» բաղկացած Գործադիր խորհուրդ, որն էլ պետք է կառավարեր անգլիական գաղութային տիրույթները Հնդկաստանում։ Գեներալ-նահանգապետը և նրան ենթակա Գործադիր խորհրդի չորս անդամները անգլիական

կառավարության ներկայացմամբ նշանակվում էին թագավորի կողմից: Այդ չորս խորհրդականներից մեկը պետք է լիներ Օստ-Հնդկական ընկերության պաշտոնյա, իսկ երեքը՝ խորհրդականներ: Առանց գեներալ-նահանգապետի թույլտվության Մադրասի և Բոմբեյի նահանգապետերը չէին կարող պատերազմ մղել և հաշտություն կնքել: Փաստորեն, Հնդկաստանում անգլիական բոլոր գաղութային տիրույթների կառավարումը պետք է իրականացներ գեներալ-նահանգապետը և նրան ենթակա Գործադիր խորհուրդը: Գեներալ-նահանգապետն իրավունք է ստանում պատերազմ հայտարարել, հաշտություն կնքել, պայմանագրեր ստորագրել անգլիական գաղութային տիրույթների սահմանակից երկրների հետ, նրա տրամադրության տակ էին բոլոր զինված ուժերը, դատարանը, հարկային ապարատը:

Մադրասի և Բոմբեյի նահանգապետերը նույնպես պետք է կառավարեին իրենց ենթակա երեք անդամներից բաղկացած Գործադիր խորհրդի միջոցով: Այդ երկու պրեզիդենտությունների նահանգապետերի և նրանց ենթակա Գործադիր խորհուրդների անդամների նշանակումը կատարվում էր նույն ձևով:

Օստ-Հնդկական ընկերության Լոնդոնի դիրեկտորների կոմիտեն, այդ օրենքի համաձայն, պարտավոր էր պետական գանձարան ներկայացնել Հնդկաստանի հետ կատարած իր բոլոր գործությունները: Այնուհետև ընկերության առևտրական գործունեությունը տրվում էր առևտրական պալատին: Այդպիսով, 1773 թ. առաջին պառլամենտական օրենքով անգլիական կառավարությունն իր վերահսկողությունն էր սահմանում Հնդկաստանում Օստ-Հնդկական ընկերության տիրույթների վրա: Նույն՝ 1773 թ. օրենքով Կալկաթայում հիմնվում է անգլիական Գերագույն դատարան, որի իրավասությունը տարածվում էր Օստ-Հնդկական ընկերության բոլոր պաշտոնյաների վրա:

1784 թ. ընդունվում է երկրորդ պառլամենտական օրենքը, ըստ որի՝ Օստ-Հնդկական ընկերության Լոնդոնի դիրեկտորների

կոմիտեն Ենթարկվում էր վեց հոգուց բաղկացած Վերահսկիչ խորհրդի և նրա նախագահի վերահսկողությանը: Վերահսկիչ խորհրդի նախագահը և նրա Ենթակաները, դարձյալ կառավարության ներկայացմամբ, նշանակվում էին թագավորի կողմից: Վերահսկիչ խորհրդի նախագահը միաժամանակ դառնում էր կառավարության անդամ: Ստեղծվում էր նաև Վերահսկիչ խորհրդին Ենթակա Օստ-Հնդկական ընկերության երեք տնօրեններից բաղկացած Գաղտնի խորհուրդ:

Վերահսկիչ խորհուրդը պետք է վերահսկեր Օստ-Հնդկական ընկերության գործունեությունը և ուղղորդեր անգլիական կառավարության գաղութային քաղաքականությունը Հնդկաստանում: Վերահսկիչ խորհուրդը աստիճանաբար սկսում է վերածվել Հնդկաստանի գործերով գերատեսչության: Փաստորեն Հնդկաստանում Անգլիայի գաղութային քաղաքականության ղեկավարն է դառնում Վերահսկիչ խորհրդի նախագահը: Այնուամենայնիվ, պահպանվում է Օստ-Հնդկական ընկերության ղեկավար մարմինը՝ Լոնդոնի դիրեկտորների կոմիտեն, որն իրավունք ուներ նշանակելու Հնդկաստանում իր քաղաքացիական և զինվորական պաշտոնյաներին, իրականացնելու գաղութային տիրույթների ընթացիկ կառավարումը: Օստ-Հնդկական ընկերությունը շարունակում է դեռևս պահպանել Հնդկաստանի և Չինաստանի հետ մենաշնորհային առևտորի իրավունքը: Այդպես է ստեղծվում Հնդկաստանի կառավարման երկակի համակարգը՝ հանձին Վերահսկիչ խորհրդի (կառավարության) և Լոնդոնի դիրեկտորների կոմիտեի:

Հզրացող անգլիական բուրժուազիան սկսում է դժգոհություն արտահայտել Օստ-Հնդկական առևտորական ընկերության մենաշնորհային վիճակից և պահանջում ազատ մուտք ունենալ դեպի հնդկական շուկաները: 1813 թ. պառամենտական օրենքով վերացվում է Հնդկաստանի հետ առևտոր անելու Օստ-Հնդկական ընկերության գրեթե 200-ամյա մենաշնորհային իրավունքը:

Այդպիսով, Հնդկաստանն Օստ-Հնդկական մենաշնորհային առևտրական ընկերության գաղութից վերածվում է արդեն ամբողջ անգլիական բուրժուազիայի շահագործման գաղութի: Սակայն Օստ-Հնդկական ընկերությունը՝ իր վարչական ապարատով, նախկինի պես պահպանում է իր՝ որպես առևտրական հիմնարկի, գոյությունը: Այնուհետև, 1832 թ. առաջին պառամենտական ռեֆորմի հետևանքով իշխանության գլուխ եկած արդյունաբերական բուրժուազիան 1833 թ. պառամենտական նոր օրենքով Օստ-Հնդկական ընկերությանը զրկում է նաև Չինաստանի հետ մենաշնորհային առևտուր անելու իրավունքից: Փաստորեն Օստ-Հնդկական ընկերությունն այլևս դադարում է մենաշնորհային առևտրական կազմակերպություն լինելուց: Բայց, որպես փոխհատուցում, ի հաշիվ Հնդկաստանից ստացվող հարկերի՝ Օստ-Հնդկական ընկերության երկու հազար բաժնետերերի համար սահմանվում են կայուն շահութաբաժիններ: Այնուամենայնիվ, Օստ-Հնդկական ընկերությունը դեռևս չի լուծարվում և պահպանվում է որպես մի կազմակերպություն, որի միջոցով անգլիական գաղութ Հնդկաստանը կառավարվում է մինչև 1858 թ.:

1857-1859 թթ. ՃՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԱՊԱՏԱՄԲՈՒԹՅՈՒՆԸ ՀՆԴԿԱՍՏԱՆՈՒՄ: ՀՆԴԿԱՍՏԱՆԻ ԳԱՂՈՒԹԱՅԻՆ ՎԱՐՉԱԿԱՐԳԸ 1858 թ. ՀԵՏԾՈՒՅՈՒՆ

1845-1846 և 1848-1849 թթ. երկու պատերազմների արդյունքում, վերացնելով Սիկիերի պետությունը Փենջաբում, Անգլիան վերջնականորեն ավարտում է Հնդկական թերակղզու նվաճումը և գաղութացումը: Սակայն հնդիկ ժողովուրդը չի հաշտվում անգլիական գաղութային տիրապետության հետ:

1857 թ. մայիսի 10-ին Շելիից հյուսիս-արևելք գտնվող Միրութ քաղաքում ապստամբում են երեք սիկահիական գնդեր, որոնք

մեկնում են Դելի՝ սկիզբ դնելով Անգլիայի գաղութային տիրապետության դեմ ուղղված ապստամբությանը: Ապստամբության հիմնական կենտրոնն է դառնում Փենջարի և Բենգալիայի միջև գտնվող տարածքը: Ապստամբները հոչակում են Մեծ Մողոլի արքայատոհմի իշխանության վերականգնումը և ստիպում Մեծ Մողոլ Բահադուր շահ II-ին ղեկավարելու ապստամբությունը: Դելիում կայսերական կառավարությանը գրագահեռ ստեղծվում է սիփահիներից ու քաղաքացիներից բաղկացած ապստամբությունը ղեկավարող բարձրագույն վարչական մարմին: Սակայն այդ ապստամբությունն անհաջող ավարտ է ունենում: 1857 թ. սեպտեմբերի 19-ին՝ չորսամսյա պաշարումից հետո, անգլիացիները գրավում են Դելին: Գերված կայսրին դատապարտում են մահվան, բայց դատավճիռը փոխում են ցմահ աքսորով՝ ընտանիքով ուղարկելով Բիրմա՝ Ռանգուն քաղաքը, իսկ արքայատոհմի մյուս անդամներին ոչնչացնում են: Սակայն ապստամբությունը դեռևս շարունակվում էր և դրա վերջին օջախն է լինում Առողջը: 1858 թ. մարտին ապստամբությունը ճնշվում է նաև Առողջում: Ապստամբության պարտության հիմնական պատճառներն էին նաև ֆեոդալական մրցակցող տների դավաճանությունը, ազգային ու կրոնական հակասությունները: Պարտված հնդիկ ժողովրդի վրա անգլիացիները դնում են նոր պետական պարտը՝ 70 մլն. ֆունտ ստեռլինգի չափով:

Դեռևս ապստամբության ընթացքում՝ 1858 թ. օգոստոսի 2-ին, անգլիական պառլամենտն ընդունում է օրենք՝ Հնդկաստանի կառավարումը Օստ-Հնդկական ընկերությունից անգլիական թագին հանձնելու մասին: Այդ օրենքով Հնդկաստանը դառնում էր անգլիական թագի գաղութը, իսկ Օստ-Հնդկական ընկերությունը վերացվում էր: Լուծարվում էր նաև այդ ընկերության ղեկավար մարմինը՝ Լոնդոնի դիրեկտորների կոմիտեն: Օստ-Հնդկական ընկերության ունեցվածքը դառնում է անգլիական կառավարության սեփականությունը, իսկ ընկերության բաժնետերերին հնդկական

բյուջեից, այսինքն՝ հնդիկ հարկատու ժողովրդի հաշվին, տրվում է 3 մլն. ֆունտ ստեռլինգ փոխհատուցում: Նախկին երեք պրեզիդենտությունները նույնպես վերացվում են՝ դառնալով նահանգներ: Օստ-Հնդկական ընկերության գինված ուժերը ձուլվում են կառավարական գինված ուժերի հետ: 1858 թ. նոյեմբերի 1-ին հրապարակվում է Անգլիայի թագուհի Վիկտորիայի հոչակագիրը, որով ինքը հայտարարվում էր Հնդկաստանի կառավարչուհի: Վիկտորիա թագուհին ներում էր շնորհում ապստամբության այն մասնակիցներին, ովքեր չեն մասնակցել անգլիացիների սպանություններին, ինչպես նաև խոստանում էր հարգել նրանց ֆեոդալական սեփականությունն ու իրավունքները:

1857-1859 թթ. ժողովրդական ապստամբության պարտությունից հետո Հնդկաստանը վերածվում է անգլիական գաղութի՝ անմիջականորեն ենթարկվելով անգլիական թագին ու նրա կառավարությանը: Ստեղծված նոր իրավիճակում վերակազմավորման է ենթարկվում Լոնդոնից Հնդկաստանը կառավարող նախկին վարչական համակարգը: 1784 թ. ստեղծված վերահսկիչ խորհուրդը վերակազմվում է՝ դառնալով Հնդկաստանի գործերով խորհուրդ (նախարարություն): Այդ կենտրոնական ղեկավար մարմինը թագուհու անունից գլխավորում է հատուկ պետական քարտուղարը կամ Հնդկաստանի գործերով նախարարը, որը միաժամանակ նաև կառավարության անդամ էր և լիովին անկախ էր 1854 թ. ստեղծված անգլիական գաղութների նախարարությունից: Հնդկաստանի գործերով նախարարին կից ստեղծվում է անգլո-հնդկական բարձրագույն պաշտոնյաներից բաղկացած խորհրդակցական մարմին՝ Հնդկական խորհուրդ: Նշենք, որ արդեն Բենգալիայի նվաճումից հետո Կալկաթան դարձել էր անգլիական տիրույթների կենտրոնը Հնդկաստանում՝ 1854 թ. իրավականորեն դառնալով Հնդկաստանի մայրաքաղաքը:

Ըստ նոր կարգի՝ Հնդկաստանում ամբողջ գաղութային վարչական համակարգի ղեկավարն էր դառնում գեներալ-

Նահանգապետը՝ ստանալով նաև փոխարքայի տիտղոս: Հնդկաստանի փոխարքան պատասխանատու էր թագին և Հնդկաստանի գործերով պետական քարտուղարին: Փոխարքան նշանակվում էր թագուհու կողմից հինգ տարի ժամկետով: Փոխարքան Հնդկաստանը կառավարում էր կենտրոնական գործադիր խորհրդի, որի անդամներն էին առանձին գերատեսչությունների ղեկավարները և՝ Օրենսդիր խորհրդի միջոցով, որի մեջ էին մտնում նաև փոխարքայի կողմից նշանակված մի քանի պաշտոնյաներ: Փոխարքան պարտավոր չէր հաշվի առնել իր երկու խորհրդուների կարծիքը: Հնդկաստանի փոխարքան ենթակա էր անգլիական պառլամենտին, որը վերահսկում էր նրա գործունեությունը և կարող էր կասեցնել կամ չեղյալ հայտարարել գեներալ-նահանգապետի ընդունած որոշումներն ու օրենքները և ինքը հրապարակեր օրենքներ:

Հնդկաստանը վարչական առումով բաժանվում է նահանգապետերի: Նահանգապետերի կողմից կառավարվող նահանգների: Նահանգապետերը ենթարկվում էին փոխարքային: Նահանգապետերը նշանակվում էին Հնդկաստանի գործերով նախարարի կամ փոխարքայի կողմից: Նահանգապետերը նույնպես ունեին իրենց Գործադիր և Օրենսդիր խորհուրդները: Փոխարքան օժտված էր կենտրոնական և նահանգային օրենսդիր մարմինների ընդունած որոշումների վրա արգելք (վետո) դնելու իրավունքով: Առանց բացառության՝ բոլոր բարձրագույն վարչական, դատական պաշտոնները զբաղեցնում էին անգլիացիները:

Նահանգներն իրենց հերթին բաժանվում են շրջանների: Շրջանների ղեկավարները միաժամանակ օժտված էին ոստիկանական, դատական և հարկային իշխանությամբ: Շրջանային ղեկավար համակարգի մեջ ընդգրկվում էին նաև գլուղական համայնքների ավագները:

Հնդկաստանում պահպանվում են նաև հնդկական խոշոր իշխանապետությունները, որոնցից էին՝ Հայդարաբադը, Մայսուրը,

որոնք ծևականորեն անկախ պետություններ էին, սակայն այդ անկախ պետությունների իշխանները՝ ռաջաները, ունեին անգլիացի խորհրդական պաշտոնյաներ, որոնք ենթարկվում էին փոխարքային: Այդ խորհրդականները, փաստորեն, իրականացնում էին ծևականորեն անկախ այդ հնդկական իշխանապետությունների կառավարումը: Պարզապես այդ հնդկական երկիրը՝ Հնդկաստանը, կառավարվում էր անգլիացի փոխարքայի անձնական դիկտատուրայով: Այնուամենայնիվ, անգլիական գաղութային վարչակարգին հարկավոր էր ստորադաս պաշտոններում ընդգրկել նաև հնդիկներին, ուստի անհրաժեշտություն է առաջանում եվրոպական կրթությամբ մասնագետներ պատրաստել տեղացի բնակիչներից: Այդ նապատակով 1857 թ. անգլիական համալսարաններ են բացվում Կալկաթայում, Բոմբեյում և Մադրասում: Բացվում են նաև մասնագիտական բնույթի բոլեցներ:

ԱՆԳԼԻԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳԱՂՈՒԹԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀՆԴԿԱՍՏԱՆՈՒՄ

19-ՐԴ ԴԱՐԻ ՎԵՐՋԻՆ 30-ԱՄՅԱԿՈՒՄ ԵՎ 20-ՐԴ ԴԱՐԻ ՍԿԶԲԻՆ

19-րդ դարի 70-ական թթ. Հնդկաստանն արդեն լիովին հպատակեցված էր Անգլիային՝ դառնալով նրա իրավագուրկ գաղութը: 1877 թ. հունվարի 1-ին Դելիում մեծ հանդիսավորությամբ Վիկտորիա թագուհին թագադրվում է Հնդկաստանի կայսրուհի:

Գաղութացված Հնդկաստանը վերածվում է անգլիական արդյունաբերական ապրանքների ընդարձակ շուկայի, հումքի անսպառ աղբյուրի, կապիտալների ներդրման ոլորտի, ինչպես նաև Անգլիային գյուղատնտեսական մթերքներ մատակարարողի: 19-րդ դարի երկրորդ կեսին Հնդկաստանում ներդրված կապիտալը 4 մլն. ֆունտ ստենինգից դարավերջին հասնում է 133 մլն. ֆունտ

ստեղինգի: Այդ փոխառությունները տրվում էին անգլիական գաղութային վարչակազմը և բանակը պահելու համար: Կապիտալների ներդրման մյուս ոլորտը երկաթուղային ցանցն էր և ոռոգման համակարգը, նաև արդյունաբերական բնագավառը: Դարավերջին Հնդկաստանի երկաթուղային ցանցը հասնում է 27 հազար կմ-ի: Բայց այդ երկաթուղագծերը կառուցվում էին նպատակադրված կերպով՝ նավահանգիստներից դեպի երկրի խորքերը: Այդ փոխառությունների հետևանքով Հնդկաստանի պարտքը 19-րդ դարի վերջին հասնում է 1,5 մլրդ. ռուփիի: Գաղութային շահագործման հետևանքով 19-րդ դարի երկրորդ կեսին մահանում է ավելի քան 30 մլն. մարդ:

Հնդկաստանը վերածելով հումքի անսպառ աղբյուրի, վաճառահանման ընդարձակ շուկայի և կապիտալների ներդրման ոլորտի անգլիական բուրժուազիան ակամա նպաստում էր այդ հսկայածավալ գաղութում կապիտալիստական հարաբերությունների, ազգային բուրժուազիայի ու բանվոր դասակարգի առաջացմանը և զարգացմանը: Միաժամանակ Հնդկաստանի ազգային տարբեր շրջանների և երկրամասերի միջև տնտեսական կապերի ընդլայնումը, ներքին շուկայի ձևավորումը մեծապես նպաստում էր թերակղու ժողովուրդների համախմբմանը և, որպես ազգերի, կազմավորմանը: Բայց քանի որ հնդկական ազգային կապիտալիզմը զարգանում էր անգլիական տնտեսական ու քաղաքական գաղութային տիրապետության պայմաններում, ուստի աստիճանաբար լուրջ հակասություններ են առաջանում ձևավորվող հնդկական ազգային բուրժուազիայի և իշխող անգլիացի գաղութարարների միջև: Սեփական ազգային շուկան յուրացնելու, տնտեսական անկաշկանդ գործունեություն ծավալելու համար հնդկական ազգային բուրժուազիան պետք է պայքարեր երկրի գաղութային վարչակարգը վերացնելու և Հնդկաստանի քաղաքական անկախությունը նվաճելու համար:

Հնդկաստանի քաղաքական անկախության կրողն ու արտահայտիչն է դառնում հնդկական ազգային մտավորականությունը, որը եվրոպական կրթություն էր ստացել հայրենիքում գործող անգլիական համալսարաններում կամ արտասահմանում, հիմնականում՝ Անգլիայում: Այդ ազգային մտավորականության միջավայրում են ծնվում հնդկական լուսավորիչները և բարենորոգիչները՝ անկախության պայքարի ղեկավարները:

1885 թ. դեկտեմբերի 28-ին Բոմբեյում աշխատանքներն է սկսում հնդկական խոշոր քաղաքական կուսակցության հիմնադիր համագումարը՝ Համահնդկական ազգային կոնգրեսը: Այդ կոնգրեսի պատգամավորների կեսը ներկայացնում էին բարձրագույն մտավորականները, իսկ մյուս կեսը՝ արդյունաբերողները, առևտրականները, կալվածատերերը: Սակայն, այդ համագումարը չի ընդունում հստակ ծրագրային պահանջներ: Հետագայում՝ 1895 թ. դեկտեմբերին, ընդունվում է Հնդկական ազգային կոնգրես կուսակցության կանոնադրությունը, որտեղ առաջ էր քաշվում Հնդկաստանի ինքնավարության հարցը: Ինքնավարության ձեռքբերման համար առաջանում են երկու հոսանքներ. մեկը՝ սահմանադրական, խաղաղ ճանապարհն էր, որն աջ ուղղությունն էր, իսկ մյուսը՝ ձախ հոսանքը՝ Թիլակի գլխավորությամբ, հանդես էր գալիս անկախություն ձեռք բերելու պայքարի ճանապարհով: Անկախության համար խմորվող ազգային-ազատագրական շարժումը անհանգստացնում է անգլիական գաղութային վարչակարգին, որը հարկադրված էր սահմանափակ բնույթի բարեփոխումներ անցկացնել Հնդկաստանում: 1882 թ. օրենքով խոշոր քաղաքներում և որոշ շրջաններում ստեղծվում են տեղական ինքնակառավարման մարմիններ, բայց իրական իշխանությունը շարունակում էր մնալ անգլիացի քաղաքապետերի իրավասության ներքո: Գյուղերում ստեղծվում են ընտրովի մարմիններ, որոնց ընտրություններին մասնակցում էին միայն կալվածատերերը:

Գեներալ-նահանգապետի և նահանգապետերի վարչական մարմիններին անդամակցում են հնդիկներ: 20-րդ դարի սկզբին Հնդկաստանի գործերով Լոնդոնի խորհրդում ընդգրկվում են երկու հնդիկներ: 1909 թ. օրենքով հնդիկ ներակայացուցիչներով ընդլայնվում են գեներալ-նահանգապետի և նահանգապետերի օրենսդիր խորհուրդները: Սակայն անգլիական գաղութային իշխանություններն այդ խորհուրդներում գերապատվությունը տալիս էին մուսուլման հնդիկների մասնակցությանը: Հնդիկ մտավորականության ներակայացուցիչները հնարավորություն են ստանում զբաղեցնելու երկրորդական կարգի պաշտոններ, իսկ բոլոր բարձրագույն պաշտոնները վերապահվում էին միայն գաղութային վարչակարգի համար մասնագիտական հատուկ կրթություն ստացած անգլիացիներին: 1911 թ. Հնդկաստանի մայրաքաղաքը Կալկաթայից տեղափոխվում է Դելի: Սակայն այդ սահմանափակ բնույթի փոփոխությունները չեն կարող լուծել հարցի քաղաքական կողմը՝ Հնդկաստանի ինքնավարության հարցը: Ի վերջո, Հնդկաստանը, քաղաքական երկարատև պայքարից հետո անկախություն է ստանում 1947 թ. օգոստոսի 15-ին: Սակայն անգլիական քաղաքականության հետևանքով Հնդկական թերակղզին, ըստ կրոնական սկզբունքի, բաժանվում է երկու պետությունների՝ հինդուստական Հնդկաստանի և մուսուլմանական Պակիստանի:

ОФСИФЛРЧИԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Антонова К. А., *Очерки общественных отношений и политического строя Могольской Индии времен Акбара (1556-1605 гг.)*, изд. Академия наук СССР, М., 1952.

Антонова К. А., *Английское завоевание Индии в XVIII в.*, изд. Восточной литературы, М., 1958.

Антонова К. А., *История Индии.*, изд. «Мысль», М., 1979.

Бэмбер Гаскойн, *Великие Моголы. Потомки Чингисхана и Тамерлана*, изд. Центрполиграф, М., 2003.

Всемирная история, т. IV, Соцэkgиз, М., 1958.

- Великие географические открытия, с. 84-102.
- Государство Великих Моголов в Индии, с. 602-617.
- Колониальная политика европейских держав и создание колониальных империй, с. 696-709.

Всемирная история, т. V, Соцэkgиз, М., 1958.

- Распад империи Великого Могола и завоевание Индии англичанами, с. 265-296.
- Итоги колониальной политики европейских держав к концу XVIII, с. 339-355.

Всемирная история, т. VI, Соцэkgиз, М., 1959.

- Завершение завоевания Индии англичанами. Борьба народов Индии против английского вторжения, с. 291-303.
- Народное восстание в Индии в 50-х годах XIX в., с. 404-418.

Всемирная история, т. VII, Соцэkgиз, М., 1960.

- Сопротивление народов Китая, Индии и Кореи колониальному гнету капиталистических держав. Народное восстание ихэтуаней, ч. 2, Индия, с. 268-275.

Из истории английской Ост-Индской компании первой половины XVII в., Иркутский госунт. им. А. А. Жданова, Иркутск, 1971.

История дипломатии, т. I, под ред. В. А. Зорина и др., Госполитиздат, М., 1959.

- Роль дипломатии в британском завоевании и колониальном угнетении Индии, с. 596-606.

Касты в Индии. Сб. статей, отв. ред. Г. Г. Котовский, изд. «Наука», М., 1965.

Козлова М. Г., Английское завоевание Бирмы, изд. «Наука», М., 1972.

Кунин К., Васко да Гама, изд. «Молодая гвардия», М., 1947.

Народное восстание в Индии. 1857-1859 гг. Сборник статей к столетию восстания, изд. Восточной литературы, М., 1957.

Новая история Индии, изд. Восточной литературы, М., 1982.

Новая история стран Азии и Африки, изд. «Наука», М., 1982.

- Кризис и распад империи Великих Моголов. Начало превращения Индостана в английскую колонию, с. 36-62.
- Завершение завоевания и колониальная эксплуатация народов Индостана в первой половине XIX в., с.106-122.
- Народное восстание в Индии в 1857-1859гг., с. 123-135.
- Усиление колониальной эксплуатации и освободительная борьба народов Индии, с. 282-295.
- Революционный подъем 1905-1908 гг. в Индии, с. 458-472.

Олтержевский В. П., Английская Ост-Индская компания в XVII веке, изд. Иркутск. ун-та, Иркутск, 1988,

Осипов А. М., Великое восстание в Индии 1857 – 1859, Учпедгиз, М., 1957.

Павлов В. И., Формирование индийской буржуазии, изд. Восточной литературы, М., 1958.

Паникар К. М., Очерк истории Индии, пер. с англ., Соцэкгиз, М., 1961.

Синха Н. К., Банерджи А. Ч., История Индии, пер. с англ., изд. Иностранной литературы, М., 1954.

Харт Г., Морской путь в Индию, пер. с англ., Географгиз, М., 1959.

Холл Д., История Юго-Восточной Азии, Иноиздат, М., 1958.

ԶԻՆԱՍՏԱՆԸ ՄԱՆՋՈՒՐԱԿԱՆ «ՅԻՆ» (ՄԱՔՈՒՐ)

ԱՐՔԱՅԱՏՈՀՄԻ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ

(1644-1911 ԹԹ.)

1628-1645 ԹԹ. ԳՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ ԶԻՆԱՍՏԱՆՈՒՄ ԵՎ ՄԱՆՋՈՒՐԱԿԱՆ «ՅԻՆ» ԱՐՔԱՅԱՏՈՀՄԻ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ

16-րդ դարի երկրորդ կեսին և 17-րդ դարի առաջին կեսին Զինաստանում առաջացել էին կապիտալիստական տնտեսական հարաբերությունների առաջին սաղմերը: Յանցզի գետի ստորին հոսանքի առավել զարգացած տնտեսական շրջաններում, ինչպես նաև Զինաստանի հարավարևելյան ծովափնյա շրջաններում տեղի էր ունեցել քաղաքների աճ, զարգացել էր տնայնագործական արդյունաբերությունը, առաջացել էին մասնավոր մանուֆակտուրաներ և առևտրական ընկերություններ: Բայց տիրապետող ֆեոդալական հարաբերությունները խոչընդոտում էին կապիտալիստական տնտեսական հարաբերությունների զարգացմանը: Ֆեոդալներն ուժեղացնում էին գյուղացիության շահագործումը, որն առաջացնում էր դասակարգային պայքար՝ հանգեցնելով գյուղացիական հակաֆեոդալական հզոր ապստամբությունների: Այդպիսի հակաֆեոդալական հզոր ապստամբություն է բռնկվում Զինաստանում 1628 թ., երբ արդեն 1618 թ. Զինաստանի վրա էին հարձակվում մինչև 1609 թ. վասալական կախվածության մեջ գտնվող մանջուրական ցեղերը: Մանջուրական ցեղերը, որոնք հայտնի էին նաև չժուրչեններ անունով, բնակվում էին ժամանակակից Զինաստանի հյուսիսարևելյան մասում: Այդ ցեղերը միավորվում են իրենց առաջնորդ Նուրիացիի (1583-1626 թթ.) գլխավորությամբ, որն էլ 1616 թ. իրեն հոչակելով խան՝ սկիզբ է դնում մանջուրական «Յզին» («Ոսկե») արքայատոհմին: Մանջուրներն իրենց ենթարկելով

հարևան ցեղերին և գրավելով հսկայական տարածքներ՝ 1618 թվականից հարձակումներ են սկսում դեպի Զինաստանի ներքին շրջանները: Զինաստանը հայտնվում է ինչպես ներքին, այնպես էլ արտաքին ծանր իրադրության պայմաններում: 1368 թվականից Զինական կայսրությունում իշխող Մին արքայատոհմը հարկադրված էր միաժամանակյա պատերազմներ մղել ինչպես արտաքին հարձակումների, այնպես էլ գյուղացիական հզոր ապստամբությունների դեմ: Շատ հաճախ կառավարական զորքերն անցնում էին ապստամբած գյուղացիների կողմը: 1644 թ. ապրիլի 25-ին, առանց դիմադրության հանդիպելու, գյուղացիական բանակն իր առաջնորդ Լի Ցզի Չենի գլխավորությամբ մտնում է Զինաստանի մայրաքաղաք Պեկին: Գյուղացիական պատերազմի առաջնորդ Լի Ցզի Չենը հոչակվում է կայսր: Մինչև Պեկինի գրավումը Մին արքայատոհմի վերջին կայսրը ինքնասպան է լինում, իսկ արքայատոհմի մնացած անդամները ոչնչացվում են: Այդպիսով, 1644 թ. ապրիլին Մին արքայատոհմը վերանում է պատմության ասպարեզից: Բայց այդ ընթացքում կառավարական հիմնական զորքերը մարտնչում էին Զինաստան ներխուժած մանջուրների դեմ: Սակայն, գյուղացիական պատերազմը ճնշելու համար չինական ֆեոդալների մի մասը անցնում է մանջուրների կողմը: Արդյունքում մանջուրական զորքերին միացած չինական ֆեոդալները, պարտության մատնելով իրենց ընդառաջ եկած 200 հազ. գյուղացիական բանակը, 1644 թ. հունիսի 6-ին, առանց դիմադրության հանդիպելու, մտնում են Պեկին: Այդպիսով, 1644 թ. հունիսին Զինաստանում հաստատվում է Մանջուրական արքայատոհմը, որը 1636 թ. ստացել էր «Ցին» («Մաքուր») անունը: Աստիճանաբար մանջուրները Հյուսիսային Զինաստանից իրենց տիրապետությունն են հաստատում մնացյալ տարածքների վրա՝ 1664 թ. նվաճելով ցամաքային Զինաստանը: 1683 թ. գրավելով Տայվան կղզին՝ մանջուրներն իրենց տիրապետությունն են հաստատում ամբողջ Զինաստանում: Մահվան սպառնալիքի ներքո

չինացի տղամարդիկ որպես հպատակության նշան հարկադրվում են մանջուրների նման իրենց գլուխները սափրել՝ գագաթին թողնելով երկար մազահյուսք:

Նվաճելով ամբողջ Չինաստանը՝ մանջուրները կանգնում են չինական ֆեոդալական պետության գլուխ: Սակայն, լինելով հետամնաց քոչվորներ, նրանք շուտով ընդօրինակում են չինական զարգացած մշակույթը, չինարեն լեզուն, չինական պետական կառավարման համակարգը, դավանանքը, գաղափարական դոկտրինաները, հիմնականում՝ կոնֆուցիական գաղափարախոսությունը: Այդ առումով, մանջուրական ավագանին աստիճանաբար ձուլվում է չինական ավագանուն, բայց, որպես իշխող արտոնյալ դաս, մանջուրները մնում են չինական ֆեոդալական պետության վերին աստիճանի վրա:

ՑԻՆՅԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ: ԴԱՍԵՐԸ, ՔԱՂԱՔՆԵՐԸ, ԱՐՀԵՍՏՆԵՐԸ ԵՎ ԱՌԵՎՏՈՒՐԸ

Նվաճելով Չինաստանը՝ մանջուրներն ընդօրինակում են ֆեոդալական Չինաստանի պետական կառավարման համակարգը: Պետության գլուխ էր կանգնած անսահմանափակ իշխանությամբ օժտված մանջուրական ժառանգական կայսրը՝ բոգդիխանը: Նրան էր ենթարկվում ամբողջ պետական ապարատը: Բոգդիխանին կից բարձրագույն իշխանությամբ էր օժտված ռազմական և քաղաքական վարչությունը, որը հանդես էր գալիս որպես մանջուրական ավագանու Պետական խորհուրդ: Նախարարների կարինետի ֆունկցիաներն իրականացնում էր վեց պալատներից բարկացած պետական գրասենյակը: Մանջուրները Չինաստանը բաժանում են 18 նահանգների, որոնք միավորվում են 10 փոխարքայությունների մեջ: Նահանգներն իրենց հերթին բաժանվում են մարզերի, շրջանների և ավելի փոքր վարչական

միավորների: Ամենացածր վարչական միավորը բաղկացած էր 10 բակից: Յուրաքանչյուր նահանգի գլուխ էին կանգնած բոգդիխանի նշանակած ռազմական և քաղաքացիական նահանգապետերը: Նրանք ենթարկվում էին մի քանի նահանգ ղեկավարող և բարձրագույն ռազմական ու քաղաքացիական իշխանությամբ օժտված փոխարքային: Բոլոր բարձրագույն պաշտոնները տրվում էին մանջուրական արքայատոհմի ներկայացուցիչներին:

Հիմնականում ընդօրինակելով միջնադարյան Զինաստանի պետական կառավարման համակարգը՝ մանջուրական Ցին արքայատոհմը կիրառում է նաև մասնակիորեն փոփոխությունների ենթարկված Մին կայսրության օրենսդրությունը: 1647 թ. ուժի մեջ մտած օրենսգիրքը իրավականորեն ամրագրում էր մանջուրների քաղաքական ու տնտեսական տիրապետող դիրքերը Ցինյան կայսրությունում: Մանջուրների համար ստեղծվում էին հատուկ դատարաններ, բարվոք պայմաններով բանտեր, հիմնականում սահմանվում մեղմ պատիժներ ու պատժաչափեր:

Զինաստանը գրավելուց հետո սկզբնական շրջանում կայսրության բանակը բաղկացած էր միայն մանջուրներից և կազմված էր տարբեր գույների «ութ դրոշներից» (զորամասերից): Հետագայում այդ բանակի մեջ են ներգրավվում նախ մոնղոլները և ապա՝ չինացիները: Նրանք համարվում էին արտոնյալ դասի ներկայացուցիչներ, ստանում դրամական առատ վարձատրություն և օգտվում նաև մեծ արտոնություններից: Հետագայում ստեղծվում է նաև չինացիներից համալրված «կանաչ դրոշի» բանակը: Սակայն այդ բանակի գինվորները շատ ցածր էին վարձատրվում և վատ էին գինված:

Դեռևս միջնադարում Զինաստանում առաջացել էին բազմահազար բնակչությամբ բազմաթիվ քաղաքներ՝: Օրինակ, 1421 թվականից ի վեր մայրաքաղաք դարձած Պեկինում բնակվում էր 3 մլն. մարդ: 17-րդ դարի 50-ական թթ. Պեկին այցելած ոռու դեսպան Ֆեդոր Բայկովը Պեկինի մասին գրել է, որ այդ քաղաքի մեծության

և գեղեցկության հետ չի կարող համեմատվել Եվրոպական և ոչ մի քաղաք: Չինաստանի քաղաքները, լինելով վարչական կենտրոններ, միաժամանակ նաև տնտեսական կենտրոններ էին: Քաղաքներում առաջանում էին մենաշնորհային առևտրական ընկերություններ, զարգանում էր վաշխառուական կապիտալը: Քաղաքներում գործում էին լոմբարդներ, փոխանակման կետեր, բանկեր, որոնք փոխառություն էին տալիս տարեկան 36 տոկոսի չափով: Չինաստանում շարունակում էր զարգանալ ապրանքային արտադրությունը, ընդլայնվում էր ներքին շուկան, առաջանում էին կայսերական և մասնավոր մանուֆակտուրաներ, կիրառվում էր նաև վարձու աշխատանքը:

Չինաստանում հասարակությունը նույնպես բաժանված էր դասերի: Առաջին դասի մեջ էին մտնում իշխող մանջուրական արքայատոհմին պատկանող անձինք: Երկրորդ դասի մեջ էին մտնում գիտունները: Գիտուն դառնալու համար անհրաժեշտ էր հանձնել քննություն և ստանալ «գիտական» աստիճան: Այդ գիտուններից էին նշանակվում քաղաքների կառավարիչները, դատավորները և այլն: Եվրոպացիներն այդ բարձրագույն պաշտոնյաներին անվանում էին «մանդարիններ» (պորտուգալերեն «մանդար» նշանակում է կառավարիչ): Երրորդ դասի մեջ էին մտնում գյուղացիները, արհեստավորները, առևտրականները: Չորրորդ դասին էին պատկանում դերասանները, ստորադաս պաշտոնյաները, ինչպես նաև ստրուկները: Չորրորդ դասի ներկայացուցիչները չէին կարող շփվել վերին դասի ներկայացուցիչների հետ:

ՑԻՆՅԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԸ: ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ: ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Մանջուրական տիրապետության ժամանակաշրջանում նվաճողական արշավանքների հետևանքով նշանակալիորեն ընդլայնվում է չինական պետության բուն տարածքը: Դրանից բացի՝ Ցինյան կայսրության կազմի մեջ էր մտնում մանջուրական ցեղերի բնօրրան Մանջուրիան՝ Չինաստանի հյուսիսարևելյան մասը («Դունբեյ»): Հաջորդ տարածքը, որ մտնում էր Չինաստանի կազմի մեջ, Հարավային կամ Ներքին Մոնղոլիան էր, որ մանջուրները նվաճել են 1636 թ.: Հաջորդ տարածքը Հյուսիսային կամ Արտաքին Մոնղոլիան էր («Խալխա»), որ մանջուրները նվաճել են 1691 թ.: 1757 թ. մանջուրները գրավում են Չինաստանի հյուսիս-արևմուտքում գտնվող արևմտյան մոնղոլների Օյրաթական խանությունը՝ Զունգարիան: 1759 թ. գրավում են Չինաստանի արևմուտքում գտնվող ույղուրների երկիրը՝ Կաշգարիան: 1792 թ. մանջուրները նվաճում և վերջնականորեն Չինաստանին են միացնում Տիբեթը: Այդ տարածքային նվաճումներից բացի՝ մանջուրները 1637 թ. վասալական կախվածության են ենթարկում Կորեային, հետագա տարիներին՝ Վիետնամին, Կամբոջային, Նեպալին և Բիրմային:

Մանջուրական հսկայածավալ կայսրության ստեղծման հետևանքով 18-րդ դարի վերջին Չինաստանի բնակչությունը հասնում է 400 մլն.-ի: Չինաստանը, այդպիսով, բազմազգ կայսրություն էր, սակայն նրա կազմի մեջ մտնող ազգային փոքրամասնությունները կազմում էին ընդհանուր բնակչության ընդամենը 10 տոկոսը:

Նվաճելով ամբողջ Չինաստանը՝ հասարակական զարգացման ցածր մակարդակի վրա գտնվող մանջուրներն ամրապնդում են միջնադարյան ֆեոդալական կարգերը և ֆեոդալական հարաբերությունները: Մանջուրների տիրապետության ժամանակ հողը բաժանվում է երկու մասի՝ պետական և մասնավոր

սեփականատիրական: Պետական հողերի կարգին էին պատկանում կայսերական ընտանիքի հողերը: Առաջին հերթին կայսերական ընտանիքի մասնավոր սեփականությունն էր իրենց հայրենի բնօրրանը՝ Մանջուրիան, որտեղ չինացիների մուտքն արգելված էր: Պետական հողերի կարգին էին պատկանում մանջուրական արիստոկրատիայի հողերը, որոնք տրվում էին ժառանգաբար: Պետական հողերի կարգին էին պատկանում «ութ դրոշների» հրամանատարների, քաղաքների կայազորների պետերի, ռազմական բնակավայրերի հողերը, որոնք հիմնվում էին սահմանի երկայնքով կամ նոր նվաճված տարածքներում: Այդ ռազմական բնակավայրերի և պետական հողերի մեծ մասը տրվում էր գյուղացիներին անժամկետ վարձակալության, որի դիմաց գյուղացիները պետք է հարկ վճարեին պետությանը և կատարեին ֆեոդալական պարհակներ: Պետական էին նաև տաճարական, վանքապատկան հողերը: Պետական սեփականություն էին անտառները, լեռները, արոտավայրերը: Պետական հողերը հարկադրման չէին ենթարկվում: Դրանք մշակվում էին կալվածատերերի և պաշտոնյաների կողմից:

Մասնավոր սեփականատիրական հողերի տերերն էին ֆեոդալները, առևտրականները, մասամբ արիեստավորները, որոնց հողերը կարող էին գնվել և վաճառվել:

Մանջուրական արքայատոհմի տիրապետության հաստատումից հետո կատարվում է բնակչության և գյուղացիական տնտեսությունների հաշվառում, որի հիման վրա էլ հաստատվում են հարկերը և ֆեոդալական պարհակները: Սակայն մանջուրական արքայատոհմի կիրառած հարկային քաղաքականությունը համընդհանուր բնույթ չէր կրում և չէր տարածվում բնակչության բոլոր խավերի վրա: Այսպես. մանջուրական կայսեր 1644 թ. հրամանագրով ցինյան կառավարությունը խոստանում էր ծերերին, երեխաներին, հիվանդներին, հաշմանդամներին ազատել հարկերից ու պարհակներից և նրանց ապահովել սնունդով: Առանձնապես

շեշտվում էր 70 տարին լրացած զինվորականներին ու քաղաքացիներին խնամելու նպատակով աշխատանքային պարհակներից ազատված խնամատար հատկացնելու մասին: Ինչ վերաբերում էր 80 տարին լրացածներին, ապա պետությունը նրանց պետք է հատկացներ կտավ, մետաքս, ինչպես նաև բրինձ ու միս: Մանջուրական կառավարությունը երբեմն որոշ ժամկետներով մասնակիորեն վերացնում կամ թեթևացնում էր հարկերը: Նմանօրինակ միջոցառումներով մանջուրները սիրաշահում էին չին ժողովրդին, թուլացնում նրա ընդվզումները և ամրապնդում իրենց տիրապետությունը Չինական կայսրությունում:

**ՑԻՆՅԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՔԻՆ
ՔԱՂԱՔԱՆՈՒԹՅՈՒՆԸ: ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ԵՎՐՈՊԱԿԱՆ ԵՐԿՐՆԵՐԻ և ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՀԵՏ
(17-ՐԴ ԴԱՐԻ 2-ՐԴ ԿԵՍ- 18-ՐԴ ԴԱՐ)**

16-րդ դարի սկզբին Հարավ-Չինական ծովի ափերն են սկսում ժամանել դեպի Հնդկաստան տանող ծովային ուղին հայտնաբերած պորտուգալացիները: Առաջին անգամը լինելով՝ 1516թ. Հարավ-Չինական ծովի Գուանչժոու նավահանգիստն են ժամանում պորտուգալական առևտրանավերը: 1557թ. պորտուգալացիները վարձակալում են Հարավ - Չինական ծովի Առմին (Մակաո) նավահանգիստը՝ առևտրական գործակալություն հիմնելու համար: Հետագայում՝ 1874թ., պորտուգալացիները վերացնում են վարձակալությունը՝ Առմինը դարձնելով պորտուգալական գաղութ (1991թ. դեկտեմբերին Պորտուգալիան Առմինը վերադարձնում է Չինաստանին):

16-րդ դարի երկրորդ կեսին Զինաստան են ժամանում իսպանացիները, իսկ 16-րդ դարի վերջին և 17-րդ դարի սկզբին Զինաստանի հարավային ափերին են հայտնվում հոլանդացիները:

Զինաստանը նվաճելու ընթացքում մանջուրները, հանձինս արևմտաեվրոպական առևտրականների, տեսնում են իրենց դաշնակիցներին, որոնք մանջուրներին թնդանոթներ էին վաճառում և օգնում նրանց իրենց նավերով: Ուստի, սկզբնական շրջանում մանջուրները խոչընդոտներ չէին ստեղծում և իրենց նավահանգիստները բաց էին թողնում Եվրոպացիների համար և նվազեցնում մաքսատուրքերը:

Արևմտաեվրոպական առևտրական ընկերություններից բացի՝ 16-րդ դարի երկրորդ կեսին՝ 1563 թ., Զինաստան են ժամանում նաև կաթոլիկ միսիոներները՝ ճիզվիտները: Զվատահելով չինացիներին՝ մանջուրները սկսում են օգտվել միսիոներների տարբեր ծառայություններից՝ թույլատրելով անգամ քրիստոնեական դավանանքի քարոզություն ծավալել երկրում: Ճիզվիտները մեծ ազդեցություն են ծեռք բերում մանջուրական արքունիքում: Նրանցից ոմանք դառնում էին մանջուրական կայսեր անձնական խորհրդականները՝ կատարելով նաև դիվանագիտական բնույթի տարբեր հանձնարարություններ: Միսիոներները մեծ գործ էին կատարում՝ չինացիներին ծանոթացնելով արևմտաեվրոպական գիտությանը և տեխնիկային, նրա նվաճումներին, նպաստում չինական օրացույցի ճշտմանը, հրազենի կատարելագործմանը, սովորեցնում ծովել թնդանոթներ, արկեր և այլն: Նրանք Զինաստան էին ներմուծում նաև Եվրոպական սպառագինություն:

Ցինյան կայսրության հետ դիվանագիտական և առևտրական հարաբերություններ հաստատելու նպատակով 1654 թ. Պեկին է ժամանում ռուսական առաջին դեսպանությունը: Բայց Ֆեդոր Բայկովի գլխավորությամբ ռուսական դեսպանության առաքելությունը անհաջողության է մատնվում քաղաքական տարբեր բարդությունների, ինչպես նաև ռուս-չինական

սահմանային տարածայնությունների հետևանքով: Այնուամենայնիվ, 1689 թ. օգոստոսի 27-ին, Անդրբայկալի վարչական կենտրոն ռուսական Ներչինսկ քաղաքում ստորագրվում է սահմանի և առևտորի մասին ռուս-չինական պայմանագիր: Բանակցություններն ընթանում էին ռուսական պատվիրակության համար ստեղծված անբարենպաստ պայմաններում, որովհետև այդ ժամանակ ընդամենը 2 հազ. ստրելեցներով ու կազակներով թույլ պաշտպանված Ներչինսկը շրջապատված էր 40 թնդանոթներով ռուսական տարածք ներխուժած մանջուրական 17 հազ. բանակով: Ծանր էր նաև Ռուսաստանի միջազգային դրությունը, որը պայմանավորված էր այդ ժամանակաշրջանում Օսմանյան կայսրության, Ղրիմի թաթարական խանության և Շվեդիայի հետ ունեցած նրա բարդ հարաբերությունների հետևանքով: Ներչինսկի պայմանագրով Ռուսաստանը հարկադրված Զինաստանին էր զիջում 1649-1652 թթ. ընթացքում իր տիրապետության տակ անցած Մերձամուրյան շրջանի մի մասը՝ 1684 թ. Ալբագին կենտրոնով հիմնված Ալբագինի վոյեվոդությունը: Հաստատվում էին ազատ առևտրական հարաբերություններ և դիվանագիտական ներկայացուցիչներին ընդունելու կարգ: 1689 թ. Ներչինսկի պայմանագիրը ոչ միայն Ռուսաստանի, այլև Եվրոպական տերության հետ Զինաստանի կնքած առաջին դիվանագիտական փաստաթուղթն էր:

Ռուսական դիվանագիտության ջանքերով 1715 թ. Պեկինում պաշտոնապես իր գործունեությունն է սկսում ռուսական ուղղափառ Եկեղեցու հոգևոր առաքելությունը, որը նաև Զինաստանի վերաբերյալ գիտական բազմաբնույթ ուսումնասիրություններ կատարելուց բացի՝ մասամբ իրականացնում էր դիվանագիտական ու առևտրական ներկայացուցությունների պարտականություններ՝ միաժամանակ ռուսական համապատասխան մարմիններին հաղորդելով կարևոր տեղեկություններ Ցինյան կայսրության ներքին ու արտաքին դրության վերաբերյալ: 1719-1722 թթ. Զինաստան

Ժամանած ռուսական արտակարգ դեսպանորդի գործադրած դիվանագիտական ջանքերի շնորհիվ մանջուրական կայսրը թույլատրում է Պեկինում կառուցել ուղղափառ Եկեղեցի:

1727 թ. հոկտեմբերին ռուսական Կյախտա քաղաքում կնքվում է սահմանի, առևտրի և դիվանագիտական հարաբերությունների կարգավորման վերաբերյալ ռուս-չինական պայմանագիր: Դրա համաձայն՝ դեպի Բայկալ լիճը հոսող Սելենգա գետի աջ վտակ Ուդայից հարավ գտնվող տարածքը նախկինի պես մնում էր չսահմանազատված՝ երկու երկրներից ոչ մեկի կողմից չբնակեցնելու և չտիրանալու պայմանով: Ըստ պայմանագրի՝ մինչև 200 ռուս առևտրականներ իրավունք էին ստանում երեք տարին մեկ անգամ քարավաններով ժամանել Պեկին և առանց մաքսատուրքի առևտուր կատարել, տներ, խանութներ, պահեստներ կառուցել և այլն: Վերահաստատվում էին ռուսական Կյախտա, Ներչինսկ և Սելենգինսկ քաղաքներում առանց մաքսի առևտուր անելու, Չինաստանում ռուսական հպատակների, իսկ Ռուսաստանում չինացիների էքստերիտորիալության իրավունքներով օժտված լինելու Ներչինսկի պայմանագրի պայմանները: Արձանագրվում էր, որ ռուս-չինական պետական հարաբերությունները Չինաստանի կողմից պետք է իրականացվեին Ցինյան կայսրության արտաքին հարաբերությունների պալատի, իսկ Ռուսաստանի կողմից՝ պետական բարձրագույն մարմնի՝ Սենատի միջոցով:

Կյախտայի պայմանագիրը օրինականացնում էր Պեկինում ռուսական հոգևոր առաքելության մշտական գործունեության բնագավառները, նաև մանջուրական կառավարության հետ հարաբերություններ պահպանելու Ռուսաստանի հնարավորությունը: Պեկինում դիվանագիտական մշտական ներկայացուցչություն չունենալու պայմաններում Ցինյան կայսրության հետ ռուսական Եկեղեցու հոգևոր առաքելության միջոցով քաղաքական հարաբերություններ պահպանելու հնարավորությունը Ռուսաստանի համար ստանում էր շատ կարևոր

նշանակություն: Իրենց հերթին մանջուրական կառավարիչները շահագրգուզած էին Զինաստանին վերաբերող արտաքին քաղաքական խնդիրների շուրջ բանակցելու հարևան Ռուսական կայսրության հետ: Այդ նպատակով 1730 և 1731 թթ. Պեկինից Մոսկվա և Պետերբուրգ են ժամանում արտակարգ լիազորություններով օժտված դեսպանություններ, և այդպիսով դիվանագիտական հարաբերություններ են հաստատվում երկու կայսրությունների միջև: Զարգանում էին նաև երկու երկրների միջև կատարվող առևտրական հարաբերությունները: Բավական է նշել, որ Ներչինսկի պայմանագրի կնքումից մինչև 1728 թ. Պեկին են ժամանել ռուսական 16 առևտրական քարավաններ: Ռուս-չինական անմիջական առևտրական կապերը ամրապնդելու նպատակով 1744 թ. արգելվում է Արևմտյան Եվրոպայից չինական ապրանքների ներմուծումը Ռուսաստան: Չնայած Զինաստանի՝ 1757 թվականից իրականացված ինքնամեկուսացման քաղաքականությանը՝ այնուամենայնիվ, երկկողմանի պայմանագրերի վրա հիմնված ռուս-չինական ցամաքային առևտուրը չի դադարում: Ավելին, 1761 թ. վերացվում են չինական և ռուսական մի շարք ապրանքներից գանձվող մաքսատուրքերը, իսկ Զինաստանի ինքնամեկուսացման հետևանքով երկկողմանի դիվանագիտական հարաբերությունները թեև խզվում են, այնուամենայնիվ Պեկինում իր գործունեությունն է շարունակում ռուսական ուղղափառ եկեղեցու հոգևոր առաքելությունը:

Հարավ-Չինական ծովի Գուանչժոու նավահանգստում 1715 թ. հիմնվում է անգլիական Օստ-Հնդկական ընկերության առաջին ֆակտորիան: Ֆրանսիացիներն իրենց առևտրական ֆակտորիան են հիմնում Զինաստանի արևելյան ափին՝ Նինբո նավահանգստում: 1784 թ. ամերիկացիները նույնպես իրենց ֆակտորիան են հիմնում Գուանչժոու նավահանգստում:

Աստիճանաբար իրենց իշխանությունն ամրապնդելով նվաճված Զինաստանում՝ մանջուրները սկսում են փոխել իրենց նախկին

բարյացակամ վերաբերմունքը Եվրոպացիների նկատմամբ: 1716 թ. նրանք առաջին սահմանափակումներն են դնում Զինաստան ժամանող օտարերկրացիների վրա: Բոգդիխանի իրամանով 1724 թ. փակվում են 300 քրիստոնեական եկեղեցիներ, իսկ գրեթե բոլոր միսիոներներին քշում են պորտուգալական Մակաո (Աոմին) գաղութը: 1757 թ. արգելվում է Զինաստանի հետ Եվրոպական բոլոր Օստ-Հնդկական ընկերությունների առևտուրը, բացի Գուանչժոու նավահանգստից: Արգելվում է Եվրոպացիների մուտքը Զինաստան, իսկ նրանց ֆակտորիաները փակվում են: Այդպիսով, մանջուրները կիրառում են Զինաստանը Արևմուտքից մեկուսացնելու քաղաքականություն: Եվրոպացիները կարող են Զինաստանի հետ առևտուր կատարել միայն Գուանչժոու նավահանգստում՝ իշխանությունների հսկողությամբ և 1720 թ. հիմնված չինական մենաշնորհային առևտրական ընկերության հետ: Գուանչժոու նավահանգստում օտարերկրացիներն իրավունք չունեին շփվելու բնակչության հետ: Այդ նավահանգիստը ժամանած օտարերկրացիներին մթերք են մատակարարում հատկապես նախատեսված չինացի առևտրականները, որոնք փաստորեն միջնորդի դեր են կատարում, և որոնց պորտուգալացիները անվանում են կոմպրադորներ (միջնորդներ): Մանջուրական կառավարիչները համոզված են, որ Զինաստանի ինքնամեկուսացման քաղաքականությունը կամրապնդեր իրենց իշխանությունը Զինաստանում: Այնուհետև, մանջուրական կառավարությունը շահագրգոված չեր Եվրոպացիների հետ առևտրական հարաբերություններ ունենալու, որովհետև այդ ժամանակ Զինաստանում արտադրվում էր այն անհրաժեշտը, ինչոր պետք էր: Մանջուրները շատ աղոտ պատկերացում ունեին Եվրոպայի և Եվրոպական քաղաքակրթության նվաճումների մասին: Այնուամենայնիվ, ինքնամեկուսացման քաղաքականությունը որոշ ժամանակով կանխում է Եվրոպական գաղութարարների ներթափանցումը Զինաստան: Սակայն ինքնամեկուսացման

քաղաքականությունը բացասաբար է անդրադառնում Զինաստանի քաղաքական, սոցիալ-տնտեսական և մշակութային զարգացման վրա՝ Զինաստանը արհեստականորեն կտրելով Եվրոպայում զարգացող առաջադիմական գործընթացներից: Արդյունքում, տնտեսապես չզարգացող Զինաստանն ի վերջո դառնում է Եվրոպական տերությունների կիսազարդութը:

ՏԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԹԱՓԱՆՑՈՒՄԸ ԶԻՆԱՍՏԱՆ 19-ՐԴ ԴԱՐԻ ԱՌԱՋԻՆ ԿԵՍԻՆ: ԱՌԱՋԻՆ «ՕՓԻՈՒՄ»-Ի ՊԱՏԵՐԱՋՄԸ (1840-1842 թթ.)

Բենգալիայի զավթումից հետո անգլիական Օստ-Հնդկական ընկերությունը կառավարությունից ստանում է օփիիումի մենաշնորհային առևտուր կատարելու իրավունք, որի հետևանքով սկսում է օփիիում ներմուծել Զինաստան: Օփիիումի վաճառքը Զինաստանում բերում էր հսկայական շահույթներ՝ կազմելով ընկերության ամբողջ եկամտի 1/7-րդ մասը: 1800-1838 թթ. Զինաստան ներմուծվող օփիիումի քանակն ավելանում է 20 անգամ՝ 2 հազ. արկողից հասնելով 40 հազ. արկողի: Նշենք, որ յուրաքանչյուր արկող պարունակում էր չորս փութ (64 կգ) օփիիում: Օփիիումի մաքսանենգ առևտուրը կազմում էր Զինաստան ներմուծվող անգլիական ապրանքների 55%-ը: Զինաստանի հետ կատարվող օփիիումի մաքսանենգ առևտուրը Անգլիայի իրականացրած ազրեսիայի դրսնորումներից մեկն էր: Օփիիումի առևտուրի հետևանքով Օստ-Հնդկական ընկերությունը Զինաստանից դուրս էր հանում թանկարժեք մետաղներ: Զինական կառավարությունը, ի վերջո, հարկադրված էր պայքար սկսել օփիիումի մաքսանենգ առևտուրի դեմ: Զինական կայսրը 1796 թ. առաջին իրամանագիրն է

ստորագրում օփիումի ներմուծումը Զինաստան արգելելու մասին, և դրան հետևում են այլ միջոցառումներ: 1839 թ. հունիսին կայսեր հրամանով Գուանչողութեան նավահանգստում ոչնչացվում է բռնագրավված օփիումը, որն էլ Անգլիային առիթ է ծառայում պատերազմ սկսելու Զինաստանի դեմ: 1840 թ. հունիսին Անգլիան, առանց պատերազմ հայտարարելու, ռազմական գործողություններ է սկսում Զինաստանի դեմ՝ ռմբակոծելով Գուանչողութեան նավահանգիստը՝ սկիզբ դնելով առաջին անգլո-չինական կամ, պատմության մեջ մտած, առաջին «օփիումի» պատերազմին: Ի պատասխան՝ Զինաստանը Անգլիային պատերազմ է հայտարարում 1841 թ. փետրվարին: Ռազմական գործողությունները հիմնականում ընթանում էին Զինաստանի հարավային նահանգ Գուանդունում: Ի վերջո, պարտված Զինաստանը հարկադրված է լինում 1842 թ. օգոստոսի 29-ին չինական Նանկին քաղաքում կնքել հաշտության պայմանագիր: Դրանով Զինաստանը պարտավորվում էր անգլիական առևտորի համար բաց անել հինգ նավահանգիստներ, այդ թվում՝ Գուանչուն, Շանհայը, որոնցում պետք է հիմնվեին անգլիական հյուպատոսություններ: Զինաստանը պարտավորվում էր ներմուծվող և արտահանվող ապրանքների վրա սահմանել 5 տոկոս մաքս և Անգլիային վճարել 21 մլն. դրամ ռազմատուգանք: Վերացվում էր 1720 թ. հիմնված չինական մենաշնորհային առևտրական կազմակեպությունը: Այդ պայմանագրով Անգլիան Զինաստանից զավթում էր Հարավ-Չինական ծովի Սյանգան (Հոնկոնգ) կղզին՝ դրանով կարևոր հենակետ ստանալով Զինաստան ներթափանցելու համար (1997 թ. Հոնկոնգը վերադարձվում է Զինաստանին):

1842 թ. Նանկինի հաշտության պայմանագիրը առաջին անիրավահավասար փաստաթուղթն էր, որ Զինաստանը կնքում էր Եվրոպական տերություններից Անգլիայի հետ, որին հետևելու էին բազմաթիվ անիրավահավասար այլ պայմանագրեր: 1843 թ. հոկտեմբերի 8-ին կնքվում է անգլո-չինական լրացուցիչ

պայմանագիր: Դրանով բրիտանահպատակները Զինաստանում օժտվում էին էքստերիտորիալության իրավունքներով, այսինքն՝ չէին ենթարկվելու չինական օրենքներին ու դատարանին: Բացված իինգ նավահանգիստներում պետք է հիմնվեին օտարերկրյա բնակավայրեր, որոնց կառավարումն իրականացնելու էին եվրոպացիները: Եվրոպական ամենամեծ բնակավայրը առաջանում է Շանհայում: Պայմանագրում շեշտվում էր, որ յուրաքանչյուր եվրոպական երկրին կատարված ցանկացած զիջում ինքնաբերաբար պետք է տարածվեր Անգլիայի վրա: Զինաստանի հետ նմանօրինակ անիրավահավասար պայմանագրեր են կնքում նաև մյուս տերությունները:

Առաջին «օկիումի» պատերազմում Զինաստանի պարտությունից նախ և առաջ օգտվում է ԱՄՆ-ը: 1844 թ. հուլիսին, սպառնալով պատերազմով, ԱՄՆ-ը ստիպում է Զինաստանին ստորագրել անիրավահավասար առևտրական պայմանագիր: Դրա համաձայն, Զինաստանը ԱՄՆ-ի համար բաց էր անում արդեն Անգլիայի համար բացված իինգ նավահանգիստները: Ամերիկացիները նույնպես իրավունք էին ստանում այդ նավահանգիստներում իիմնելու առևտրական գործակալություններ, ձեռնարկություններ, բնակավայրեր: ԱՄՆ-ի քաղաքացիները նույնպես օժտվում էին էքստերիտորիալության իրավունքներով: Զինական կառավարությունը մաքսատուրքեր պետք է հաստատեր ամերիկյան հյուպատոսների համաձայնությամբ: Կաթոլիկական եկեղեցին ստանում էր Զինաստանում միսիոներական գործունեությամբ զբաղվելու իրավունք:

1851 թ. հուլիսի 25-ին ստորագրվում է ռուս-չինական պայմանագիր, որի հետևանքով Արևմտյան Զինաստանի շուկաները բացվում էին ռուսական առևտրականների համար, իսկ առևտուրը երկուստեք ազատվում էր մաքսերից: Պայմանագրի համաձայն՝ ռուս առևտրականները կարող էին յուրաքանչյուր տարվա մարտի 25-ից մինչև դեկտեմբերի 10-ը ժամանել և առևտուր անել մանջուրական

կառավարության թույլատրած Արևմտյան Զինաստանի՝ Միջին Ասիային սահմանակից պատմական Զունգարիայի Իլի (Կուզա) և Տարբագատայ (Չուգուչակ) քաղաքներում: Զինաստան ժամանելու սահմանված ժամկետը լրանալուց հետո ռուսական առևտրականների մուտքն այլևս դադարեցվում էր: Ռուս-չինական անմաքս առևտրի համար բացված Արևմտյան Զինաստանի այդ երկու քաղաքներում ռուսական առևտրականները մանջուրական կառավարության հատկացրած տարածքներում կարող էին հիմնել առևտրական գործակալություններ, բնակելի տներ և ապրանքների պահեստներ: Ռուսական հպատակներն իրավունք ունեին իրենց առևտրական գործակալություններում կատարել կրոնական արարողություններ ու ծիսակատարություններ: Ռուս առևտրականների գործունեությանը պետք է հետևեր ռուսական հյուպատոսը, իսկ չինացի առևտրականներինը՝ Իլիի Գլխավոր Վարչության պաշտոնյան: Ռուսական և չինական առևտրականների միջև առաջացած մանր բնույթի խնդիրները միասնաբար պետք է կարգավորեին ռուսական հյուպատոսը և Իլիի գլխավոր վարչության պաշտոնյան:

Ռուսական կառավարությունը Զինաստանի հետ հարաբերությունները պետք է իրականացներ Արևմտյան Սիբիրի Գլխավոր վարչության, իսկ մանջուրական կառավարությունը Ռուսաստանի հետ՝ Իլիի Գլխավոր վարչության միջոցով:

Առաջին «օփիումի» պատերազմի հետևանքով 1842թ. և այնուհետև կնքված անիրավահավասար միջազգային պայմանագրերը Զինաստանին հարկադրաբար դուրս էին բերում ինքնամեկուսացման քաղաքականությունից: Դրա հետևանքով էլ արագանում է կապիտալիստական երկրների ներթափանցումը ֆեոդալական Զինաստանի տնտեսության մեջ: Փաստորեն եվրոպական տերությունների համար Զինաստանը դառնում է հումքի անսպառ աղբյուր, արդյունաբերական ապրանքների վաճառահանման ընդարձակ շուկա և կապիտալների ներդրման

ոլորտ: Սակայն ներդրված օտարերկրյա կապիտալը խոչընդոտում էր չինական ազգային կապիտալիզմի զարգացմանը և ազգային բուրժուազիայի ձևավորմանը՝ ամրապնդելով Չինաստանի տնտեսական հետամնացությունը: Այդ էր պատճառը, որ Չինաստանը վերածվում էր եվրոպական տերությունների կիսագաղութիւն և կիսաֆեոդալական պետության:

ԵՐԿՐՈՐԴ «ՕՓԻՈՒՄ»-Ի ՊԱՏԵՐԱԶՄԸ (1856-1860թթ.): ՉԻՆԱՍՏԱՆԻ ՎԵՐԱԾՈՒՄԸ ՄԵԾ ՏԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԻՍԱԳԱՂՈՒԹԻ

1850-1864 թթ. Չինաստանում կրկին տեղի է ունենում գյուղացիական մեծ պատերազմ, որը պատմության մեջ հայտնի է «Տայպինների» պատերազմ անունով: «Տայպին» բառն առաջացել է ապստամբների կողմից երկնային պետություն ստեղծելու նշանաբանից: Պատերազմի սկզբնական շրջանում Անգլիան, Ֆրանսիան և ԱՄՆ-ը բացահայտորեն հանդես չեն գալիս տայպինների դեմ՝ հուսալով, որ այդ պատերազմի հետևանքով Չինաստանը կարող էր քայլայվել երկու կայսրությունների, որը և հնարավորություն կստեղծեր հաջողությամբ իրականացնելու իրենց գաղութային ծրագրերը: Բայց, սխալվելով իրենց ենթադրություններում, 1854-1855 թթ. Ֆրանսիական զինվորները Շանհայում մասնակցում են ապստամբների դեմ մղված կոիվներին, իսկ անգլիական ռազմածովային նավատորմը խարիսխ էր ծգել Գուանչժոու նավահանգստում:

Օգտվելով մանջուրական արքայատոհմի ծանր կացությունից, 1854 թ. տերությունները պահանջում են ամբողջ Չինաստանում անսահմանափակ առևտորի, ինչպես նաև օփիումի ազատ վաճառքի իրավունք: Պահանջում են նաև եվրոպական տերությունների

դեսպանությունների հիմնում Պեկինում: Նոյն՝ 1854 թ. տերություններն իրենց վերահսկողությունն են սահմանում Չինաստանի ծովային մաքսերի վրա:

1853-1856 թթ. Ղրիմի պատերազմի ավարտից հետո Անգլիան և Ֆրանսիան վերսկսում են Չինաստանում իրենց տնտեսական ու քաղաքական ազդեցությունը հաստատելու պայքարը:

1856 թ. հոկտեմբերի 10-ին Անգլիան և Ֆրանսիան Չինաստանի դեմ սկսում են երկրորդ «օփիում»-ի պատերազմը: Պարտված Չինաստանը 1858 թ. հունիսին հաշտություն է կնքում՝ ընդունելով Անգլիայի ու Ֆրանսիայի թելադրած պայմանները: Բայց, չբավարարվելով 1858 թ. հաշտության պայմանագրերով Անգլիան և Ֆրանսիան 1859 թ. մարտին վերսկսում են երկրորդ «օփիում»-ի պատերազմը: Այդ անգամ նրանք 1860 թ. հոկտեմբերին գրավում են Պեկինը, և մանջուրական կառավարությունը հարկադրված է լինում նոյն՝ 1860 թ. հոկտեմբերի 24-ին, կնքել հաշտության նոր պայմանագիր:

1858 և 1860 թթ. հաշտության պայմանագրերով Ցինյան կայսրությունը Անգլիայի հետ հաստատում էր երկկողմանի դիվանագիտական հարաբերություններ: Պեկինում և Լոնդոնում հիմնվում են երկու տերությունների դեսպանությունները: Անգլիական առևտրի համար բացվում են վեց նոր նավահանգիստներ, որոնցում կարող էին հիմնվել բրիտանական հյուպատոսություններ: Յանցզի գետը նավարկելի է դառնում անգլիական առևտրանավերի համար: Ի տարբերություն առևտրանավերի՝ անգլիական ռազմանավերն առանց արգելքների ու սահմանափակումների կարող էին մտնել չինական բոլոր փակ նավահանգիստները: Չինաստան ներմուծվող ու արտահանվող մի շարք ապրանքների վրայից հանվում կամ նվազեցվում են մաքսատուրքերը: Մանջուրական կառավարությունը հարկադրված էր որպես օտարերկրյա դեղամիջոց օրինականացնել առանց մաքսատուրքի օփիումի ներմուծումը և վաճառքը Չինաստանում:

Չինական տեղական իշխանությունների կողմից կրկնավավերացված հյուպատոսական անձնագրերով բրիտանահպատակները առանց արգելքների կարող էին առևտրական և այլ նպատակներով ազատորեն շրջագայել կայսրության ամբողջ տարածքում: Մանջուրական կառավարությունը երաշխավորում էր բրիտանահպատակների անվտանգությունը, նրանց գույքի ու սեփականության անձեռնմխելիությունը: Քրիստոնեական դավանանքը պաշտող չինացիները հալածանքների և հետապնդումների չին ենթարկվելու, իսկ քրիստոնեություն տարածող եվրոպացի քարոզիչները՝ միսիոներները, ամենուրեք պետք է ստանային մանջուրական իշխանությունների գործուն աջակցությունը և հովանավորությունը: Անգլիացիներն իրավունք էին ստանում որպես վարձու աշխատուժ չինացիներին օգտագործելու իրենց գաղութներում: Մանջուրական կառավարությունը պարտավորվում էր Անգլիային վճարել 10 մլն. լյան ռազմատուգանք և նրան զիջել նոր տարածք՝ Սյանգանից հյուսիս գտնվող Հարավ-Չինական ծովի Ցզյուլոն (Կոուլոն) թերակղզու հարավային մասը: Մանջուրական կառավարությունը հաստատում էր նախկին պայմանագրերով Անգլիայի հանդեպ ստանձնած բոլոր պարտավորությունները և խոստանում ապագայում որևէ տերության շնորհելիք արտոնություններն ու առանձնաշնորհումները նույնությամբ տարածել նաև բրիտանահպատակների վրա:

Չինաստանի հետ նույնանման անիրավահավասար պայմանագրեր են կնքում նաև եվրոպական մյուս երկրները և ԱՄՆ-ը:

Օգտվելով երկրորդ «օփիումի» պատերազմում Չինաստանի կրած պարտությունից՝ շահում է նաև Ռուսաստանը՝ Հեռավոր Արևելքում իր ռազմաքաղաքական ու տնտեսական ազդեցությունը հաստատելու համար:

Ռուսաստանի և Ղինաստանի քաղաքական փոխհարաբերությունների վերաբերյալ 1858 թ. հունիսի 13-ին չինական Տյանցգին քաղաքում կնքված պայմանագրով մանջուրական կառավարությունը հաստատում էր Պեկինում դիվանագիտական ներկայացուցչություն ունենալու և դեսպանորդներ նշանակելու Ռուսաստանի նախկին իրավունքը: Երկու կայսրությունների քաղաքական հարաբերություններն անմիջականորեն պետք է կատարվեին Ռուսաստանի արտաքին գործերի նախարարի և Ղինաստանի Գերագույն պետական խորհրդի նախագահի կամ գլխավոր նախարարի կողմից:

Բացի ցամաքային ճանապարհներով կատարվող ռուս-չինական առևտրից՝ մանջուրական կառավարությունը ռուսական առևտրանավերի համար բաց էր անում օտարերկրյա առևտրի համար թույլատրված բոլոր չինական նավահանգիստները: Ռուսական կառավարությունն իրավունք էր ստանում հյուպատոսներ նշանակելու չինական բոլոր բաց նավահանգիստներում և կարող էր ռազմանավեր ուղարկել այդ նավահանգիստները: Վերանորոգման, տեխնիկական սպասարկման, խմելու ջրով, սննդամթերքով պահեստավորվելու նպատակով ռուսական առևտրանավերը և ռազմանավերը կարող էին մուտք գործել նաև չինական փակ նավահանգիստները: Առևտրի համար նախատեսված չինական բոլոր բաց նավահանգիստներում ռուսական կողմը կարող էր գնել հողատարածքներ, կառուցել եկեղեցիներ, տարբեր բնույթի շինություններ և այլն: Ղինաստանի տարածքում ռուսական կայսրության քաղաքացիներն օժտվում էին էքստերիտորիալության իրավունքներով: Երկու կայսրությունները փոխադարձաբար երաշխավորում էին Ղինաստանում բնակվող ռուսների և Ռուսաստանում գտնվող չինացիների անվտանգությունը և սեփականության անձեռնմխելիությունը: Մանջուրական կառավարությունը պարտավորվում էր ոչ միայն չինացների, այլև հովանավորել քրիստոնեական դավանանքն ընդունած

չինացիներին, ինչպես նաև արգելքներ չհարուցել Չինաստանում քրիստոնեությունը տարածող միսիոներների գործունեությանը: Պայմանագրում շեշտվում էր, որ մանջուրական կառավարության կողմից որևէ տերության շնորհած քաղաքական, առևտրական և այլ բնույթի իրավունքներն ու առավելությունները ինքնաբերաբար պետք է տարածվեին նաև Ռուսաստանի վրա:

1858 թ. մայիսին չինական Այգուն քաղաքում և 1860 թ. նոյեմբերին Պեկինում կնքած պայմանագրերով Ռուսաստանը վերադարձնում է 1689 թ. Ներչինսկի պայմանագրով Չինաստանին անցած Մերձամուրյան և Հարավուսսուրիական տարածքները: Այդպիսով, Այգունի և Պեկինի պայմանագրերով ռուս-չինական բնական արևելյան սահմանն են դառնում Արգուն-Ամուր և Ուսսուրի գետերը: Երկու երկրներում հիմնվում են հյուպատոսություններ: Կարգավորվում են երկու երկրների առևտրական հարաբերությունները: Պայմանավորվող կողմերը ռուս-չինական սահմանի արևելյան մասում ստանում են երկեղումանի ազատ և անմաքս առևտրի իրավունք: Ամուր, Ուսսուրի և Սունգարի սահմանային գետերով նավարկության իրավունք են ստանում միայն ռուսական և չինական գետանավերը:

Մերձամուրյան և Հարավուսսուրիական երկրամասերի միավորումը Ռուսաստանի տիրապետության ներքո ուներ տնտեսական և ռազմաքաղաքական հսկայական նշանակություն: Իր իշխանությունը հաստատելով Հարավուսսուրիական երկրամասում, Ռուսաստանը սահմանակից էր դառնում Չինաստանին, Ճապոնական ծովին և Կորեային՝ 1860 թ. Ամուրի ծոցում հիմնելով Հեռավորարելյան Վլադիվոստոկ նավահանգիստը նաև որպես ռուսական խաղաղօվկիանոսյան ռազմածովային նավատորմի կարևորագույն ռազմա-ստրատեգիական կայան:

Երկրորդ «օփիում»-ի պատերազմում պարտված Չինաստանում իրենց քաղաքական ու տնտեսական դիրքերն ու ազդեցությունն

ամրապնդելու նպատակով 1861 թ. նոյեմբերին Եվրոպական տերությունները Պեկինում կազմակերպում են պետական հեղաշրջում, որի հետևանքով իշխանությունն անցնում է Եվրոպամետ քաղաքական կողմնորոշում ունեցող գործիչներին: Այժմ արդեն իշխանության գլուխ անցած Եվրոպամետ քաղաքական ուժերը, չինական ֆեոդալները և Եվրոպական տերությունները միասնական ուժերով ջախջախում են «տայպինների» ապստամբությունը, որը վերջնականորեն ճնշվում է 1868 թ. օգոստոսին:

ՉԻՆԱՍՏԱՆԻ ԲԱԺԱՆՈՒՄԸ «ԱՇԽԵՑՈՒԹՅԱՆ ԳՈՏԻՆԵՐԻ» ՈՒ «ՎԱՐՁԱԿԱԼՎԱԾ» ՏԱՐԱԾՔՆԵՐԻ

1894-1895 թթ. ճապոնա-չինական պատերազմում Չինաստանի պարտության հետևանքով ուժեղանում է տերությունների պայքարը Չինաստանը տնտեսական և ռազմաքաղաքական ազդեցության գոտիների բաժանելու համար: Այդ պայքարի ակտիվ մասնակիցը դարձավ նաև Գերմանիան, որը նույնպես հանդես եկավ խաղաղ ներթափանցման միջոցով Չինաստանում իր տնտեսական և քաղաքական ազդեցությունը հաստատելու համար:

Գերմանական տնտեսական ներթափանցումը Չինաստան սկսվել էր դեռևս 19-րդ դարի կեսերին՝ Պրուսիայի կողմից՝ նախքան Գերմանիայի քաղաքական միավորումը և մեկ միասնական, համագերմանական պետության ստեղծումը: Օգտվելով երկրորդ «օփիումի» պատերազմում Չինաստանի կրած պարտությունից՝ 1861 թ. սեպտեմբերին Պեկինում ստորագրված պայմանագրի համաձայն Պրուսիան Չինաստանում ստանում էր անիրավահավասար պայմանագրերով Անգլիայի ու Ֆրանսիայի ձեռք բերած արտոնություններին ու առանձնաշնորհումներին հավասար

իրավունքներ: Գերմանիայի քաղաքական միավորումից հետո՝ արդեն 1872 թ., Պեկինում իր գործունեությունն է սկսում գերմանական կայսրության դիվանագիտական առաքելությունը:

Գերմանիայի քաղաքական միավորումը նոր հնարավորություններ է ստեղծում Չինաստանում գերմանական առևտրաֆինանսական կապիտալի ներթափանցման և տնտեսական ազդեցության հաստատման համար: Արդեն 1880 թ. Չինաստանում գործունեություն էին ծավալել գերմանական 65 առևտրական ֆիրմաներ՝ Անգլիայից հետո զբաղեցնելով Երկրորդ տեղը Ֆինյան կայսրությունում: Գերմանական շոգենավային ընկերությունները գերմանական արդյունաբերական արտադրանքները Չինաստան փոխադրելուց բացի՝ զբաղվում էին նաև միջնորդական առևտրով՝ այլ Երկրների ապրանքները Չինաստան տեղափոխելով: Չինաստանին գերմանական սպառագինություն, ռազմական նավեր մատակարարելու ընագավառում Գերմանիան զիջում էր միայն Անգլիային: Եվրոպական բանակների օրինակով չինական մի շարք զորամասեր կազմակերպվում և հրահանգավորվում էին գերմանական ռազմական մասնագետների կողմից:

Չինաստանում կապիտալ ներդրումներով նշանակալի դեր սկսեցին կատարել գերմանական բանկերը: Բրեմենյան և ֆրանկֆուրտյան բանկիրները 1887 թ. Չինաստանին են տրամադրում 5 մլն. մարկ փոխառություն:

Չինաստանի հետ կատարվող առևտուրը վարկավորելու նպատակով գերմանական ֆինանսական հզոր շրջանները 1889 թ. հիմնում են գերմանական Արևելա-ասիական բանկը: 90-ական թթ. սկզբներին այդ բանկն արդեն իր բաժանմունքներն ուներ Չինաստանի բոլոր խոշոր նավահանգիստներում՝ մրցակցելով անգլիական Հոնկոնգ-Շանհայի բանկի հետ: Շարունակելով ազդեցության նոր ոլորտներ ձեռք բերել Չինաստանում՝ 1882 թ.

Գերմանիան ուժի կիրառումով զավթում է Հարավ-Զինական ծովի Սվատոու (Շանտոու) նավահանգստի տարածքի մի մասը;

Գերմանական ֆինանսարդյունաբերական շրջաններին մասնավորապես հետաքրքրում էր Զինաստանի արևելքում գտնվող Դեղին ծովի Շանդուն թերակղզին՝ իր աշխարհագրական հարմար դիրքով և բնական հարստություններով։ Միաժամանակ այդ թերակղզին պետք է իհմք ծառայեր դեպի Զինաստանի ներքին շրջանները ներթափանցելու համար։ Օգտագործելով Շանդուն թերակղզում երկու կաթոլիկ գերմանացի միսիոներների սպանությունը՝ գերմանական մի քանի նավերից բաղկացած ռազմական էսկադրան 1897 թ. նոյեմբերի 14-ին մտնում է Շանդուն թերակղզու Յզյառչոու ծովածոցը և դեսանտ իջեցնում Ցինդառ նավահանգստում։

Գերմանական ռազմական սպառնալիքի ներքո 1898 թ. մարտի 6-ին Պեկինում կնքված պայմանագրով 99 տարվա վարձակալության պայմանով՝ Ցինդառ նավահանգստով հանդերձ՝ մանջուրական կառավարությունը Գերմանիային է զիջում Շանդուն թերակղզու Յզյառչոու ծովածոցը և նրա երկու ափերի 50 կմ շառավղով տարածքը։ Շանդուն թերակղզում վարձակալած տարածքի, Ցինդառ նավահանգստի, Յզյառչոու ծովածոցի և նրա կղզիների նկատմամբ Գերմանիան օժտվում էր գերագույն իրավասությամբ, պաշտպանական նպատակներով ամրություններ կառուցելու և զորամասեր տեղակայելու իրավունքներով։ Գերմանական գործարար շրջաններն իրավունք են ստանում Շանդունում կատարել շինարարական աշխատանքներ, կառուցել երկաթուղագծեր և շահագործել տեղի բնական հարստությունները։ Փաստորեն, չինական Շանդուն թերակղզին վերածվում է Զինաստանում գերմանական ազդեցության հաստատման գոտու։ Բացի տնտեսական գործունեությունից, գերմանացիները Ցինդառոյում իհմնում են բարձրագույն դպրոց, որտեղ չինացի երիտասարդները ստանում էին գերմանական կրթություն և

պաշտոններ ստանձնում չինական պետական համակարգում՝ փաստորեն դառնալով գերմանական ազդեցության տարածողներ Չինաստանում:

19-րդ դ. 90-ական թթ. ուժեղանում է նաև Ռուսաստանի տնտեսական ու քաղաքական ազդեցությունը Ցինյան կայսրությունում: Օգտվելով Սիմոնոսեկիի հաշտության պայմանագրով ճապոնիային վճարելիք ռազմատուգանքի կապակցությամբ առաջացած Չինաստանի ֆինանսական դժվարություններից՝ 1895 թ. հունիսին Պետերբուրգում կնքված ռուս-չինական արձանագրության համաձայն, Ռուսաստանը 4%-ով մանջուրական կառավարությանն էր տրամադրում 400 մլն. ֆրանկ ռոկով փոխառություն, որի մարումը պետք է իրականացվեր Ցինյան կայսրության ծովային մաքսերից ստացված եկամուտների հաշվին: Չինաստանին տրամադրված փոխառության առնչությամբ, Պետերբուրգ կենտրոնով և Շանհայում գլխավոր գրասենյակով 1895 թ. վերջին իր գործունեությունն է սկսում Ռուս-Չինական բանկը, որի կապիտալների կեսից ավելին պատկանում էր ֆրանսիական խոշորագույն բանկերին:

1896 թ. ապրիլին կայացած ռուս-չինական համաձայնությամբ Ռուսաստանը առևտրական գործունեության ծավալման համար դեպի Դեղին ծովը հոսող Յանցզի գետի Հանկոու նավահանգստում անժամկետ վարձակալությամբ ստանում էր մոտ 26 դեսյատին հողատարածության կոնցեսիա: Չինաստանում Ռուսաստանի ծեռք բերած այդ առաջին կոնցեսիոն տարածքը օժտվում էր էքստերիտորիալության իրավունքներով և ուղղակիորեն կառավարվելու էր Հանկոուի ռուսական հյուպատոսի կողմից: Կոնցեսիայով Ռուսաստանին տրված այդ տարածքում բնակվող չինացիները իրենց տները և հողամասերը մեկ տարվա ընթացքում միայն ռուսական կառավարությանը վաճառելով, պետք է հեռանային Ռուսաստանի իրավասության ներքո անցած տարածքի սահմաններից: Անհրաժեշտության դեպքում

Ռուսաստանը իր ձեռք բերած այդ կոնցեսիոն տարածքում կարող էր կառուցել նավամատուց, սակայն առանց խոչընդոտներ ստեղծելու չինական և օտարերկրյա նավերի նավարկությանը:

1896 թ. հունիսի 3-ին 15 տարվա ժամկետով Մոսկվայում ստորագրվում է Ճապոնիայի հնարավոր հարձակման դեմ ուղղված Ռուսաստանի և Չինաստանի պաշտպանողական ռազմական դաշինքի գաղտնի պայմանագիրը: Այդ ռազմական դաշինքի համաձայն՝ Արևելյան Ասիայում ռուսական տիրույթների կամ Չինաստանի ու Կորեայի վրա ճապոնիայի հարձակման դեպքում պայմանավորվող կողմերը պարտավորվում էին միմյանց օգնություն ցուցաբերել իրենց բոլոր ցամաքային ու ռազմածովային ուժերով: Պատերազմի ընթացքում չինական բոլոր նավահանգիստներում ռուսական ռազմանավերին պետք է ցուցաբերվեր անհրաժեշտ օգնություն: Պայմանավորվող կողմերը պարտավորվում էին հաշտության պայմանագիրը ստորագրել միայն փոխադարձ համաձայնության դեպքում:

Դեռևս 1891 թ. Ռուսաստանը ձեռնամուխ էր եղել Չեյաբինսկը ճապոնական ծովի ռուսական Վլադիվոստոկ նավահանգստի հետ միացնող 7.416 կմ երկարությամբ Մեծսիբիրյան երկաթուղագծի կառուցմանը: Այժմ, ռուս-չինական ռազմական դաշինքի համաձայն, ճապոնիայի դեմ հնարավոր պատերազմի դեպքում իր ցամաքային զորքերը ռազմական գործողությունների վայրերը փոխադրելու և դրանց անհրաժեշտ մատակարարումը ապահովելու նպատակով՝ Ռուսաստանը իրավունք էր ստանում Մեծսիբիրյան երկաթուղագիծը Չիտա քաղաքից դեպի Վլադիվոստոկ ուղղակիորեն կառուցել Մանջուրիայի տարածքով՝ այդպիսով իր ազդեցությունը հաստատելով Չինաստանի հյուսիսարևելյան շրջանների վրա:

Գերմանիայի կողմից Շանդուն թերակղզու Ցզյաոչժոու ծովածոցի վարձակալումը ռուսական կառավարությանը հարմար առիթ է ծառայում Դեղին ծովի չինական Լյաոդունյան թերակղզում

հաստատվելու և դրա չսառչող Պորտ-Արտուր և Դայան նավահանգիստները իր խաղաղօվկիանոսյան ռազմածովային նավատորմի հենակետերը դարձնելու համար: Ցզյառշոռու ծովածոցի Ցինդառ նավահանգստում գերմանական ռազմածովային դեսանտից անմիջապես հետո՝ 1897 թ. դեկտեմբերի 14-ին, Ռուսական Էսկադրան խարիսխ է ձգում Լյաոդունյան թերակղզու Պորտ-Արտուր նավահանգստում: Մանջուրական կառավարությանը 1898 թ. մարտի 3-ին Պետերբուրգի ներկայացրած վերջնագրի նշված օրը՝ մարտի 27-ին, Ռուսաստանի և Չինաստանի միջև Պեկինում կնքվում է համաձայնություն՝ 25 տարվա ժամկետով և այնուհետև այն երկարացնելու պայմանով Լյաոդունյան թերակղզու հարավային մասը՝ հարակից կղզիներով, Պորտ-Արտուր և Դայան նավահանգիստներով լիակատար և բացարձակ իրավունքներով Ռուսաստանին վարձակալության հանձնելու և նշված տարածքից չինական ցամաքային գինված ուժերը ամբողջությամբ դուրս բերելու մասին: Ռուսաստանն իրավունք էր ստանում պաշտպանական նպատակներով Լյաոդունյան թերակղզու վարձակալած տարածքում, Պորտ-Արտուր և Դայան նավահանգիստներում իր ցամաքային և ռազմածովային ուժերի համար կառուցել անհրաժեշտ շինություններ, ամրություններ և տեղակայել կայագործներ: Պորտ-Արտուրը՝ որպես բացառապես ռուսական ռազմածովային նավահանգիստ, բացի չինական նավերից, պետք է փակ լիներ բոլոր երկրների ռազմական և առևտրական նավերի համար: Ինչ վերաբերում էր վարձակալված թերակղզու Դայան նավահանգստին, ապա նրա ջրային տարածության մի որոշակի մասը բաց էր լինելու բոլոր երկրների առևտրանավերի համար: Ռուսաստանի վարձակալած Լյաոդունյան թերակղզում և նրա հարակից ծովային տարածություններում բոլոր ցամաքային և ռազմածովային ուժերի իրամանատարությունը, ինչպես նաև բարձրագույն քաղաքացիական կառավարումը պետք է իրականացնեին ռուսական իշխանությունները: Լյաոդունյան

թերակղում վարձակալված տարածքից հյուսիս ստեղծվելու էր չեզոք գոտի, որտեղի քաղաքացիական կառավարումը ամբողջությամբ պետք է իրականացնեին չինական իշխանությունները: Չեզոք գոտում չինական զորքեր կարող էին տեղաբաշխվել միայն ռուսական իշխանությունների թույլտվությամբ: Մանջուրական կառավարությունը պարտավորվում էր օտարերկրացիներին չեզոք գոտում տարածքներ զիջել, երկաթուղագծեր, տարբեր տեսակի արդյունաբերական ձեռնարկություններ կառուցելու, հանքարդյունաբերությամբ զբաղվելու կոնցեսիաներ տրամադրել, օտարերկյա առևտրի համար չեզոք գոտու նավահանգիստներից որևէ մեկը բաց անել միայն Ռուսաստանի համաձայնության դեպքում: Այնուհետև մանջուրական կառավարությունը համաձայնվում էր, որ 1896 թ. ռուս-չինական պաշտպանողական ռազմական դաշինքի համաձայն՝ Մանջուրիայի տարածքով դեպի Վլադիվոստոկ կառուցվող Մեծսիբիրյան երկաթուղագծի շարունակությունը հանդիսացող չինական հատվածը՝ Չին-Արևելյան երկաթուղին Ռուսաստանը չինական Խարբին քաղաքից չեզոք գոտու Զանչուն և Մուկդեն քաղաքներով ուղիղ գծով միացներ Դալյան և Պորտ-Արտուր նավահանգիստների հետ: Այնուհետև, 1899 թ. մայիս-հունիս ամիսներին կայացած ռուս-չինական համաձայնությամբ, մանջուրական կառավարությունը պարտավորվում էր ռուսական սահմանից Չին-Արևելյան երկաթուղագիծը Պեկինի հետ միացնող հատվածի կառուցման կոնցեսիան տրամադրել բացառապես Ռուսաստանին: Այդպիսով, ռուսական սահմանից Չին-Արևելյան երկաթուղագիծը Պեկինի հետ միացնելու հետևանքով Ռուսաստանը ուղղակիորեն կապվում էր Յինյան կայսրության մայրաքաղաքի հետ: Մյուս կողմից, ռուսական սահմանից Չին-Արևելյան երկաթուղագիծը Պեկինի հետ միացնելու հետևանքով Ռուսաստանը դրա շարունակությունը հանդիսացող Պեկին-Հանկոու հատվածով հասնելու էր Յանցզի և այնուհետև այդ գետով դուրս էր գալու Դեղին ծով՝ անմիջականորեն կապ

հաստատելով իր «Վարձակալած» Լյառդունյան թերակղզու Պորտ-Արտուր և Դայան ռազմածովային նավահանգիստների հետ:

19-րդ դ. վերջին երեսնամյակում համաշխարհային տնտեսության ընդհանուր արտադրանքի ծավալում առաջնությունը կորցրած անգլիական բուրժուազիան հանդես է գալիս իր արդյունաբերության զարգացման դանդաղ տեմպերը փոխհատուցել նոր գաղութներ ձեռք բերելու, հետամնաց երկրներում ազդեցության գոտիներ հաստատելու, դրանք տարբեր ծներով անխնա շահագործման ենթարկելու և առավելագույն շահույթ կորզելու միջոցով: Այդ առումով 19-րդ դ. 90-ական թթ. Անգլիան աշխուժացնում է իր տնտեսական ներթափանցման գործընթացը Զինաստանում, որտեղ, այլ երկրների համեմատությամբ, դեռևս շարունակում էր պահպանել իր առաջնությունը: Այսպես. 1893 թ. չինական արտադրանքների 80%-ը արտահանվում էր Անգլիա և անգլիական գաղութներ, իսկ Անգլիայից և նրա գաղութներից Զինաստան էր արտահանվում արդյունաբերական ապրանքների 60%-ը: Զինաստանի հետ 1895 թ. կատարված 180 մլն. դոլար առևտուրի ընդհանուր ծավալում Անգլիայի և նրա գաղութների բաժինը կազմել է 144 մլն. դոլար, այսինքն՝ Զինաստանի հետ բոլոր երկրների կատարած ամբողջ առևտուրի ավելի քան 80%-ը: Զինաստանի հետ կատարվող առևտուրում շատ մեծ էր անգլիական ֆիրմաների դերը: 1894 թ. Զինաստանի նավահանգիստներում գործող արտասահմանյան 500 առևտրական ֆիրմաներից 390-ը պատկանում էր անգլիացիներին, այսինքն բոլոր ֆիրմաների 78%-ը: Զինաստանում անգլիական առևտուրի խոշորագույն կենտրոններն էին Շանհայ և Գուանչժոու նավահանգիստները: Մեծանում է Զինաստանի տնտեսության տարբեր բնագավառներում ներդրվող անգլիական կապիտալի ծավալը: 19-րդ դ. վերջին տասնամյակում Զինաստանում ներդրված անգլիական կապիտալը գրեթե կրկնապատկվում է՝ կազմելով 250 մլն. դոլար: 19-րդ դ. վերջին Զինաստանում ներդրված արտասահմանյան կապիտալների ավելի

քան 30%-ը և մանջուրական կառավարությանը տրամադրած 55 մլն. ֆունտ ստեղծինգ ընդհանուր վարկի 22 մլն. ֆունտ ստեղծինգը, այսինքն՝ 40%-ը պատկանում էր Անգլիային: Չինաստանի երկաթուղագծային ցանցի շինարարության բնագավառում ներդրված 56 մլն. ֆունտ ստեղծինգ կապիտալի 28 միլիոնը, այսինքն՝ օտարերկոյա ներդրված կապիտալի 49%-ը պատկանում էր Անգլիային: Չինաստանի 14 հազար վերստ կազմող երկաթուղագծային ցանցի 7 հազարը, այսինքն՝ ամբողջ երկաթուղագծային ցանցի 50%-ը նույնպես պատկանում էր Անգլիային:

Չինաստանում կապիտալների ներդրման գործում առավելապես մեծ էր Հեռավոր Արևելքում անգլիական չորս խոշորագույն բանկերից մեկի՝ 1865 թ. հիմնված անգլո-չինական Հոնկոնգ-Շանհայի բանկի դերը, որը ֆինանսավորում էր առևտրական ֆիրմաներին, արդյունաբերական ձեռնարկություններին, վարկեր էր տրամադրում մանջուրական կառավարությանը: Չինաստանում գործող անգլիական բանկերը գերիշխող դիրքեր ունեին և ստիպում էին չինացի ձեռնարկատերերին բանկային գործարքներ կնքել միայն անգլիական բանկերի հետ: Անգլիան էր սահմանում Չինաստանից արտահանվող և ներմուծվող արդյունաբերական ապրանքների մաքսատուրքերը: Այսպես. Անգլիայի ճնշմամբ, 1896 թ. հունիսին մանջուրական կառավարության հրամանագրով արտասահմանյան սարքավորումներով արտադրված չինական արդյունաբերական արտահանվող ապրանքների վրա սահմանվում էր 10%, իսկ ներմուծվող ապրանքների վրա՝ 5-7% մաքսատուրք: 1859 թվականից Անգլիան էր վերահսկում Չինաստանի ծովային մաքսերը և դրանց գլխավոր հրահանգիչը անգլիացի պաշտոնյա էր: Անգլիական ռազմական մասնագետները կազմակերպում և հրահանգավորում էին չինական մի քանի գորամասեր: Անգլիական շոգենավագնացության խոշորագույն ընկերություններն էին

իրականցնում ոչ միայն Զինաստանի ծովային ու գետային հիմնական նավահանգիստների, այլև Զինաստանի, Եվրոպայի ու Հեռավոր Արևելքի երկրների միջև կատարվող ապրանքների տեղափոխման և ուղևորների փոխադրման գերակշիռ մասը:

Ցինյան կայսրությունում Մեծ Բրիտանիայի քաղաքական ու տնտեսական դիրքերի և ազդեցության ամրապնդման գործում Պեկինի անգլիական դեսպանության գլխավորությամբ շատ մեծ դեր էին կատարում անգլիական բազմաթիվ դիվանագիտական ներկայացուցությունները: Օրինակ՝ 1865 թվականից Շանհայում գործում էր անգլիական Գերագույն հյուպատոսական դատարանը, իսկ մի շարք քաղաքներում և նավահանգիստներում՝ անգլիական նահանգային հյուպատոսական դատարանները: Հյուպատոսները և դիվանագիտական այլ ներկայացուցիչները մեծ ջանքեր էին գործադրում Զինաստանում անգլիական տնտեսական և քաղաքական շահերը պաշտպանելու ուղղությամբ: Անգլիայի գաղութային քաղաքականության շահերին էին ծառայում նաև Զինաստանում իրենց գործունեությունը ծավալած անգլիկանական Եկեղեցու միսիոներները և միսիոներական կազմակերպությունները՝ մանջուրական կայսրության վերաբերյալ համապատասխան մարմիններին հաղորդելով իրենց հայտնի դարձած անհրաժեշտ ռազմական, տնտեսական և քաղաքական բնույթի տեղեկությունները: Մեծ Բրիտանիայի գաղութային քաղաքականության իրականացման գործում կարևոր դեր էր կատարում Զինաստանում գործող անգլիական խոշորագույն առևտրական ընկերությունների ու ֆիրմաների, ֆինանսական շրջանների ներկայացուցիչներից, գաղութային վարչակարգի պաշտոնյաներից, Հեռավոր Արևելքի անգլիական գաղութներում ծառայող պաշտոնաթող գինվորականներից 1889 թ. Լոնդոնում ստեղծված «Զինական ընկերությունը», որն իր բաժանմունքներն ուներ Ցինյան կայսրության բոլոր բաց նավահանգիստներում:

Ռուսաստանի կողմից Լյառդունյան թերակղզին վարձակալման միջոցով ռազմակալման ենթարկելու և Պորտ-Արտուր նավահանգիստը ռուսական խաղաղօվկիանոսյան ռազմածովային նավատորմի հենակետի վերածելու իրողությունը լուրջ տագնապ է առաջացնում անգլիական կառավարող շրջաններում, որոնք, որպես հակակշիռ Զինաստանի հյուսիսարևելքում Ռուսաստանի ռազմաքաղաքական ազդեցության հաստատման, հանդես են գալիս Շանդուն թերակղզում իրենց ռազմական ներկայությունը հաստատելու պահանջով։ Անգլիայի ռազմաքաղաքական ճնշման արդյունքում 1898 թ. հունիսի 7-ին Պեկինում ստորագրված համաձայնությամբ մանջուրական կառավարությունը վարձակալման պայմաններով, բացահեկ իրավասության իրավունքներով, հարակից կղզիներով Անգլիային էր զիջում Շանդուն թերակղզու Վեյհայվեյ նավահանգիստը այնքան ժամանակով, քանի դեռ Պորտ-Արտուրը կլիներ ռուսական տիրապետության ներքո։ Անգլիան իրավունք էր ստանում վարձակալած Դեղին ծովի Շանդուն թերակղզու Վեյհայվեյ նավահանգստի տարածքում կառուցել ամրություններ, տեղակայել զորքեր և պաշտպանական նպատակներով ձեռնարկել անհրաժեշտ միջոցառումներ։ Նույն թվականի հունիսին Անգլիան 99 տարով վարձակալության է վերցնում Հարավ-Զինական ծովի Յայուլուն (Կոուլուն) թերակղզու նաև հյուսիսային մասը և հարակից կղզիները։

19-րդ դ. 90-ական թթ. վերջերին Անգլիան շարունակում էր ընդլայնել իր ազդեցության գոտիները Յինյան կայսրությունում։ Այսպես. 1897 թ. մարտին Անգլիան մանջուրական կառավարությանը ստիպում է բաց անել Հարավ-Զինական ծովը հոսող Սիցոյան գետը՝ անգլիական արդյունաբերական ապրանքները դեպի Յինյան կայսրության ներքին նահանգները մղելու համար։ Այնուհետև Անգլիան մանջուրական կառավարությանը հարկադրում է սահմանային «ուղղում» կատարել և իր գաղութ Բիրմային զիջել սահմանակից որոշ չինական

տարածքներ և համաձայնվել ապագայում Բիրմայից Երկաթուղային կապ ստեղծել չինական Երկաթուղագծային ցանցի հետ: Ենթարկվելով Անգլիայի ճնշմանը՝ 1898 թ. փետրվարին մանջուրական կառավարությունը Յանցզի գետի ավազանի կենտրոնական 10 նահանգները պաշտոնապես ճանաչում է անգլիական շահերի ազդեցության շրջան: Չինաստանի գետային ցանցը նավարկելի էր դառնում օտարերկրյա բոլոր առևտրանավերի համար, որի հետևանքով անգլիական շղգենավերը հնարավորություն էին ստանում Արևելա-Չինական ծովից Յանցզի գետով իրենց ազդեցության շրջանները ներթափանցելու համար: Մանջուրական կառավարությունը համաձայնվում էր, որ Չինաստանի ծովային մաքսերի գլխավոր վերահսկիչի պաշտոնը շարունակեր զբաղեցնել անգլիացի պաշտոնյան, քանի դեռ այլ տերությունների համեմատությամբ Անգլիան կպահպաներ իր առաջնությունը Չինաստանի հետ կատարվող առևտրում: Մանջուրական կառավարությունը համաձայնվում է նաև Չինաստանի ներքին ջրերը բացել օտարերկյա նավարկության համար, որը նույնպես առավելություններ էր ստեղծում անգլիական առևտրին:

Չինաստանում ազդեցության գոտիներից բացի, անգլիական գործարար շրջանները ծեռք էին բերում նաև տարբեր բնույթի կոնցեսիաներ: Այսպես. 1898 թ. մայիսին անգլիական մի շարք ֆիրմաներ Հոնկոնգ-Շանհայի բանկի գլխավորությամբ ստեղծում են Չինաստանում նավեր, նավահանգիստներ և Երկաթուղագծեր կառուցելու սինդիկատ: Արդեն սեպտեմբերին այդ սինդիկատը ստանում է Գուանչժոու-Ցզյուլուն, Շանհայ-Նանկին, Հանչժոու-Նինբո Երկաթուղագծերը կառուցելու կոնցեսիան: Այդ Երկաթուղագծերի շահագործումից ստացված շահույթի 20%-ը պատկանելու էր անգլիական ֆիրմաներին, իսկ Երկաթուղագծերի վարչակազմում բոլոր պատասխանատու և ղեկավար պաշտոնները պետք է զբաղեցնեին միայն Եվրոպացի մասնագետները:

Անգլիական գործարար շրջանները ստեղծում էին նաև օտարերկրյա կապիտալի համագործակցությամբ կոնցեսիաները համատեղ շահագործելու ընկերություններ: Այսպես. անգլիական և իտալական համատեղ կապիտալով ստեղծվում է Պեկինի սինդիկատը, որը մենաշնորհային իրավունք է ստանում Շանսի և Հենան նահանգներում արդյունահանելու քարածուխ, նավթ ու երկաթահանք: 1899 թ. փետրվարին անգլիական և ամերիկյան բանկերը համաձայնության են գալիս Չինաստանում ձեռք բերելիք կոնցեսիաներում համատեղ մասնակցություն ունենալու վերաբերյալ:

Անգլիացիները մրցակից երկրների հետ համաձայնություններ էին կայացնում նաև երկաթուղագծային կոնցեսիաները սահմանազատելու հարցում: 1898 թ. սեպտեմբերին անգլիական և գերմանական բանկերի միջև կնքված համաձայնությամբ՝ Յանցզի գետի ավազանը և Շանսի նահանգը ճանաչվում էր անգլիական շահերի գոտի, իսկ Շանտուն թերակղզին և Հուանհե գետի ավազանը՝ գերմանական ազդեցության գոտի:

Չինաստանում երկաթուղագծային կոնցեսիաներ ստանալու պայքարում 1899 թ. ապրիլին ձեռք բերված պայմանավորվածության համաձայն՝ Չինական Մեծ պարսպից հյուսիս գտնվող Յինյան կայսրության տարածքը Անգլիան ճանաչում էր բացառապես Ռուսաստանի «ազդեցության գոտի»: Իր հերթին Ռուսաստանը Յանցզի գետի ավազանը ճանաչում էր անգլիական «ազդեցության գոտի»:

Ֆրանսիան նոյնպես պայքար էր մղում Չինաստանում «ազդեցության գոտիներ» հաստատելու և կոնցեսիաներ ձեռք բերելու համար: Սիմոնոսեկիի հաշտության պայմանագրից անմիջապես հետո Ֆրանսիան առաջին տերությունն էր, որ հանդես եկավ –Ճապոնա-չինական պատերազմում պարտություն կրած Չինաստանում իր գաղութային շահերի պաշտպանությամբ:

Զինաստանի հետ 1895 թ. հունիսին կնքած երկու համաձայնագրերով Ֆրանսիան ստիպում է մանջուրական կառավարությանը «սահմանային ուղղումներ» կատարել ֆրանսիական Հնդկաչին գաղութի հետ և նրան զիջել չինական որոշ տարածքներ, նվազեցված մաքսերով ֆրանսիական առևտրի համար բաց անել սահմանամերձ չինական չորս քաղաքներ, ինչպես նաև ֆրանսիական հանքարդյունաբերողներին առավելագույն արտոնություններ շնորհել Զինաստանի հարավային երեք նահանգներում և թույլատրել այդ երեք նահանգները երկաթուղագծերով միացնել ֆրանսիական Հնդկաչինի հետ: 1896 թ. ֆրանսիացիներն իրավունք են ստանում ֆրանսիական Հնդկաչինի հյուսիսային Լանգշոն քաղաքը երկաթուղագծով միացնել Զինաստանի հարավային Գուանսի նահանգի Լունչժոու քաղաքի հետ: 1897 թ. մանջուրական կառավարությունը պարտավորվում է որևէ այլ տերության չզիջել ֆրանսիական Հնդկաչինի մոտ գտնվող Հարավ-Զինական ծովի 34 հազ. քառ. կմ. կազմող Հայնան կղզին: 1898 թ. ապրիլին Ֆրանսիան 99 տարով վարձակալության է վերցնում Հարավ-Զինական ծովի Գուանչժոուվան ծովածոցը՝ Զինաստանի Գուանդուն նահանգի ափին: Ֆրանսիան իրավունք է ստանում երկաթուղագիծ կառուցելու և զինված ուժեր պահելու Գուանչժոուվանի տարածքում: Զինաստանը պարտավորվում էր նաև որևէ տերության չզիջել Ֆրանսիական Հնդկաչին գաղութին սահմանակից չինական հարավային նահանգների տարածքները: Այդպիսով, Ֆրանսիան իր «ազդեցության գոտին» է հաստատում Զինաստանի հարավային նահանգներում: Զինաստանը պարտավորվում էր, որ փոստային ծառայություն կազմակերպելու դեպքում վարչակազմը պետք է ղեկավարեր ֆրանսիական կառավարության երաշխավորությամբ նշանակված ֆրանսիացի պաշտոնյան:

Ռուսաստանի և Ֆրանսիայի աջակցությամբ Բելգիական սինդիկատը 1897 թ. հունիսին ստանում է Պեկինը Յանցզի գետի

Հանկոու նավահանգստի հետ միացնելու երկաթուղագծային կոնցեսիան: Այդպիսով, հանձին Բելգիական սինդիկատի, որի կապիտալների $\frac{3}{4}$ -ը պատկանում էր ֆրանսիական բանկերին, Ռուսաստանը և Ֆրանսիան փաստորեն իրենց վերահսկողությունն էին հաստատելու Ցինյան կայսրության մայրաքաղաք Պեկինը Յանցզի գետի ավազանի անգլիական ազդեցության գոտու կենտրոն Հանկոու նավահանգստի հետ միացնող երկաթուղագծի վրա:

Եվրոպական տերություններից միայն Իտալիան, ջախջախիչ պարտություն կրած լինելով Հաբեշստանի դեմ 1894-1895 թթ. մղած գաղութային պատերազմում, չի կարողանում Զինաստանում «վարձակալության» վերցնել որևէ նավահանգիստ կամ իր «ազդեցության գոտին» հաստատել չինական որևէ տարածքի վրա:

1894-1895 թթ. Ճապոնա-չինական պատերազմում հաղթանակած և չինական

Տայվան ու Պենխովեդառ կղզիները զավթած ճապոնիան նույնպես հանդես է գալիս Զինաստանում իր ազդեցության գոտիները հաստատելու քաղաքականությամբ: 1898 թ. ապրիլին ճապոնիան պարտավորեցնում է մանջուրական կառավարությանը որևէ մեկ այլ տերության չգիշել կամ վարձակալության չհանձնել Սիմոնոսեկիի հաշտությամբ իր տիրապետության տակ անցած Տայվան կղզու հանդիպակաց կողմում գտնվող Զինաստանի ֆուցզյան նահանգի որևէ մի տարածք:

ԱՄՆ-ի բուրժուական շրջաններն իրենց գաղութային քաղաքականության բնագավառում մեծ հետաքրքրություն էին դրսևորում նաև Զինաստանի նկատմամբ: Սակայն, 19-րդ դ. վերջերին, զբաղված լինելով Կենտրոնական Ամերիկայում և խաղաղօվկիանոսյան տարածաշրջանում իրենց գաղութային նպատակներն իրականացնելու քաղաքականությամբ, անմասն են մնում Յանյան կայսրությունը «ազդեցության գոտիների» բաժանելու և տարածքներ «վարձակալելու» համար տերությունների պայքարին

մասնակցելուց: Մյուս կողմից, Զինաստանը «ազդեցության գոտիների» բաժանելու և տարածքներ «վարձակալելու» համար մղվող պայքարին ԱՄՆ-ի մասնակցությանը դիմադրում էին ռազմաքաղաքական և դիվանագիտական առումով նրանից ավելի հզոր տերությունները: Այդ պատճառների հետևանքով 19-րդ դ. վերջերին, այլ տերությունների համեմատությամբ, ԱՄՆ-ը գերիշխող տնտեսական և քաղաքական դիրքեր չուներ Զինաստանում: Մինչև 1894 թ. չինական բաց նավահանգիստներ էին ժամանում տարեկան ընդամենը 63 ամերիկյան առևտրանավեր: Զինաստանի հետ կատարվող առևտրում ամերիկյան առևտրանավերի բեռնատարողությունը կազմում էր ներմուծվող օտարերկրյա բոլոր առևտրանավերի բեռնատարողության ընդամենը 1%-ը: 19-րդ դ. վերջին տասնամյակում Զինաստանից ԱՄՆ արտահանված արտադրանքների ընդհանուր գումարը կազմել է 64 մլն., իսկ ԱՄՆ-ից Զինաստան ներմուծված արտադրանքներինը՝ 22 մլն. ամերիկյան դոլար: Դարավերջին Զինաստանում ամերիկյան երկարատև կապիտալ ներդրումները հասնում էին 25 մլն. դոլարի՝ կազմելով ԱՄՆ-ի արտասահմանյան կապիտալ ներդրումների ընդամենը 5%-ը: ԱՄՆ-ին էր պատկանում օտարերկրյա կապիտալների ներդրմամբ Զինաստանում կառուցված 14 հազ. վերստ կազմող երկաթուղային ցանցի 575 վերստանց հատվածը: Ամերիկյան ծեռնարկատերերի սեփականությունն էին Շանհայում ծխախոտի մեկ, մանածագործական արդյունաբերության երկու ֆաբրիկաները, ինչպես նաև նավթամթերքների պահպանման երկու պահեստարանները:

Խաղաղօվկիանոսյան տարածաշրջանում 1898 թ. բռնակցելով Հավայան կղզիները, նույն թվականին իրենց տիրապետությունը հաստատելով Խսպանա-ամերիկյան պատերազմում պարտված Խսպանիայի գաղութային տիրույթներ Մարիանյան արշիպելագի Գուամ կղզու, Ֆիլիպինների, իսկ 1899 թ. Արևելյան Սամոայի վրա՝ ԱՄՆ-ի կառավարող շրջաններն իրենց զավթողական

քաղաքականության ուղղությունը դարձնում են դեպի Զինաստան: Սակայն, քանի որ 19-րդ դ. 90-ական թթ. վերջին Ցինյան կայսրությունն Եվրոպական տերությունների միջև արդեն բաժանված էր «ազդեցության գոտիների» և «վարձակալման» միջոցով ռազմակալված տարածքների, ուստի ամերիկյան դիվանագիտությունը 1899 թ. սեպտեմբերին Զինաստանի նկատմամբ հոչակում է այսպես կոչված «բաց դռների» և «հավասար հնարավորությունների» քաղաքականություն իրականացնելու դոկտրինան: Արդյունաբերական արտադրանքների ծավալով արդեն 1894 թ. առաջ անցնելով բոլոր զարգացած կապիտալիստական երկրներից և գրավելով առաջին տեղն աշխարհում՝ ամերիկյան բուրժուական շրջանները «բաց դռների» և «հավասար հնարավորությունների» դոկտրինայի իրականացման միջոցով պետք է ներթափանցեին և իրենց տնտեսական գերիշխանությանը ենթարկեին Եվրոպական տերությունների միջև «ազդեցության գոտիների» և «վարձակալված» տարածքների բաժանված Ցինյան կայսրությանը:

1842 թվականի Նանկինի անգլո-չինական հաշտության պայմանագրից ի վեր պատերազմներով, ռազմական ու դիվանագիտական հզոր ճնշումներով Եվրոպական տերությունների, ԱՄՆ-ի, Ռուսաստանի և Ճապոնիայի կողմից մանջուրական կառավարությանը պարտադրած անիրավահավասար պայմանագրերով արդեն կիսազարդութիւն վերածված Ցինյան կայսրությունը 19-րդ դարի վերջին բաժանվում է ռազմաքաղաքական ու տնտեսական «ազդեցության գոտիների» ու «վարձակալված» տարածքների:

1911-1913 թթ. ԶԻՆԱԿԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ

19-րդ դարի վերջին Զինաստանը արդեն բաժանված էր «ազդեցության գոտիների» և «վարձակալված» տարածքների՝ վերածվելով տերությունների կիսագաղութի: Օտարերկրյա ճնշումը, ինչպես նաև ատելությունը իշխող մանջուրական արքայատոհմի նկատմամբ Զինաստանում առաջացնում է համաժողովրդական ապստամբություն, որը տևում է 1899-1901 թթ. և պատմության մեջ հայտնի է «Իխետուան» (Եվրոպացիների կողմից արհամարհական «Բոքսյորների ապստամբություն») անունով: Այդ ապստամբությունը շախչախվում է Եվրոպական և ճապոնական միացյալ բանակների կողմից: Սակայն այդ ապստամբության պարտությունը չի դադարեցնում չին ժողովրդի պայքարը մանջուրական արքայատոհմի տիրապետության դեմ:

1905 թ. սեպտեմբերի 18-ին Տոկիոյում կայացած չին հեղափոխականների հիմնադիր համագումարում ծնավորվում է Զինական միացյալ հեղափոխական կուսակցությունը, որի արեգիդենտ է ընտրվում հայտնի հեղափոխական Սուն Յաթ-Սենը: Այդ կուսակցության ծրագրային պահանջներն էին՝ մանջուրական արքայատոհմի տապալում, Զինաստանի նախկին փառքի և հզորության վերականգնում, հանրապետության հոչակում և հողի նկատմամբ իրավունքների հավասարեցում: Զինական հեղափոխական շարժման վրա որոշակի ազդեցություն է թողնում 1905-1907 թթ. ռուսական բոլտուա-դեմոկրատական հեղափոխությունը:

1911 թ. սեպտեմբերին Կենտրոնական Զինաստանի Սըչուան նահանգում բռնկվում է ժողովրդական խոշոր ապստամբություն, որը դառնում է չինական Մեծ հեղափոխության սկիզբը: Զինաստանի հյուսիս-արևելքում գտնվող Ռիչան քաղաքում 1911 թ. հոկտեմբերի 10-ին ապստամբում է տեղի կայազորը: Հաջորդ օրը ապստամբության ղեկավարները որոշում են Զինաստանը հոչակել

հանրապետություն և տապալել մանջուրական արքայատոհմը: Սկսված հեղափոխությանը մեծ մասնակցություն է ցուցաբերում Սուն Յաթ-Սենի գլխավորած կուսակցությունը: Ծավալվող հեղափոխության հետևանքով արդեն 1911 թ. նոյեմբերի վերջին մանջուրական կառավարությունից իրենց անկախությունն են հոչակում Զինաստանի 18 նահանգներից 15-ը: Եվրոպական տերությունների միջամտությունը կանխելու նպատակով ապստամբության ղեկավարները պարտավորվում են երաշխավորել նրանց հատուկ շահերը Զինաստանում: Ուստի հոկտեմբերի 18-ին տերություններն իրենց չեզոքությունն են հոչակում այդ ապստամբության նկատմամբ: 1912 թ. հունվարի 1-ին ապստամբության կենտրոն Նանկին քաղաքում Զինաստանը հոչակվում է հանրապետություն: Նույն օրը Զինաստանի հանրապետության ժամանակավոր պրեզիդենտ է ընտրվում Սուն Յաթ-Սենը: Հունվարի 3-ին ստեղծվում է ժամանակավոր հեղափոխական կառավարություն: Բայց այդ կառավարությունը բուրժուական հեղափոխականների և ավանդական բյուրոկրատիայի ու լիբերալների միջև կնքված քաղաքական դաշինք էր: Ուստի այդ կառավարությունը չի իրականացնում արմատական հեղափոխական վերափոխումներ:

1912 թ. հունվարի 28-ին աշխատանքներն է սկսում հեղափոխական պառլամենտը, որն իր գործունեությունն է շարունակում մինչև 1913 թ. ապրիլի 8-ը: Այդ հեղափոխական պառլամենտը 1912 թ. մարտի 11-ին ընդունում է չինական հանրապետության ժամանակավոր սահմանադրությունը: Սակայն Հյուսիսում մանջուրա-չինական ռեակցիան հանդես է գալիս հեղափոխությունը ճնշելու նախաձեռնությամբ: Այդ նպատակով դեռևս 1911 թ. նոյեմբերի 2-ին Ցինյան կառավարությունը Հյուսիսում պրեմիեր-մինիստրի պաշտոնում է նշանակում միապետական գեներալ Յուան Շի-Կային, որը հեղափոխության դեմ կովող բանակների գլխավոր հրամանատարն էր: Այնուամենայնիվ,

հեղափոխական Հարավի և հակահեղափոխական Հյուսիսի միջև կայացած բանակցությունների արդյունքում համաձայնություն է ձեռք բերվում ռազմական գործողությունները դադարեցնելու մասին: 1912 թ. փետրվարի 12-ին Պեկինում հրապարակվում է հրամանագիր՝ մանկահասակ մանջուրական կայսր Պու Ի Սյուանտունին գահընկեց անելու մասին: Երկու օր անց՝ փետրվարի 14-ին, հօգուտ Յուան Շի-Կայի Սուն Յաթ-Սենը հրաժարվում է պրեզիդենտի պաշտոնից: 1912 թ. ապրիլի 5-ին Յուան Շի-Կայը մայրաքաղաքը Նանկինից տեղափոխում է Հյուսիս: Այժմ հակահեղափոխական ուժերն արդեն հանդես են գալիս հեղափոխությունը ճնշելու միջոցառումներով: Այդպիսի պայմաններում 1912 թ. օգոստոսին Սուն Յաթ-Սենը ստեղծում է քաղաքական նոր կուսակցություն՝ Գոմինդան (Ազգային կուսակցություն) անունով: Ի պատճախ հակահեղափոխական ուժերի քաղաքականության՝ 1913 թ. հունիսին Սուն Յաթ-Սենը ապստամբություն է բարձրացնում Գուանդուն նահանգում:

Այդպիսով, 1913 թ. հունիս-օգոստոս ամիսներին Չինաստանում սկսվում է երկրորդ հեղափոխությունը, որը, սակայն, պաշտպանություն չի գտնում ժողովրդական զանգվածների կողմից, որի հետևանքով Յուան Շի-Կայի գործերը ճնշում են այն: Նույն թվականի նոյեմբերին Յուան Շի-Կայը արգելում է Գոմինդանի գործունեությունը, ցրում պառլամենտը, 1914 թ. մայիսին հրապարակում նոր սահմանադրություն՝ ստանալով դիկտատորական լիազորություններ և հիմքեր նախապատրաստելով Չինաստանում միապետությունը վերականգնելու համար:

Թեև 1911-1913 թթ. Չինական հեղափոխությունը չի վերացնում Չինաստանին պարտադրված անիրավահավասար պայմանագրերը և նրա կիսագաղութային կախվածությունը օտարերկրյա տերություններից, այնուամենայնիվ, այդ հեղափոխության կարևոր հետևանքներից մեկը միապետության և 1644 թվականից իշխող

մանջուրական արքայատոհմի տապալումն էր: Հեղափոխության արդյունքում Զինաստանը հոչակվում է հանրապետություն: Հեղափոխության ընթացքում, 1911 թ. նոյեմբերին Արտաքին Մոնղոլիան ստանում է ինքնավարություն, իսկ 1921 թ.' անկախություն: Այդ հեղափոխության ընթացքում փաստացի անկախություն է ստանում նաև մանջուրների կողմից 1792 թ. նվաճված Տիբեթը: Հետագայում՝ 1951 թ., Զինական ժողովրդական Հանրապետության կազմում Տիբեթը ստանում է ազգային ինքնավարության իրավունք: 1911-1913 թթ. չինական հեղափոխությունը որոշակի ազդեցություն է թողնում նաև ասիական երկրների ազգային-ազատագրական և հեղափոխական շարժումների ուժեղացման գործում:

ОФСИАЛЛУСЦАШ ҚРЫМСЫЗЛЫГЫН

ш/ *Түркмәншәхинең үйшилдөрлөрінің топтападының*

Гrimm Э. Д., *Сборник договоров и других документов по истории международных отношений на Дальнем Востоке (1842-1925)*, М., 1927.

- № 1. Нанкинский англо-китайский договор о мире, дружбе, торговле, возмещении убытков и т. д. от 29 авг. 1842 г., с. 1-5.
- № 2. Дополнительный к Нанкинскому англо-китайский договор 8 окт. 1843 г., с. 5-7.
- № 3. Русско-китайский торговый договор, заключенный в Кульдже 25 июля 1851 года, с. 8-10.
- № 8. Айгунский русско-китайский договор 28/16 мая 1858 г., с. 21.
- № 9. Тяньцзиньский русско-кит. договор 13/1 июня 1858 г., с. 22-26.
- № 10. Тяньцзиньский англо-китайский договор о мире, дружбе и торговле от 26 июня 1858 г., с. 26-38.
- № 12. Пекинская англо-китайская конвенция о мире и дружбе 24 окт. 1860 г., с. 46-47.
- № 27. Протокол обмена деклараций о заключении 4% китайского займа, подписанный в С.-Петербурге 24 июня (6 июля) 1895 г. представителями России и Китая, с. 80-81.
- № 28. Московский русско-китайский договор 22 мая 1896 г., с. 81-82.
- № 34. Французско-китайское соглашение о неотчуждении острова Хайнана. Пекин, 15 марта 1897 г., с. 91.
- № 36. Англо-китайский обмен нот о неотчуждении области Янцзы. Пекин 9/11 февраля 1898 г., с. 91-92.
- № 37. Англо-китайское соглашение о должности ген-инспектора таможен 13 февраля 1898 г., с. 92-93.
- № 38. Договор между Германией и Китаем об уступлении Цзяочжоу. Пекин, 6 марта (22 февраля) 1898 г., с. 92-93.
- № 39. Конвенция, заключенная между Россией и Китаем 15 марта ст.ст. 1898 года (о Порт-Артуре) в Пекине, с. 97-100.

- № 40. Французско-китайский обмен нот о неотчуждении китайской территории, пограничной с Тонкином. Пекин 4/10 апр. 1898 г., с. 100.
- № 41. Французско-китайский обмен нот 9-10 апреля 1898 г. о жел. дор. в ю. Китае, о Гуанчжоуване и о почтовом ведомстве Китая, с. 100-101.
- № 44. Соглашение об аренде Вэй-хай-вэя, заключенное Великобританией и Китаем в Пекине, 7 июля 1898 года, с. 107-108.
- № 47. Соглашение о расширении территории Гонконга, заключенное между Великобританией и Китаем в Пекине 9 июня (28 мая) 1898 года, с. 110-111.
- № 48. Правила внутреннего пароходного плавания. 28 июля 1898 г., с. 111-113.
- № 49. Соглашение английских и германских банков о сферах железнодорожных интересов (2 сент. 1898 г.), с. 114-115.
- № 50. Соглашение английских и американских банков по вопросам железнодорожного строительства в Китае от 1 февр. 1899 г., с. 115-118.
- № 51. Англо-русское соглашение о сферах железнодорожных интересов *от 16/28 апреля 1899* года, с. 118-119.
- № 52. Русско-китайское соглашение относительно китайских железных дорог в направлении к русской границе. 20 мая-5 июня 1899 г., с. 119-120.
- № 54. Обмен нот между Соединенными Штатами и другими державами по вопросу о политике “открытых дверей” в Китае (сентябрь 1899—март 1900 г.г.), с. 122-125.

Русско-китайские отношения. 1689-1916. Официальные документы,
изд. Восточной литературы, М., 1958.

- № 1. 1689 г., августа 27. Нерчинский мирный договор между Россией и Китаем о границах и условиях торговли, с. 9-11.
- № 8. 1851 г., июля 25. Трактат, заключенный между Россией и Китаем, о торговле в Кульдже и Чугучаке, с. 26-29.

№ 9. 1858 г., мая 16. Айгунский договор о переходе к России левобережья Амура и о русско-китайской торговле в Приамурье, с. 29-30.

№ 10. 1858 г., июня 1. Тяньцзиньский трактат между Россией и Китаем об условиях политических взаимоотношений, с. 30-34.

№ 11. 1860 г., ноября 2. Пекинский дополнительный договор об определении русско-китайских границ, порядке дипломатических сношений и о торговле в Кульдже, с. 34-40.

№ 23. 1895 г., июня 24. Декларация между Россией и Китаем о предоставлении Китаю займа, с. 67-69.

№ 24. 1896 г., апреля 2. Соглашение между Китаем и Россией о предоставлении последней концессии в Ханькоу, с. 69-70.

№ 29. 1898 г., марта 15. Конвенция, заключенная между Россией и Китаем об аренде Порт-Артура и Дальнего, с. 78-80.

№ 30. 1899 г., мая 20 - июня 5. Русско-китайское соглашение относительно китайских железных дорог в направлении к русской границе, с. 80-81.

Сборник договоров России с другими государствами (1856-1917),
Госполитиздат, М., 1952.

№ 7. Айгунский договор между Россией и Китаем о границах и взаимной торговле, 16/28 мая 1858 г., с. 47-48.

№ 8. Трактат между Россией и Китаем об определении взаимных отношений, Тянь-Цзинь, 1/13 июня 1858 г., с. 49-55.

№ 12. Дополнительный договор между Россией и Китаем, Пекин, 2/14 ноября 1860 г., с. 74-84.

№ 42. Декларация России и Китая о заключении 4%-ного китайского займа. С.-Петербург, 24 июня/6 июля 1895 г., с. 287-289.

№ 44. Союзный договор между Россией и Китаем, Москва, 22 мая/3 июня 1896 г., с. 292-294.

№ 46. Контракт на постройку и эксплуатацию Китайско-Восточной железной дороги. Берлин, 27 августа/8 сентября 1896 г., с. 297-302.

№ 48. Конвенция между Россией и Китаем о Ляодунском полуострове. Пекин, 15/27 марта 1898 г., с. 309-312.

№ 50. Соглашение между Россией и Великобританией о сферах железнодорожных интересов в Китае. С.-Петербург, 16/28 апреля 1899 г., с. 315-318.

Р/ Қаршылықтар

Аболтин В. Я., Империализм и Манчжурия, Этапы

империалистической борьбы за Манчжурию, изд. Огиз, М.-Л., 1931,

Бокщанин А. А., Императорский Китай в начале XV века (внутренняя политика), изд. «Наука», М., 1976.

Бокщанин А. А., Внешняя политика государства Цин в XVII веке, изд. «Наука», М., 1977.

Болдырев Б. Г., Займы как орудие закабаления Китая империалистическими державами (1840-1948 гг.), Госфиниздат, М., 1962.

Бродский Р. М., Американская экспансия в Северо-Восточном Китае. 1898-1905 гг., изд. Львовского ун-та, Львов, 1965.

Внешняя политика государства Цин в XVII веке, изд. «Наука», М., 1977.

Всемирная история, т. IV, Соцэкиз, М., 1958.

- Великие географические открытия, с. 84-102.
- Китай в XVI-XVII вв., с. 618-649.
- Колониальная политика европейских держав и создание колониальных империй, с. 696-709.
- Пробуждение Азии, ч. 3, Синьхайская революция, с. 360-369.

Всемирная история, т. V, Соцэкиз, М., 1958.

- Китай под властью Маньчжурской династии, с. 297-324.
- Итоги колониальной политики европейских держав к концу XVIII в., с. 339-355.

Всемирная история, т. VI, Соцэкиз, М., 1959.

- Китай в первой половине XIX в. Начало превращения Китая в полуколонию, с. 304-313.
- Тайпинское восстание. Государство тайпинов в Китае, с. 419-433.

Всемирная история, т. VII, Соцэкиз, М., 1960.

- Сопротивление народов Китая, Индии и Кореи колониальному гнету капиталистических держав. Народное восстание ихэтуаней, ч. 1, Китай, с. 255-268.

Горелик С. Б., Политика США в Маньчжурии в 1898-1903 гг. и доктрина «открытых дверей», изд. Восточной литературы, М., 1960.

Демидова Н. Ф., Мясников В. С., Первые русские дипломаты в Китае, изд. «Наука», М., 1966.

Добров А., Дальневосточная политика США в период Русско-японской войны, Госполитиздат, М., 1952.

Ефимов Г. В., Очерки по новой и новейшей истории Китая, Госполитиздат, М., 1951.

Ефимов Г. В., Внешняя политика Китая. 1894-1899 гг., Госполитиздат, М., 1958.

Ефимов Г. В., Революция 1911 года в Китае, Учпедгиз, М., 1959.

Зарецкая С. И., Внешняя политика Китая в 1856-1860 годах: отношения с Англией и Францией, изд. «Наука», М., 1976.

Зарина Л. Л., Лившиц С. Г., Британский империализм в Китае (1896-1901 гг.), изд. «Наука», М., 1970.

История дипломатии, т. I, под ред. В. А. Зорина и др., Госполитиздат, М., 1959.

- Капиталистические державы и Китай, с. 619-633.
- Русско-китайские дипломатические отношения до середины XIX в., с. 633-638.
- Дипломатия на Дальнем Востоке во время второй опиумной войны 1856-1858 гг., с. 767-781.
- Дипломатия на Дальнем Востоке во время третьей опиумной войны 1860 г. и интервенция против тайпинского восстания, с. 781-795.
- Дипломатия на Дальнем Востоке от подавления тайпинского восстания до конца 60-х годов XIX в., с. 795-810.

История дипломатии, т. II, Дипломатия в новое время. 1871-1914. Автор тома В. М. Хвостов, Госполитиздат, М., 1963.

- Борьба за раздел Китая, с. 353-382.

История Китая с древнейших времен до наших дней, изд. «Наука», М., 1974.

История Маньчжурии XVII-XX вв., изд. ДВНЦ АН СССР, Владивосток, 1981.

История Северо-Восточного Китая XVII-XX вв., кн. 1. Дальневосточное книжное издание, Владивосток, 1987.

Канторович А., *Америка в борьбе за Китай*, Соцэкгиз, М., 1935.

Китай в новое и новейшее время, изд. «Наука», М., 1981.

Клименко Н. П., *Колониальная политика Англии на Дальнем Востоке в середине XIX века*, изд. «Наука», М., 1976.

Коряков В. П., *Политика Франции в Китае в конце XIX в.*, изд. «Наука», М., 1985.

Лю Да-нянь, *История американской агрессии в Китае (Краткий очерк)*, пер. с китайского, изд. Иностранной литературы, М., 1953.

Маньчжурское владычество в Китае, изд. «Наука», М., 1966.

Междуннародные отношения на Дальнем Востоке. Книга первая. С конца XVI века до 1917 г., изд. «Мысль», М., 1973.

Нарочницкий А. Л., *Колониальная политика капиталистических держав на Дальнем Востоке. 1860-1895*, изд. Академии наук СССР, М., 1956.

Новая история Китая, изд. «Наука», М., 1982.

Новая история стран Азии и Африки, изд. «Наука», М., 1982.

- Феодальный Китай под властью цинской монархии, с. 79-92.
- Первая «опиумная» война. Начало закабаления Китая, с. 135-144.
- Крестьянская война тайпинов и другие антиправительственные движения. Захватнические войны Англии и Франции против Китая, с. 145-172.
- Превращение Китая в полуколонию, с. 346-356.
- Реформаторское движение в Китае. Восстание ихэтуаний, с. 356-371.
- Китай в начале XX в. Революция 1911 г., с. 430-450.

Остров П. И., *Империалистическая политика Англии в Китае в 1900-1914 годах*, изд. «Наука», М., 1978.

Очерки истории Китая. С древности до «опиумных» войн, пер. с китайского, изд. Восточной литературы, М., 1959.

Очерки по новой истории Китая, пер. с китайского, изд. Иностранной литературы, М., 1956.

- Романов Б. А., Россия в Маньчжурии (1892-1906).** Труды Ленинградского восточного института, вып. 26, Л., 1928,
- Стужина Э. П., Китайское ремесло в XVI-XVIII вв.,** изд. «Наука», М., 1970.
- Стужина Э. П., Китайский город XI-XIII веках,** изд. «Наука», М., 1979.
- Фань Вэнь-лань, Новая история Китая,** пер. с китайского, т. 1, 1840-1901, изд. Иностранной литературы, М., 1955.
- Фурсенко, А. А., Борьба за раздел Китая и американская доктрина открытых дверей. 1895-1900,** изд. Академии наук СССР, М.-Л., 1956.
- Хуан Мянь, Южный Китай,** изд. Иноиздат, М., 1962.
- Ху Сюй-вей и др., Восточный Китай,** пер. с китайского, Иноиздат, М., 1962,
- Ху Шэн, Агрессия империалистических держав в Китае,** пер. с китайского, Иноиздат, М., 1951.
- Цинь Бэнь-ли, История экономической агрессии американского империализма в Китае,** пер. с китайского, Иноиздат, М., 1951.
- Яковлева П. Т., Первый русско-китайский договор 1689 года,** изд. Академии наук СССР, М., 1958.

ՃԱՊՈՆԻԱՆ ՏՈԿՈՒԳԱՎԱՅԻ ՍՅՈԳՈՒՆԱՏԻ
ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ
(1603-1867 ԹԹ.)

**ՃԱՊՈՆԻԱՅԻ ՄԻԱՎՈՐՄԱՆ ԱՎԱՐՏԸ: ՏՈԿՈՒԳԱՎԱՅԻ
ՍՅՈԳՈՒՆԱՏԻ ՀԱՏՏԱՏՈՒՄԸ: ԴԱՍԵՐԸ, ԿԱՌԱՎԱՐՄԱՆ
ՀԱՄԱԿԱՐԳԸ**

Մինչև 16-րդ դարի վերջերը ֆեոդալամիապետական ճապոնիան, որի բնակչությունը հասնում էր 17 մլն.-ի, շարունակում էր մնալ քաղաքական մասնատվածության պայմաններում՝ բաղկացած լինելով բազմաթիվ ինքնուրույն իշխանապետություններից: Կայսեր («Տեննո», «Միկադո») իշխանությունը կրում էր խիստ ծևական բնույթ, որովհետև դեռևս 1192թ. ճապոնական կայսեր սուվերեն իշխանությունն անցել էր ֆեոդալական հզոր իշխանական տներից մեկի ներկայացուցչին, որին տրվել էր ճապոնիայի գերագույն կառավարչի՝ սյոգունի տիտղոսը: Այդ թվականից կայսեր անունից սյոգունները կառավարել են ճապոնիան՝ իրենց ձեռքում կենտրոնացնելով երկրի փաստական իշխանությունը:

16-րդ դարի վերջին և 17-րդ դարի սկզբին տնտեսական և քաղաքական նախադրյալներ են ստեղծվում ճապոնիայի միավորման և կենտրոնացված ֆեոդալական պետության ստեղծման համար: Այդ միավորման նախադրյալներից էին արտադրողական ուժերի զարգացումը, քաղաքների և առևտրի աճը, ներքին շուկայի ձևավորումը: Գյուղացիական ապստամբություններն իրենց հերթին ստիպում էին ֆեոդալներին նպաստելու երկրի քաղաքական միավորմանը: Ճապոնիայի միավորմանը ստիպում էր նաև եվրոպական գաղութարարներից սպառնացող արտաքին վտանգը:

17-րդ դարի սկզբին ֆեոդալական հզոր տոհմերից մեկի ներկայացուցիչ Իեյասու Տոկուգավան հիմնականում ավարտում է երկրի միավորումը՝ 1600թ. ջախջախելով իր հակառակորդ ճապոնական իշխանական տներին: Այդ հաղթանակից հետո Տոկուգավան 1603 թ. ստիպում է կայսերը իրեն շնորհել սյոգունի ժառանգական տիտղոսը՝ դառնալով Ճապոնիայի անսահմանափակ գերագույն կառավարիչը: Այդ թվականից 264 տարի շարունակ (1603-1867 թթ.) Ճապոնիան անընդմեջ կառավարվել է Տոկուգավայի իշխանատոհմի սյոգունների կողմից:

Հաղթելով իր հակառակորդներին, Տոկուգավան դաժան հաշվեհարդար է տեսնում նրանց նկատմամբ: Շատերը գլխատվում են, աքսորվում անմարդաբնակ կղզիներ: Տոկուգավան բռնագրավում է հակառակորդ իշխանների հողերը, որոնց մի մասը հանձնում իր կողմնակից իշխաններին, մյուս մասը վերցնում իրեն: Տոկուգավան իրականացնում է նաև պատանդների համակարգը, որի հետևանքով յուրաքանչյուր իշխան պետք է մեկ տարի ապրեր Հոնսյու կղզում գտնվող սյոգունի նստավայր Էդոյում, իսկ մեկ տարի՝ իր իշխանապետությունում, բայց պարտադիր կերպով Էդոյում պատանդ թողնելով իր ընտանիքի անդամներին: Այնուհետև ավերել է տալիս իշխանների ամրոցները և այլն: Տոկուգավայի տնտեսական հզորության հիմքն էին երկրի $\frac{1}{4}$ -րդ մասը կազմող անձնական հողատիրույթները, որոնց տարեկան Եկամուտը 17-րդ դ. վերջին 28-29 մլն. կոկու բրնձի ընդհանուր արտադրանքի մեջ կազմում էր 8 մլն. (մեկ կոկու հավասար է 150 կգ.), 17 խոշոր քաղաքներ, դրանց թվում Էդոն, Օսական, Նագասակին, 794 թվականից Ճապոնիայի մայրաքաղաքը և կայսեր նստավայրը դարձած Կիոտոն, մենաշնորհային առևտրի իրավունքի համար տրված շնորհագրերը, ուկու, արծաթի, պղնձի և այլ հանքերը: Նրա ուազմական հզորության հենարանն էր մոտ 80 հազ. անձնական վասալներից բաղկացած բանակը: Տոկուգավան լայնածավալ շինարարական աշխատանքներ է կատարում իր նստավայր Էդոն

(«Ծովախորշի քաղաք») կառուցապատելու և պերճաշութ դարձնելու համար:

Չնայած ճապոնիայի քաղաքական միավորմանը՝ այնուամենայնիվ, պահպանվում են ավելի քան 200 ինքնուրույն ֆեոդալական իշխանապետություններ: Յուրաքանչյուր իշխանապետություն իրենից ներկայացնում էր մեկ ինքնուրույն վարչաքաղաքական միավոր: Յուրաքանչյուր իշխանապետությանը իր գերագույն վերահսկողությանը ենթարկած սյոգունը կարող էր միջամտել նրանց ներքին գործերին, իրավագոր էր մասնակիորեն կամ ամբողջությամբ բոնագրավել ցանկացած իշխանի ժառանգական տիրույթները: Զէին խրախուսվում իշխանապետությունների միջև բոլոր տեսակի հարաբերությունները, որոնք գրեթե արգելված էին, իսկ նրանց ընտանիքների ամուսնական կապերը նախօրոք պետք է հաստատվեին սյոգունի կողմից: Իշխանները սյոգունի հանդեպ հարկային պարտավորություններ չէին կրում, սակայն պարտավոր էին տարբեր առիթներով, ըստ իրենց նյութական կարողությունների նրան նվիրել առնվազն 200-300 ոսկե կամ արծաթե դրամներ, իսկ նրա նստավայր Էդոն շքեղացնելու նպատակով՝ սեփական պալատներ կառուցել:

Սյոգունատի ժամանակաշրջանում ճապոնական հասարակությունը բաղկացած էր չորս դասերից: **Առաջին** դասի մեջ էին մտնում սամուրայները, այսինքն՝ ճապոնիայի բոլոր ազնվականները, որոնք իրենց հերթին բաժանվում էին առանձին խմբերի: **Երկրորդ** դասի մեջ էին գյուղացիները, **Երրորդի** մեջ՝ արհեստավորները, **չորրորդի** մեջ՝ առևտրականները: Ժողովուրդը զրկված էր զենք կրելու իրավունքից, նրա վրա հաստատված էր ոստիկանական ճյուղավորված ապարատի վերահսկողությունը:

Տոկուգավայի կառավարման ժամանակաշրջանում սյոգունի կառավարությունը բաղկացած էր երեք գերատեսչություններից, որոնք վարում էին տնտեսական, ռազմական և պաշտամունքային

բնագավառները: Գոյություն չուներ տարանջատում օրենսդիր և գործադիր իշխանությունների, ինչպես նաև վարչական և ռազմական մարմինների միջև: Վարչական ապարատը գտնվում էր սամուրայական ռազմական դասի տնօրինության ներքո: Սյոգունի կառավարությունը գլխավոր նախարարի ղեկավարությամբ գլխավորում էր ավագների խորհուրդը, որը բաղկացած էր սյոգունի կողմից նշանակված հինգ իշխաններից:: Գլխավոր նախարարը իրականացնում էր պետության կանցլերի պարտականությունները, իր գործունեության մեջ փաստորեն անկախ էր և պատասխանատու էր միայն սյոգունին: Ավագների խորհրդին կից կար երիտասարդ ավագների կոլեգիան, որն իրականացնում էր նախարարների գործառույթները: Մեծ իշխանությամբ էին օժտված ոստիկանական և դատախազական լիազորություններ իրականացնող հատուկ պաշտոնյաները, որոնք գաղտնի կամ բացահայտ հսկողություն էին իրականացնում ինչպես կենտրոնական, այնպես էլ տեղական կառավարման մարմինների նկատմամբ: Նահանգներում իշխանությունը պատկանում էր նահանգապետերին, որոնք միաժամանակ նաև տեղի կայազորի պետերն էին: Հատուկ փոխարքան՝ լայն լիազորություններով, նստում էր Հռնսոյ կղզու կայսերական մայրաքաղաք Կիոստոյում հսկողության տակ պահելով պատվավոր մեկուսացվածության ենթարկված կայսերը և ընդհանրապես ամբողջ արքունիքը: Կայսեր գործունեությունը, արքունական արարողությունները և ծիսակատարությունները խստորեն կանոնակարգված էին սյոգունի կառավարության ցուցումներով: Կայսեր հետ կարող էին առնչվել բացառապես նախկին տոհմային արիստոկրատիայի սակավաթիվ ներկայացուցիչները, որոնցից էլ ընդհանրապես կազմվում էր արքունիքը: Կայսեր հետ առնչվել փորձող մնացյալ իշխանները ենթարկվում էին մահապատժի, իսկ նրանց հողային տիրույթները բռնագրավվում էին սյոգունի կողմից: Գյուղական բնակչությունը նույնպես գտնվում էր խստագույն հսկողության ներքո:

Գյուղացիական կյանքի բոլոր բնագավառները խստորեն կանոնակարգված էին: Գյուղացիներին՝ որպես ճոխություն, արգելված էր սննդամթերքում բրինձ օգտագործել, մետաքսից կամ մետաքսաքաթանից հագուստներ հագնել, իսկ թույլատրված տարազների ձևը և գույնը պետք է համապատասխաներ սահմանված օրենքին: Չէր թույլատրվում գորգերով և պերճանքի այլ իրերով կահավորված ընդարձակ և հարմարավետ բնակարաններ կառուցել, զանազան զվարճություններ կազմակերպել, այցելություններ կատարել: Բոլոր տեսակի ծեսերը, արարողությունները և հանդիսությունները պետք է կազմակերպվեին միայն համեստ պայմաններում: Յուրաքանչյուր գյուղում հինգ բակերը կազմում էին մեկ միավոր և հողաբաժինների մշակման ու հարկային բնագավառում փոխադարձորեն կրում էին համապարտ երաշխավորության պարտավորություններ: Յուրաքանչյուր հնգյակի գլուխը ունետր գյուղացի էր, որի պարտականությունն էր ոստիկանական հսկողության ենթակել գյուղական կյանքի համար կառավարության սահմանած կանոնակարգերի կատարումը: Հսկողության նույնանման համակարգ էր գործում նաև քաղաքներում: Ճապոնացի մի շարք պատմաբաններ Տոկուգավայի սյոգունատը բնութագրում են որպես «ոստիկանական պետության» ժամանակաշրջան:

ՏԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԹԱՓԱՆՑՈՒՄԸ ՃԱՊՈՆԻԱ:

ՃԱՊՈՆԻԱՅԻ ԻՆՔՍԱՄԵԿՈՒՍԱՑՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Միջնադարյան ճապոնիան զարգանում էր՝ ունենալով մշակութային և տնտեսական սերտ կապեր հարևան ասիական երկրների՝ Չինաստանի և Կորեայի հետ՝ իր զարգացման մակարդակով գրեթե չտարբերվելով նրանցից: Անգամ մշակույթի մի շարք բնագավառներ, որոնցից էին գիրը, դավանանքը (բուդդայականություն), գաղափարախոսությունը (կոնֆուցիականություն), պետական կառուցվածքը, ճապոնիան ընդօրինակել էր Չինաստանից: Սակայն արդեն 16-րդ դարի 40-ական թվականներից ճապոնիա ներթափանցող եվրոպական առևտրական ընկերությունները, գործարար շրջանները, միսիոներական կազմակերպությունները սկիզբ են դնում Եվրոպայի ու «Ծագող արևի երկրի» հետ քաղաքական, տնտեսական և մշակութային հարաբերություններին:

1542 թ. ճապոնական Կյուսյու կղզու հարավային ափին է հայտնվում առաջին պորտուգալական նավը: Պորտուգալացիները առևտրական հարաբերություններ են հաստատում ճապոնիայի հետ՝ հիմնականում միջնորդի դեր կատարելով ասիական երկրների հետ կատարվող առևտրում: Մի քանի տարի անց ճապոնիայում եռանդուն գործունեություն են ծավալում կաթոլիկ միսիոներները:

16-րդ դարի վերջին ճապոնիա են այցելում հոլանդացիները, իսպանացիները, իսկ 1613 թ. ճապոնական նավահանգիստներն են ժամանում անգլիական առևտրանավերը: Ճապոնիա ներթափանցելու հետևանքով արդեն 16-րդ դարի 80-ական թթ. Կյուսյու կղզում բնակվում էին 100 հազար եվրոպացիներ: Այդպես է բացվում Արևմուտքի հետ ճապոնիայի հարաբերությունների ճանապարհը: Այդ ժամանակաշրջանից գրեթե մեկ դար՝ մինչև

Ճապոնիայի ինքնամեկուսացումը (1636 թ.), Ճապոնիա է ներթափանցում Արևմուտքի նյութական և հոգևոր մշակույթը: Եվրոպացիների միջոցով ընդարձակվում է թեյի, բամբակի մշակումը, մետաքսի արտադրությունը, տարածվում է ծխախոտի, շաքարեղեգնի, կարտոֆիլի մշակությունը: 1556 թ. սկսվում է կատարելագործված հրազենի արտադրությունը: Եվրոպացիների շնորհիվ զարգանում է նավաշինությունը, առաջընթաց է ապրում հանքարդյունաբերությունը: Եվրոպացիների հետ շփվելու հետևանքով ճապոնացիներն իմանում են, որ բացի Չինաստանից և Հնդկաստանից՝ գոյություն ունեն նաև այլ երկրներ, որոնցից էին Արևմուտքի զարգացած երկրները: Գլոբուսի և աշխարհագրական քարտեզների շնորհիվ ճապոնացիներն իմանում են իրենց աշխարհագրական դիրքն աշխարհում, և նրանց պատկերացումները տիեզերքի վերաբերյալ փոխվում են: Ճապոնական կենցաղ է մտնում գլխարկը, տաքատը, մահճակալը, աթոռը, ակնոցը, ժամացույցը և այլն: Ճապոնացիներն իմանում են նաև մոնոգամ ընտանիքի մասին: Միսիոներական պրոպագանդայի հետևանքով քրիստոնեությունը որոշ տարածում և ընդունելություն է գտնում ճապոնիայի հարավում: Սակայն քրիստոնեության ընդունումով ճապոնացիների ազգային հոգեբանությունը չի փոխվում:

Բայց Եվրոպացիները ճապոնիա են բերում ոչ միայն իրենց նյութական ու հոգևոր քաղաքակրթական նվաճումները, այլև որոշակի վտանգ են ստեղծում ճապոնիային հոգևոր, տնտեսական և քաղաքական կախվածության մեջ գցելու համար: Նախ՝ առևտրի միջոցով Եվրոպացիները ճապոնիայից դուրս էին հանում ոսկի և արծաթ: Ընդհատակյա ճանապարհով ճապոնացիներին որպես ստրուկներ փոխադրում էին իրենց գաղութները: Քրիստոնեության ընդունումով ճապոնիայի հարավի իշխանները սկսում էին անհնազանդություն դրսնորել սյոգունատի վարչակարգի նկատմամբ: Բացի այդ, քրիստոնեությունը դառնում էր

Ժողովրդական շարժումների, գյուղացիական ապստամբությունների գաղափարախոսությունը: Այդ ամենի հետևանքով 17-րդ դարի սկզբին Տոկուգավայի կառավարությունը սկսում է միջոցառումներ ձեռնարկել նախ քրիստոնեության, ապա Եվրոպական առևտրի դեմ: 1587 և 1597 թթ. իրահանգներով պայքար է սկսվում միսիոներական քարոզության դեմ, իսկ 1612 թ. քրիստոնեությունը Ճապոնիայում արգելվում է: 1616 թ. իրամանագրով Եվրոպացիներն իրավունք են ստանում առևտուր անել միայն Կյուսյու կղզու երկու նավահանգիստներում՝ Նագասակիում և Հիրադոյում, իսկ 1641 թ. սահմանափակ առևտուր է թույլատրվում չինացիներին և հոլանդացիներին միայն մեկ նավահանգստում՝ Նագասակիում: Հոլանդացիներին այդ բացառություն է արվում, որովհետև նրանք օգնել էին սյոգունին ճնշելու 1637 թ. գյուղացիական ապստամբությունը: Ապա արգելվում է Եվրոպական գրականության տարածումը: 1633 թ. իրապարակվում է սյոգունի առաջին իրամանագիրը օտարերկրացիների համար Ճապոնիան փակելու մասին: 1636 և 1639 թթ. իրապարակվում են երկրորդ և երրորդ իրամանագրերը՝ մահվան սպառնալիքով արգելելով Եվրոպացիների մուտքը Ճապոնիա: Ճապոնական նավերը, առանց հատուկ թույլտվության, չէին կարող նավարկել օտար երկրներ: Արգելվում է նաև մեծ նավերի կառուցումը: Մահվան սպառնալիքով ճապոնացիներին արգելվում է մեկնել արտասահման: Այդպիսով, 1636 թ. Ճապոնիան փակվում է Եվրոպացիների համար՝ արտաքին աշխարհից Ենթարկվելով ինքնամեկուսացման: Ինքնամեկուսացման քաղաքականությամբ Ճապոնիայի կառավարող շրջանները ծգտում էին փակել Եվրոպացիների մուտքը Ճապոնիա և հեռու պահելով նրանց ազդեցությունից՝ անխախտ պահել ֆեոդալական կարգերը և հարաբերությունները, սյոգունատի վարչակարգը: Եթե 1640 թ. չինական Առմին պորտուգալական գաղութից Ճապոնիա է ժամանում մի պատվիրակություն՝ խնդրելու սյոգունին բաց անելու Ճապոնիան, ապա դրա անդամների մեծ

մասը ոչնչացվում է, իսկ կենդանի մնացածներին հանձնում են նամակ, որտեղ գրված էր, որ Եվրոպացիները պետք է մոռանան ճապոնիայի մասին: Ինքնամեկուսացման քաղաքականությունը բացասաբար է անդրադառնում ճապոնիայի տնտեսական, մշակութային և քաղաքական զարգացման վրա՝ ամրապնդելով ֆեոդալական կարգերը և հարաբերությունները, սյոգունի վարչակարգը՝ նրան հեռու պահելով համաշխարհային գիտության, տեխնիկայի և քաղաքակրթության նվաճումներից:

**ՏԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳԱՂՈՒԹԱՅԻՆ
ՔԱՂԱՔԱԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՃԱՊՈՆԻԱՅՈՒՄ
19-ՐԴ ԴԱՐԻ 40-60-ԱԿԱՆ ԹՁ.**

1843 թ. սյոգունը հրապարակում է նոր հրահանգ Եվրոպացիների հետ ճապոնիայի հարաբերությունների մասին: Հաստատելով նախկին հրամանագրերը ճապոնիան փակելու վերաբերյալ, այնուամենայնիվ, 1843 թ. հրամանագրով թույլ էր տրվում օտար նավերին ճապոնական մի շարք նավահանգիստներում պահեստավորվել քարածխով, սննդամթերքով և խմելու ջրով: Միաժամանակ ճապոնական իշխանությունները խնդրում են հոլանդացիներին իրենց տեղեկացնել Եվրոպական գիտության, տեխնիկայի և քաղաքակրթության վերջին նվաճումների մասին, ինչպես նաև ճապոնիա բերել թերթեր, գրականություն:

19-րդ դարի կեսերին Հեռավոր Արևելքում ուժեղանում է տերությունների և առաջին հերթին՝ ԱՄՆ-ի էքսպանսիոնիստական քաղաքականությունը:

Ճապոնիայի նկատմամբ այդ շահագրգռությունը բացատրվում էր մի շարք հանգամանքներով: Ճապոնիան մեծ նշանակություն էր ստանում ամերիկյան նավերի համար որպես խաղաղօվկիանոսյան կարևոր հենակետ: Ճապոնիան աշխարհագրական հարմար դիրք ուներ ամերիկյան ազդեցությունը Հեռավոր Արևելքում և առաջին հերթին՝ Չինաստանում հաստատելու համար: ԱՄՆ-ի գործարար շրջանները ձգտում էին հումքի նոր աղբյուրներ և վաճառահանման նոր շուկաներ ձեռք բերել ամերիկյան զարգացող արդյունաբերության համար:

1845 թ. ԱՄՆ-ի կոնգրեսը լիազորում է պրեզիդենտին առևտրական հարաբերություններ հաստատել Ճապոնիայի հետ: 1854 թ. փետրվարին ինը ռազմանավերի սպառնալիքի ներքո Ճապոնիան հարկադրված է լինում զիջել և նույն՝ 1854 թ. մարտի 31-ին ստորագրվում է ճապոնա-ամերիկյան առաջին պայմանագիրը, որով երկու նավահանգիստներ էին բացվում ամերիկյան նավերի համար, բայց առանց առևտուր անելու իրավունքի: Այդ պայմանագրի համաձայն ճապոնական Հոնսյու կղզու Սիմոդա և Հոկայդո կղզու Հակոդատե նավահանգիստներում ամերիկյան նավերը բացառապես միայն հատուկ պաշտոնատար անձանց միջոցով կարող էին պահեստավորվել խմելու ջրով, աննդամթերքի պաշարով, անտառանյութով, քարածխով և այլ անհրաժեշտ ապրանքներով, ինչպես նաև նավաբեկությունից վնասված նավերի համար ստանալ փրկարարական և վերանորոգման անհրաժեշտ օգնություն: Ամերիկյան կառավարությունը ստանում էր Սիմոդա նավահանգստում հյուպատոսություն հիմնելու կամ դիվանագիտական ներկայացուցիչներ նշանակելու իրավունք: Ճապոնական կառավարությունը պարտավորվում էր որևէ տերությանը կամ տերություններին շնորհելիք արտոնությունները և առանձնաշնորհները անհապաղորեն տարածել ԱՄՆ-ի և նրա քաղաքացիների վրա:

Նույն թվականի հոկտեմբերին ճապոնիայի հետ նույնանման պայմանագիր է կնքում նաև Անգլիան:

1858 թ. հուլիսի 29-ին ԱՄՆ-ի ու Ճապոնիայի միջև էդոյում կնքում է բարեկամության և առևտրի մասին պայմանագիր, որի համաձայն դիվանագիտական հարաբերություններ էին հաստատվում Երկու Երկրների միջև: Էդոյում հիմնվում էր ԱՄՆ-ի, իսկ Վաշինգտոնում՝ Ճապոնիայի դեսպանությունը: Ճապոնական կառավարությունը իրավունք էր ստանում նաև իր հյուպատոսությունները հիմնելու ԱՄՆ-ի ցանկացած որևէ մեկ կամ բոլոր նավահանգիստներում: Ամերիկյան առևտրի համար Ճապոնիայում բացվում էին վեց նոր նավահանգիստներ, այդ թվում՝ Էդոն և Օսական Հոնսյու կղզում: ԱՄՆ-ի կառավարությունն իրավունք էր ստանում հյուպատոսներ կամ հյուպատոսական ներկայացուցիչներ նշանակել ամերիկյան առևտրի համար բացված ճապոնական որևէ մեկ կամ բոլոր նավահանգիստներում: Երկու Երկրների դիվանագիտական ներկայացուցիչներն իրավունք էին ստանում ազատորեն և առանց սահմանափակումների տեղաշարժվել հավատարմագրված պետություններում: Ամերիկյան քաղաքացիները ճապոնիայում օժտվում էին էքստերիտորիալության իրավունքներով՝ Ենթադատ լինելով բացառապես ամերիկյան օրենքներին: Ամերիկյան առևտրի համար բացված ճապոնական բոլոր նավահանգիստներում ամերիկյան քաղաքացիները կարող էին մշտական բնակություն հաստատել, շինություններով հանդերձ հողատարածքներ վարձակալել, ոչ ուղմական բնույթի շինություններ, առևտրական ապրանքների պահեստներ կառուցել, ծառայության և այլ նպատակների համար ճապոնացիներ վարձել: Ամերիկյան քաղաքացիները ճապոնիայում կարող էին ազատորեն իրենց պաշտած կրոնը դավանել և այդ նպատակով Եկեղեցիներ կառուցել: Ճապոնիա ներմուծվող և արտահանվող տարբեր կարգերի ապրանքատեսակների վրա հիմնականում սահմանվում էր 5% մաքսատուրք: Բացառությամբ

ճապոնական պղնձե դրամների՝ բոլոր տեսակի դրամները, ինչպես նաև ոսկու և արծաթի ձովակտորները ճապոնիայից կարող էին արտահանվել: Օտարերկրյա բոլոր տեսակի դրամները ճապոնիայում որպես վճարման միջոց կարող էին ազատորեն շրջանառության մեջ գտնվել: Բրնձի և հացահատիկի արտահանումն ընդհանրապես արգելվում էր: Ճապոնիա ներմուծվող ոսկին և արծաթը մաքսատուրքի չեն ենթարկվում: Օփիումի ներմուծումը խստորեն սահմանափակվում էր: Ամերիկյան յուրաքանչյուր առևտրանավ կարող էր ճապոնիա ներմուծել ընդամենը չորս անգլիական ֆունտ օփիում, իսկ սահմանված քանակից ավելին բռնագրավվում և ոչնչացվում էր ճապոնական իշխանությունների կողմից: ԱՄՆ-ը իրավունք էր ստանում ճապոնիա ներմուծել զինվորական հանդերձանք, սպառագինության տարբեր տեսակներ, շոգենավեր, ռազմական և առևտրական նավեր: Ամերիկյան ռազմական մասնագետները կարող էին կազմակերպել և իրահանգավորել ճապոնական բանակը և ռազմածովային նավատորմը: Անհրաժեշտության դեպքում ամերիկյան ռազմանավերը պետք է օգնություն և աջակցություն ցուցաբերեին ծովում վթարված ճապոնական նավերին, իսկ օտար նավահանգիստներում հավատարմագրված ամերիկյան հյուպատոսները պետք է նույն վերաբերմունքը ցուցաբերեին ԱՄՆ-ի հետ բարեկամության և առևտրի մասին պայմանագիր կնքած պետության նավերին: Ճապոնա-ամերիկյան քաղաքական հարաբերություններում ԱՄՆ-ի պրեզիդենտը իրավունք էր ստանում միջազգային ասպարեզում ճապոնիայի և որևէ եվրոպական տերության միջև վիճելի խնդիրներ առաջանալու դեպքում բարեկամաբար հանդես գալու հաշտարար միջնորդի դերում: Այդպիսով, պայմանագրի համաձայն, ԱՄՆ-ի պրեզիդենտը փաստորեն ստանձնում էր միջազգային հարաբերություններում ճապոնիայի արտաքին քաղաքականության պաշտպանի և հովանավորի դեր, որը, մասնավորապես, կդրսնորվի 1904-1905 թթ.

ռուս-ճապոնական պատերազմի և Պորտսմուտի հաշտության բանակցությունների ընթացքում: Նույն թվականին Ճապոնիայի հետ նույնանման առևտրական պայմանագրեր են կնքում նաև Անգլիան և Ֆրանսիան:

1855 թ. փետրվարին ստորագրվում է ռուս-ճապոնական պայմանագիր, որով մշտական խաղաղություն և բարեկամական հարաբերություններ էին հաստատվում երկու պետությունների միջև: Ճապոնիան Ռուսաստանի համար նույնպես բաց է անում երեք նավահանգիստներ՝ Սիմոդան, Հակոդատեն և Նագասակին՝ առաջին երկու նավահանգիստներից որևէ մեկում ռուսական հյուպատոսություն հիմնելու իրավունքով: Ռուսաստանի քաղաքացիները ճապոնիայում օժտվում էին էքստերիտորիալության իրավունքներով: Ճապոնական կառավարությունը պարտավորվում էր Ռուսաստանի վրա նույնությամբ տարածել Եվրոպական երկրներին շնորհած և շնորհելիք բոլոր իրավունքներն ու արտոնությունները:

Այդ պայմանագիրը վերաբերում էր նաև երկու պետությունների տարածքային խնդիրներին: Քանի որ 1853-1856 թթ. Ռուսաստանը գտնվում էր Ղրիմի պատերազմի մեջ և չէր կարող տարածքային խնդիրներ ունենալ Ճապոնիայի հետ, ուստի Ռուսաստանը հարկադրված էր ճանաչել Ճապոնիայի իրավունքները հարավային Կուրիլյան կղզիների նկատմամբ: Սախալին կղզին ճանաչվում էր Ռուսաստանի և Ճապոնիայի ազդեցության ներքո գտնվող անբաժանելի տարածք: Երեք տարի անց՝ 1858 թ., ստորագրվում է ռուս-ճապոնական նոր պայմանագիր: Դրանով դիվանագիտական հարաբերություններ էին հաստատվում երկու երկրների միջև: Ճապոնիան ավելացնում է Ռուսաստանի համար բացված նավահանգիստների թիվը՝ դրանք հասցնելով հինգի: Ռուսաստանի վրա նույնությամբ տարածվում էին նույն թվականին կնքված ճապոնա-ամերիկյան պայմանագրի բոլոր հոդվածները:

Փաստորեն, ճապոնիայի քաղաքական և տնտեսական ինքնամեկուսացմանը ԱՄՆ-ի կողմից հարկադրաբար վերջ է դրվում 1854 թ. և սկիզբ է դրվում ճապոնիայի հետ Եվրոպական տերությունների, ԱՄՆ-ի ու Ռուսաստանի նոր հարաբերությունների ժամանակաշրջանին: Սակայն բոլոր տերությունների համեմատությամբ տնտեսական բնագավառում ճապոնիայում շարունակում էր գերակայել Անգլիան՝ իր համաշխարհային արդյունաբերական գերիշխանության և հզոր ռազմածովային նավատորմի շնորհիվ:

1867-1868 թթ. ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՃԱՊՈՆԻԱՅՈՒՄ: ՎԵՐԱՓՈԽՈՒՄՆԵՐԸ 19-ՐԴ ԴԱՐԻ ՎԵՐՋԻՆ 30-ԱՄՅԱԿՈՒՄ

1867 թ. հոկտեմբերի 29-ին ճապոնիայում սկսվում է հեղափոխություն, որի նպատակն էր տապալել սյոգունի վարչակարգը, ստեղծել միասնական, կենտրոնացված պետություն, վերականգնել երկրի ազգային ու տնտեսական անկախությունը օտարերկրյա տերությունների պարտադրած անիրավահավասար պայմանագրերից և պայմաններ ստեղծել երկրի առաջադիմության համար: Այդ պայքարը գլխավորում էին Հոնսյու կղզու հարավարևմտյան առաջադիմական սամուրայական շրջանները, որոնք պահանջում էին վերականգնել կայսեր գերագույն իշխանությունը: Սամուրայական հեռատես քաղաքական շրջանները հանձին կայսեր և նրա՝ որպես Աստծո որդու նկատմամբ գոյություն ունեցող ավանդական կրոնական պաշտամունքի՝ տեսնում էին միակ կարևոր ուժը օտարերկրյա գաղութացման վտանգի դեմ ճապոնիան համախմբելու և նրա առջև ծառացած ներքին ու արտաքին հրատապ խնդիրները լուծելու համար:

Սյոգունի վարչակարգին ընդդիմադիր քաղաքական ուժերը 1867 թ. նոյեմբերի 8-ին ստիպում են 15-ամյա կայսր Մուցուհիտոյին (1867-1912 թթ.) ստորագրել իրովարտակ սյոգունին քաղաքական իշխանությունից զրկելու մասին: 1868 թ. հունվարի 3-ին պաշտոնապես վերականգնվում է կայսերական գերագույն իշխանությունը և կայսեր գլխավորությամբ ստեղծվում է նոր կառավարություն: Այդ հեղափոխության արդյունքում, ի վերջո, պարտված սյոգունը իր մայրաքաղաք Էդոյում 1868 թ. մայիսին անձնատուր է լինում: Այդպիսով, 1868 թ. մայիսին ճապոնիայում վերանում է 1192 թվականից գոյություն ունեցող սյոգունատի վարչակարգը: Ճապոնական պատմագրության մեջ 1867-1868 թթ. հեղափոխությունը բնութագրվում է որպես «Մեյձիի վերականգնում», այսինքն՝ կայսեր գերագույն իշխանության վերականգնում: Այդ հեղափոխության ընթացքում, բացի կայսեր գերագույն իշխանության վերականգնումից, այլ փոփոխություններ չեն կատարվում: Ուստի այդ հեղափոխությունը բնութագրվում է որպես անավարտ հեղափոխություն: Սակայն 1867-1868 թթ. այսպես կոչված այդ անավարտ հեղափոխությունը նոր ուղի է բացում ճապոնիայում սոցիալ-տնտեսական և քաղաքական վերափոխումներ իրականացնելու համար: Հեղափոխությունից հետո ճապոնիայում սկսվում է առաջադիմական բարեփոխումների ժամանակաշրջանը՝ «Բարգավաճ երկիր, հզոր բանակ» ստեղծելու նշանաբանով: Նախ և առաջ՝ 1868 թ. սեպտեմբերին, ճապոնիայի մայրաքաղաքն է դառնում սյոգունի նախկին նստավայր Էդոն, որը վերանվանվում է Տոկիո՝ «Արևելյան մայրաքաղաք»: Այդտեղ են ժամանում կառավարությունը, պետական հիմնարկները և կայսրը՝ իր արքունիքով: 1871 թ. կատարվում է վարչական բարեփոխում, որի հետևանքով վերացվում են բոլոր ֆեոդալական իշխանապետությունները և ստեղծվում են 50 խոշոր նահանգներ՝ կենտրոնից նշանակված նահանգապետերով, որոնք պատասխանատու էին կայսեր առաջ: Իշխանությունից զրկված

իշխաններին սահմանվում է ժառանգական թոշակ՝ իրենց նախկին հողերից ստացած եկամտի 10 տոկոսի չափով: Նախկին չորս դասերի փոխարեն ստեղծվում են երեքը. առաջին դասի մեջ են մտնում սամուրայական բարձրագույն ազնվականները և արքունական արիստոկրատիան: Այդ դասի համար սահմանվում են ազնվականական տիտղոսներ: Երկրորդ դասի մեջ են մտնում բոլոր նախկին սամուրայները: Երրորդ դասի մեջ են մտնում ժողովրդական բոլոր զանգվածները: Վերացվում են դասային արտոնությունները, հոչակվում է օրենքի առաջ բոլորի հավասարությունը: Բոլոր դասերի համար ընդունվում են միասնական օրենսգրքեր և օրենքներ: Ֆեոդալական դատարանների փոխարեն հիմնվում են բոլորության դատարաններ: Վերացվում են ներքին մաքսերը, հոչակվում է ներքին և արտաքին առևտորի, տեղաշարժման ազատություն: Հիմնվում են բանկեր (օրինակ՝ 1882 թ. Ճապոնիայի բանկը), բաժնետիրական ընկերություններ: 1878 թ. սկսում է գործել Ճապոնիայի սակարանը: Պետական ձեռնարկությունները վաճառվում են մասնավոր ընկերություններին և անհատ ձեռներեցներին: 1868 թ. մինչև 1885 թ. մասնավոր կապիտալի կողմից ստեղծվում են մոտ 1.300 արդյունաբերական ձեռնարկություններ: 1872 թ. շահագործման է հանձնվում առաջին երկաթուղագիծը՝ մայրաքաղաք Տոկիոն միացնելով Ճապոնիայի խոշորագույն խաղաղօվկիանոսյան նավահանգիստ Իոկոհամայի հետ: Ստեղծվում է փոստ-հեռագրային ծառայություն: Կատարվում է դրամական բարեփոխում. մտցվում է միասնական դրամական միավոր՝ իենը: Հոնսյու կղզու Օսակա քաղաքում հիմնվում է դրամահատարան: Կատարվում է կրթական բարեփոխում, ստեղծվում են նոր միջնակարգ դպրոցներ: 1877 թ. բացվում է Տոկիոյի համալսարանը, 1879 թ.՝ Ազգային ակադեմիան: Խրախուսվում է արտասահմանյան կրթությունը: Սակայն, ճապոնական ոգին պետք է համատեղվեր եվրոպական կրթության

հետ: 1873 թ. հունվարի 1-ին ճապոնիան անցնում է Եվրոպական տոմարին: Կառավարությունը կազմվում է Եվրոպական օրինակով: Կատարվում է ռազմական բարեփոխում. նախկին սամուրայական աշխարհագործ վերածվում է կանոնավոր բանակի: 20 տարին լրացած ճապոնացի երիտասարդների համար ցամաքային զինված ուժերում սահմանվում է Եռամյա, իսկ ռազմածովային նավատորմում՝ քառամյա զինվորական ծառայություն: Ճապոնական բանակը ստեղծվում է Եվրոպական, հիմնականում՝ պրուսական զինված ուժերի ռազմական կառույցների օրինակով, բայց այդ բանակի գաղափարական հիմքն է մնում միջնադարյան սամուրայական բարոյականությունը՝ կայսեր՝ որպես կենդանի աստծո պաշտամունքով: Բանակում հրամանատարական պաշտոնները զբաղեցնում են սամուրայները: Ստեղծվում է կառավարությանը ենթակա կայսերական գվարդիա: 1872-1873 թթ. կատարվում են ագրարային բարեփոխումներ. վերացվում են հողի նկատմամբ ֆեոդալական սեփականությունը, ֆեոդալական տուրքերը և պարհակները: Հողի սեփականատեր էր դառնում նա, ով բարեփոխման պահին փաստորեն տիրում էր հողին: Սահմանվում է հողի արժեքին համապատասխան 3% հարկ: Կայսեր ընտանիքին տրվում են ընդարձակ հողատարածքներ, անտառներ: Կայսրը դառնում է խոշոր կալվածատեր: Նրան են տալիս նաև բանկային արժեթղթեր և այլն: 1882 թ. հոչակվում է դավանանքի ազատություն: 1889 թ. փետրվարին ընդունվում է ճապոնիայի առաջին սահմանադրությունը, որը կազմվել էր գերմանական կայսրության 1871 թ. սահմանադրության օրինակով: 1890 թ. հովհաննեսին կայանում են ճապոնական պառլամենտի ընտրությունները:

«Մեյձի»-ի հեղափոխությունից հետո ճապոնիայում կատարված սոցիալ-տնտեսական և քաղաքական բարեփոխումները վերջ են դնում միջնադարյան ֆեոդալական մասնատվածությանը՝ ստեղծելով սահմանադրական միապետություն:

ՃԱՊՈՆԻԱՅԻ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆԻԹՅՈՒՆԸ 19-ՐԴ

ԴԱՐԻ ՎԵՐՋԻՆ 30-ԱՄՅԱԿՈՒՄ:

1894-1895 ԹՁ. ՃԱՊՈՆԱ-ՉԻՆԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ

1867-1868 թթ. հեղափոխությունից հետո կատարված սոցիալ-տնտեսական և քաղաքական բարեփոխումների հետևանքով ճապոնիայի տնտեսությունը սկսում է արագորեն զարգանալ: Արդեն 19-րդ դարի 70-80-ական թթ. ճապոնիան ստեղծում է նշանակալի ռազմական ուժ՝ վերածվելով ազրեսիվ տերության: «Մեյձի»-ի հեղափոխությունից հետո հզորացող ճապոնիան սկսում է մեծ ազդեցություն գործել Արևելյան Ասիայի քաղաքական կացության և իրադարձությունների վրա: Այդպիսով, Հեռավոր Արևելքում ազդեցության համար պայքարող տերությունների կողքին 19-րդ դարի 70-ական թթ. հայտնվում է նաև նոր զարգացող և հզորացող ճապոնիան: 1872 թ. ճապոնիան գրավում է Կյուսյու կղզուց հարավ գտնվող խաղաղօվկիանոսյան Շյուկյու կղզիները, որոնք, թեկուց ծևականորեն, 1789 թվականից վասալական կախում ունեին ֆեոդալական Չինաստանից:

Սակայն, ճապոնական կառավարող շրջանները մեծ շահագրգություն էին դրսևորում Կորեական թերակղզու նկատմամբ, որի աշխարհագրական և ստրատեգիական դիրքը կարևոր հենակետ էր ծառայելու ճապոնիային Չինաստան ներթափանցելու համար: Այդ ժամանակ Կորեան հետամնաց ֆեոդալական թագավորություն էր և 1637 թվականից ծևականորեն վասալական կախում ուներ Չինաստանից: 70-ական թթ. սկսվում է ճապոնիայի խաղաղ ներթափանցումը դեպի Կորեա: 1876 թ. փետրվարին ճապոնիան խաղաղության և բարեկամության պայմանագիր է կնքում Կորեայի հետ, որով դիվանագիտական հարաբերություններ էին հաստատվում երկու երկրների միջև: Ճապոնական առևտրի համար բացվում էին կորեական երեք նավահանգիստներ, որոնցում ճապոնացիները կարող էին հող

վարձակալել, տներ կառուցել և այլն: Հաստատվում են առևտրի ազատության և էքստերիտորիալության իրավունքներ: Նույն թվականին ստորագրվում է լրացուցիչ համաձայնագիր, ըստ որի ճապոնացի առևտրականները կարող էին առանց մաքսատուրքի ճապոնական ապրանքներ ներմուծել Կորեա: Կորեայում պետք է շրջանառվեր ճապոնական դրամական միավորը՝ իենը: Այդպիսով, Ճապոնիայի հետ 1876 թ. կնքած պայմանագրով Կորեան դուրս է գալիս ինքնամեկուսացման դարավոր քաղաքականությունից:

1875 թ. մայիսին ստորագրվում է ռուս-ճապոնական համաձայնագիր, որով Ճապոնիային էին անցնում Կուրիյան բոլոր 18 կղզիները: Դրանց դիմաց Ճապոնիան Սախալին կղզին ճանաչում էր ռուսական տարածք (Կուրիյան կղզիները Խորհրդային Միությունը կվերադարձնի Երկրորդ համաշխարհայինից հետո՝ 1945 թ.):

Ճապոնիայի կառավարող շրջաններն իրենց արտաքին ու գաղութային քաղաքականությունը վարելու համար մեծ ուշադրություն էին դարձնում հզոր և ժամանակակից բանակի ստեղծմանը: Ստեղծվում է 200հազարանոց բանակ, միաժամանակ՝ հզոր ռազմածովային նավատորմ: 19-րդ դարի վերջին Ճապոնիայի ռազմական ծախսերը կլանում էին պետական բյուջեի 30 տոկոսը, որը գերազանցում էր մնացած տերությունների ռազմական ծախսերին:

Եվրոպական տերություններից Անգլիան խրախուսում էր Հեռավոր Արևելքում ճապոնիայի ագրեսիվ արտաքին ու գաղութային քաղաքականությունը: 1894 թ. հուլիսին Անգլիան ճապոնիայի հետ կնքում է առևտրական նոր պայմանագիր, որով 1899 թվականից չեղյալ էին հայտարարվում նախկինում կնքված անգլո-ճապոնական պայմանագրերի անիրավահավասար պայմանները: 1894 թ. պայմանագրով Անգլիան իրաժարվում էր Ճապոնիայում իր քաղաքացիների էքստերիտորիալության իրավունքներից և անգլիական բնակավայրերի ինքնավարության

կարգավիճակից: Ինչպես անգլիացիները ճապոնիայում, այնպես էլ ճապոնացիները Անգլիայում ստանում էին բնակություն հաստատելու, առևտրական գործունեությամբ զբաղվելու, իոդեր վարձակալելու, շենքեր գնելու, ազատորեն կրոնական արարողություններ ու ծեսեր կատարելու իրավունքներ: Անգլիական նավահանգիստները բացվում են ճապոնական առևտրանավերի համար, որոնց, ինչպես նաև ռազմանավերին, անհրաժեշտության դեպքում պետք է ցուցաբերվեր համապատասխան օգնություն: Ճապոնիան իրավունք էր ստանում ներմուծվող ապրանքների վրա նախկին 5% -ի փոխարեն սահմանել 10% մաքսատուրք:

Մինչև 1898 թ. ճապոնիայի հետ անհրավահավասար պայմանագրերի պայմանները վերացնող անգլիականին նույնանման պայմանագրեր են կնքում նախ ԱՄՆ-ը և Չահագրգոված Եվրոպական տերությունները:

1895 թ. հունիսին Ռուսաստանը ճապոնիայի հետ նույնպես կնքում է անգլիականին միանման առևտրի ու ծովագնացության մասին պայմանագիր, սակայն Սախալինին ու Կորիլյան կղզիներին վերաբերող 1875 թ. ռուս-ճապոնական պայմանագրի պայմանները մնում էին անփոփոխ:

Վերացնելով նախկինում կնքած անհրավահավասար պայմանագրերի պայմանները և այդպիսով միջազգային հարաբերություններում ծեռք բերելով մեծ տերություններին համահավասար իրավունքներ՝ ճապոնիան հանդես է գալիս Չինաստանից ձևականորեն վասալական կախվածության մեջ գտնվող Կորեայում իր ռազմաքաղաքական և տնտեսական գերիշխանությունը հաստատելու աշխարհավարությամբ:

Որպես պատրվակ օգտագործելով Կորեայում բռնկված գյուղացիական ապստամբությունը ճնշելու սյուլերեն տերություն Չինաստանի մասնակցությունը՝ ճապոնիան 1894 թ. հուլիսի 23-ին Սեուլում իրականացնում է պետական հեղաշրջում, որի հետևանքով իր դրածո կառավարությունը օգնություն է խնդրում չինական

զորքերը Կորեայից վտարելու համար: 1894 թ. օգոստոսի 1-ին Ճապոնիան պատերազմ է հայտարարում Զինաստանին և նույն ամսվա 26-ին դաշնակցային պայմանագիր է կնքում իր դրածո կորեական կառավարության հետ՝ պարտավորվելով «Կորայի անկախությունը ամուր իիմքերի վրա պահելու և կորեական տարածքից չինական զորքերը վտարելու միջոցով ճապոնիայի և Կորեայի փոխադարձ շահերն իրականացնելու» նպատակով Զինաստանի դեմ ուղղված բոլոր տեսակի ռազմական գործողությունները մղել սեփական ուժերով: Կորեական կառավարությունը պարտավորվում էր Զինաստանի դեմ պատերազմում իր տարածքում ճապոնական զորքերին բոլոր միջոցներով օգնել նրանց տեղափոխությունը դյուրացնելու և սննդամթերքով ապահովելու գործում:

Ֆեոդալական Զինաստանը թե՛ ցամաքային և թե՛ ծովային ճակատամարտերում ջախջախիչ պարտություն է կրում ճապոնա-չինական պատերազմում:

1895 թ. ապրիլի 17-ին Հոնսյու կղզու Սիմոնոսեկի քաղաքում կնքված հաշտությամբ Զինաստանը ճանաչում է 1637 թվականից վասալական ենթակայության ներքո գտնվող Կորեայի թագավորության լիակատար և անվերապահ անկախությունը: Զինաստանը հարակից կղզիներով ճապոնիային է զիջում Լյաոդունյան թերակղզին, Տայվան (Ֆորմոզա) և Պենխուլեդան (Պեսկադորյան) կղզիները: Հյուպատոսություններ հիմնելու իրավունքով Զինաստանը ճապոնիայի համար բաց է անում չորս նոր նավահանգիստներ, իսկ իր գետային ցանցը նավարկելի է դառնում ճապոնական առևտրանավերի համար: Զինաստանի բոլոր բաց բնակավայրերում, քաղաքներում և նավահանգիստներում ճապոնացիները կարող էին հիմնել ձեռնարկություններ և սահմանված մաքսատուրքով արդյունաբերական ապրանքներ ներմուծել: Որպես պարտված երկիր՝ Զինաստանը պարտավորվում է ճապոնիային վճարել 200 մլn. յան ռազմատուգանք:

Վավերացված հաշտության պայմանագրի փոխանակումներից հետո Զինաստանը պարտավորվում էր ճապոնիայի հետ կնքել առևտրական, ծովագնացության և սահմանային հարաբերությունները կարգավորող նոր պայմանագրեր:

Սիմոնոսեկիի հաշտության որոշ պայմաններ դժգոհություն են առաջացնում Ռուսաստանի, Գերմանիայի և Ֆրանսիայի կառավարող շրջաններում, որոնք նույն թվականի ապրիլի 23-ին ռազմական սպառնալիքի ներքո ճապոնիայից պահանջում են իրաժարվել Լյաոդունյան թերակղզուց: Ճապոնիան հարկադրված էր ենթարկվել՝ որպես փոխհատուցում պահանջելով 30 մլն. յան լրացուցիչ ռազմատուգանք:

Սիմոնոսեկիի հաշտության պայմանագիրը սկիզբ է դնում Զինաստանը Եվրոպական տերությունների տիրապետությանը ենթարկելու քաղաքականությանը, որի հետևանքով Նանկինի հաշտության պայմանագրից ի վեր կնքված անիրավահավասար պայմանագրերով արդեն ինքնիշխանությոնից զրկված և կիսագաղութի վերածված այդ հսկայածավալ մանջուրական կայսրությունը 19-րդ դարի ավարտին բաժանվում է ռազմաքաղաքական ու տնտեսական «ազդեցության գոտիների» ու «վարձակալված տարածքների»:

ՃԱՊՈՆԻԱՅԻ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

1900-1914 թթ.

1904-1905 թթ. ՌՈՒՍ-ՃԱՊՈՆԱԿԱՆ ՊԱՏԵՐԱՋՄԸ

1894-1895 թթ. ճապոնա-չինական պատերազմում Զինաստանի դեմ հաղթանակը մեծ խթան է հանդիսանում ճապոնիայի արդյունաբերական վերելքի համար: Այդ տնտեսական վերելքին նպաստում են «Մեյձի»-ի հեղափոխությունից հետո ճապոնիայում կատարված առաջադիմական բարեփոխումները, ինչպես նաև

Չինաստանից ստացված ռազմատուգանքը: Հենց հաղթանակի տարում ճապոնիայի պառամենտն ընդունում է տնտեսության զարգացման ծրագիր, որը նախատեսում էր ստեղծել ծանր արդյունաբերության մի շարք ճյուղեր, մասնավորապես՝ ռազմական արդյունաբերության բնագավառում: Չինաստանից ստացված ռազմատուգանքի 90%-ը ներդրվում է ծանր արդյունաբերության մեջ՝ բանակը սպառագինելու և ռազմածովային նավատորմ կառուցելու համար: Այդ տնտեսական ծրագրի իրականացման հետևանքով մի քանի տարվա ընթացքում ճապոնիայում ստեղծվում են 2300 նոր ձեռնարկություններ: 19-րդ դարի վերջին ճապոնիայի արդյունաբերական վերելքը ուղեկցվում էր արդյունաբերության և կապիտալի միաձուլմամբ, որի հետևանքով առաջանում էին ֆինանսամոնոպոլիստական միություններ: Այդպիսի խոշոր մոնոպոլիստական միություններ էին 1870 թ. հիմնված Միցուբիշին, 1880 թ.¹ Յասուիտան, այնուհետև՝ Միցուին, Սումիտոմոն, Կասուիտան և այլն: 1907 թ. ճապոնիայում սկսվում է ավտոմոբիլների, իսկ 1910 թ.² ինքնաթիռների արտադրությունը: Մեծ զարգացում է ապրում բանկային կապիտալը: Կապիտալների 80%-ը ներդրվում էր բանկերում և առևտրական բնագավառներում, իսկ 10%-ը միայն՝ արդյունաբերության մեջ: 19-րդ դարի վերջերին ճապոնիայում բանկերի թիվը հասնում է 1192-ի՝ 211 մլն. իեն ընդհանուր կապիտալով: 20-րդ դարի սկզբին ճապոնիայի տնտեսական զարգացման հետևանքով արդյունաբերական արտադրանքը աճում է 181, մինչեւ ԱՄՆ-ում՝ 85%-ով: Ճապոնիան իր արդյունաբերության զարգացման տեմպերով առաջ է անցնում բոլոր երկրներից և արդյունաբերական արտադրանքի ծավալով գերազանցում հտալիային և մոտենում Ֆրանսիային: Այդ տնտեսական բուժն զարգացումն էլ հիմք է դառնում ճապոնիայի ագրեսիվ արտաքին ու գաղութային քաղաքականության իրականացման համար: Այդ գաղութային էքսպանսիան իրականացվում էր Չինաստանի նկատմամբ, որովհետև ճապոնիան

նույնպես մասնակցում էր Զինաստանն ազդեցության գոտիների բաժանելու տերությունների մղած պայքարին: Քանի որ Հեռավոր Արևելքում Ռուսաստանը Անգլիայի հիմնական մրցակիցն էր ու հակառակորդը, ուստի Ճապոնիան դառնում է Անգլիայի բնական դաշնակիցը՝ Հեռավոր Արևելքում Ռուսաստանի ռազմաքաղաքական և տնտեսական ազդեցությունը թուլացնելու համար: Այդ նպատակով 1899 թ. Անգլիան ճապոնիային է տրամադրում հսկայական վարկ՝ ռազմական նպատակներով օգտագործելու համար: Այնուհետև Անգլիան ճապոնիային է վաճառում նորագույն տեսակի տարբեր ռազմանավեր, որոնց արտադրությունն այդ ժամանակ ճապոնիայում չէր կարող իրականացվել:

Զինաստանն ազդեցության գոտիների բաժանելու կապակցությամբ սրված անգլո-ռուսական և ռուս-ճապոնական հակասությունների արդյունքում 1902 թ. հունվարի 30-ին Լոնդոնում Անգլիայի արտաքին գործերի նախարար լորդ Լենսդաունը և Ճապոնիայի դեսպան կոմս Հայասին ստորագրում են անգլո-ճապոնական առաջին ռազմաքաղաքական դաշինքը, որն անմիջականորեն ուղղված էր Հեռավոր Արևելքում իրենց հակառակորդ և մրցակից Ռուսաստանի դեմ: Այդ դաշինքի ռազմական մասում նախատեսվում էր պայմանավորվող կողմերից մեկի խստագույն չեղոքությունը դաշնակից պետության կողմից միայն մեկ տերության դեմ պատերազմ մղելու դեպքում: Չեղոքություն պահպանող տերությունը պարտավորվում էր բոլոր միջոցներով խանգարել իր դաշնակից տերության դեմ ուղղված այլ պետությունների թշնամական գործողությունները: Դաշինքի քաղաքական մասում երաշխավորվում էին Անգլիայի քաղաքական, առևտրական ու արդյունաբերական «հատուկ շահերը» Զինաստանում, իսկ ճապոնիայինը՝ Կորեայում և Զինաստանում:

Հեռավոր Արևելքում անգլո-ռուսական և ռուս-ճապոնական հակասություններն ի վերջո հանգեցնում են ռուս-ճապոնական

պատերազմին: 1904 թ. փետրվարի 6-ին ճապոնիան խզում է դիվանագիտական հարաբերությունները Ռուսաստանի հետ, և փետրվարի 8-ի լուս 9-ի գիշերը ճապոնական ռազմածովային նավատորմը անսպասելիորեն հարձակվում է Լյաոդունյան թերակղզու Ռուսաստանի խաղաղօվկիանոսյան ռազմածովային կայան Պորտ-Արտուր նավահանգստի վրա: Հաջորդ օրը՝ փետրվարի 10-ին, ճապոնիան պաշտոնապես պատերազմ է հայտարարում Ռուսաստանին:

Սկսված պատերազմում ճապոնիան Հեռավորարենեյան ռազմաճակատում ուներ 1140 դաշտային թնդանոթներով 375 հազ. բանակ, իսկ նրա ռազմածովային նավատորմը բաղկացած էր 168 ռազմանավերից: Ռուսաստանը Հեռավոր Արևելքում ուներ 148 դաշտային հրանոթներով 98 հազ. բանակ, իսկ Հեռավորարենեյան ջոերում՝ 69 ռազմանավ: Պատերազմի ընթացքում ճապոնիան նշանակալի ռազմական մատակարարումներ է ստանում ԱՄՆ-ից, Գերմանիայից ու Անգլիայից:

Պատերազմի առաջին իսկ օրերին Անգլիան իր ռազմաքաղաքական դաշնակից ճապոնիային է նվիրում երկու արդիական զրահանավ՝ անգլիական սպայակազմով և անծնակազմով, իսկ այնուհետև ճապոնական ռազմածովային նավատորմին է մատակարարում քարածուխ և վաճառում մոտ 30 շոգենավ: Ռուս-ճապոնական պատերազմի ընթացքում ճապոնիան նաև նշանակալի ֆինանսական օգնություն էր ստանում ԱՄՆ-ից ու Անգլիայից: Միայն 1904 թ. ապրիլից մինչև 1905 թ. հուլիսը ճապոնիան Անգլիայից ու ԱՄՆ-ից ստանում է 410 մլն. դոլար փոխառություն, որը ծածկում է նրա ռազմական ծախսերի 40%-ը:

Ռուս-ճապոնական պատերազմը ԱՄՆ-ի կառավարող շրջանների համար հարմարագույն առիթ էր ճապոնիայի միջոցով Ռուսաստանին պարտության ենթարկելու, Հեռավոր Արևելքում այդ տերության ռազմաքաղաքական ու տնտեսական ազդեցությունը թուլացնելու և այդ տարածաշրջանում իրենց հետապնդած

նպատակներն իրականացնելու համար: Պատերազմի առաջին խոկ օրվանից ԱՄՆ-ի կառավարությունը հանդես է գալիս Ռուսաստանին ռազմաքաղաքական մեկուսացման ենթարկելու նախաձեռնությամբ: Փետրվարի 8-ին ԱՄՆ-ի պետական քարտուղարը իրահանգում է Անգլիայում, Գերմանիայում և Ֆրանսիայում հավատարմագրված ամերիկյան դեսպաններին շանքեր գործադրել ռուս-ճապոնական պատերազմում այդ պետությունների չեզոքությունն ապահովելու համար: Փետրվարի 10-ին ԱՄՆ-ը նույն պահանջն է ներկայացնում նաև Ռուսաստանի ռազմական դաշնակից Չինաստանին՝ այդ մասին տեղյակ պահելով նաև ճապոնական կառավարությանը: Ենթարկվելով ԱՄՆ-ի նախաձեռնությամբ ձեռնարկված տերությունների, այդ թվում նաև Ճապոնիայի, միասնական դիվանագիտական ճնշմանը՝ Ռուսաստանի հետ ռազմական փոխօգնության պայմանագիր կնքած մանջուրական կառավարությունը չեզոքություն է հայտնում իր դաշնակից տերության դեմ Ճապոնիայի սկսած պատերազմում: Արտահայտելով ԱՄՆ-ի դիրքորոշումը ռուս-ճապոնական պատերազմի նկատմամբ՝ ԱՄՆ-ի պրեզիդենտ Թեոդոր Ռուզվելտը հայտարարում է, որ ինքը կկանգնի Ճապոնիայի կողքին և ըստ ամենայնի նրան կօգնի այնքան ժամանակ, քանի դեռ դա անհրաժեշտ կլինի:

Ռուս-ճապոնական պատերազմում թե՛ ցամաքային և թե՛ ծովային ճակատամարտերում Ռուսաստանը կրում է շախաժախիչ պարտություններ: Բացի ռազմական թուլությունից և նրա միջազգային մեկուսացվածությունից՝ Ռուսաստանի պարտությանը նպաստում է նաև 1905 թ. հունվարի 9-ին սկսված ռուսական հեղափոխությունը, այդ պատերազմում ցարիզմին պարտության մատնելու և իշխանությունը բռնազավթելու բոլշևիկյան կուսակցության կիրառած տակտիկան:

1905 թ. մայիսի 27-28-ին Ցուսիմայի նեղուցում տեղի ունեցած ծովային ճակատամարտից հետո թեև հաղթող, բայց արդեն

թուլացող ճապոնիան հաշտության միջնորդության խնդրանքով դիմում է ԱՄՆ-ի պրեզիդենտ Շենոդոր Ռուզվելտին: 1905 թ. հունիսի 8-ին ԱՄՆ-ի պրեզիդենտը դիմում է պատերազմող երկու երկրներին՝ առաջարկելով իր միջնորդությամբ սկսել հաշտության բանակցությունները: Բայց մինչև հաշտության բանակցությունները սկսելը 1905 թ. հունիսի 27-ին ճապոնիայի կառավարության ղեկավար Կացուրան և ԱՄՆ-ի ռազմական նախարար Տաֆտը ստորագրում են համաձայնագիր, որը հայտնի է Տաֆտ-Կացուրայի համաձայնագիր անունով: Այդ համաձայնությամբ ճապոնիան պարտավորվում էր ճանաչել 1898 թ. Փարիզի հաշտության պայմանագրով հաստատված ԱՄՆ-ի գերիշխանությունը Ֆիլիպիններում: Դրա դիմաց ԱՄՆ-ը համաձայնում էր, որ ճապոնիան իր պրոտեկտորատը հաստատեր Կորեայի վրա: Ըստ էության, այդ համաձայնագրով ԱՄՆ-ը դառնում էր 1902թ. անգլո-ճապոնական ռազմաքաղաքական դաշինքի ոչ պաշտոնական անդամը:

1905 թ. օգոստոսի 9-ին ԱՄՆ-ի Նյու-Հեմփիշիր նահանգի Պորտսմուտ քաղաքում ճապոնիայի և Ռուսաստանի միջև սկսվում են հաշտության բանակցությունները: Բանակցությունների երրորդ օրը՝ օգոստոսի 12-ին, Լոնդոնում, Անգլիայի արտաքին գործերի նախարար լորդ Լենսդաունը և ճապոնիայի դեսպան կոմս Հայասին ստորագրում են Ռուսաստանի դեմ ուղղված անգլո-ճապոնական ռազմաքաղաքական երկրորդ դաշինքը:

Ռուսաստանին նոր պատերազմով սպառնալու և ճապոնիայի թելադրած հաշտության պայմաններն ընդունել տալու նպատակով, ի տարբերություն անգլո-ճապոնական ռազմաքաղաքական առաջին դաշինքի, երկու պայմանավորվող կողմերը պարտավորվում էին միմյանց ռազմական օգնություն ցուցաբերել նույնիսկ մեկ պետության դեմ պատերազմ մղելու դեպքում: Դաշինքի քաղաքական մասում ընդունելով ճապոնիայի քաղաքական, ռազմական և տնտեսական գերակա շահերը Կորեայում՝ Անգլիան

ճանաչում էր Կորեան կառավարելու, վերահսկողության և հովանավորության Ենթարկելու իր դաշնակից տերության իրավունքը: Այդպիսով, Պորտսմուտում սկսված ռուս-ճապոնական հաշտության բանակցությունների արդեն երրորդ օրն իսկ Անգլիան նախապես ճանաչում և կանխորոշում էր իր ռազմաքաղաքական դաշնակից Ճապոնիայի քաղաքական, ռազմական և տնտեսական գերիշխանության իրավունքը Կորեայի վրա: Այդպիսով, մինչև ռուս-ճապոնական հաշտության կնքումը, թե՛ ԱՄՆ-ը և թե՛ Անգլիան արդեն նախապես ամրագրում էին Կորեայի վրա Ճապոնիայի պրոտեկտորատի հաստատման իրավունքը:

Ի վերջո ԱՄՆ-ի միջնորդությամբ Պորտսմուտում ընթացող ռուս-ճապոնական բանակցություններն ավարտվում են սեպտեմբերի 5-ին կնքված հաշտության պայմանագրով:

Ցամաքային և ծովային ճակատամարտերում ջախջախիչ պարտություններ կրած, միջազգային մեկուսացվածության մեջ հայտնված, անգլ-ռուսական լարված հարաբերություններում գտնվող, երկրում ծավալվող հեղափոխական իրադարձություններից սասանվող Ռուսաստանը հարկադրված էր կնքել իր պատմության աննախադեպ և ստորացուցիչ հաշտության պայմանագիրը: Այդ հաշտության պայմանագրով Ռուսաստանը Կորեան ճանաչում էր Ճապոնիայի քաղաքական, ռազմական և տնտեսական ազդեցության ներքո գտնվող երկիր, պարտավորվում էր չխանգարել Կորեան կառավարելու, հովանավորելու և վերահսկողության Ենթարկելու Ճապոնիայի ձեռնարկած միջոցառումները: Ռուսաստանը Ճապոնիային էր զիջում 1898 թ. Չինաստանից հարակից կղզիներով վարձակալած Լյաոդունյան թերակղզին՝ խաղաղօվկիանոսյան ռազմածովային ռազմակայան Պորտ-Արտուր նավահանգստով և Պորտ-Արտուրը Չին-Արևելյան երկաթգծի հետ մինչև Չանչուն միացնող հատվածով: Ռուսաստանը Ճապոնիային էր զիջում 1875 թ. պայմանագրով իր տիրապետության ներքո անցած Հարավային Սախալինը և

հարակից կղզիները: Ռուսաստանը և Ճապոնիան համաձայնվում էին իրենց տիրապետության ներքո գտնվող Սախալինի բաժանված մասերում և դրանց հարակից կղզիներում չկառուցել ռազմական ամրություններ, ինչպես նաև ռազմական միջոցառումներով չխչընդոտել Սախալինի ու Հոկայդո կղզիների միջև գտնվող Լապերուզի, ինչպես նաև ռուսական Ռևսուրի երկրամասի ու Սախալինի միջև գտնվող Թաթարական նեղուցների ազատ նավարկությանը:

Երկու երկրները պարտավորվում էին իրենց բոլոր զորքերը միաժամանակ էվակուացնել Մանջուրիայից, իսկ այդտեղի սեփական երկաթուղագծերը շահագործել բացառապես առևտրական ու արդյունաբերական նպատակներով: Ճապոնիայի ճնշմամբ Ռուսաստանը ստիպված էր հրաժարվել 1899 թ. անգլո-ռուսական համաձայնությամբ բացառապես իր ազդեցության գոտին ճանաչված Չինական Մեծ պարսպից հյուսիս գտնվող տարածքից և հայտարարել, որ Մանջուրիայում չունի Չինաստանի գերագույն իրավունքներին վնասող կամ իրավահավասարության սկզբունքներին անհամատեղելի տարածքային առավելություններ կամ արտոնյալ ու բացառիկ կոնցեսիաներ:

Ճապոնիան ձկնորսության իրավունք էր ստանում Ռուսաստանի Հեռավորարևելյան ծովային տարածքներում:

Հաշտության պայմանագիրը ամրագրում էր Կորեայում և Ճապոնիային Ռուսաստանի զիջած տարածքներում ռուսահավատակների իրավական կարգավիճակը: Այսպես. Կորեայում ռուսահավատակները պետք է օգտվեին առավել նպաստավոր պայմաններով օժտված օտարերկրյա քաղաքացիների իրավունքներով, իսկ Լյաոդունյան թերակղզու և Ճապոնիային անցած մյուս տարածքների ռուսահավատակները կարող էին իրենց անշարժ գույքը վաճառելով հեռանալ կամ ենթարկվելով ճապոնական օրենքներին ու դատազորությանը՝ ճապոնական կառավարության հովանավորության ներքո պահպանել անշարժ

սեփականության իրավունքները և շարունակել առևտրական ու արդյունաբերական գործունեությունը:

Ռուս-ճապոնական պատերազմում Ճապոնիայի հաղթանակը ուղի էր բացում Հեռավոր Արևելքում նրա տնտեսական և ռազմաքաղաքական հետագա էքսպանսիայի համար: Պորտսմուտի հաշտության պայմանագրի կնքումից անմիջապես հետո՝ 1905 թ. նոյեմբերին, Ճապոնիան իր պրոտեկտորատն է հաստատում Կորեայի վրա, իսկ 1910 թ. օգոստոսին ինքնուրույնությունից զրկված այդ թագավորությանը Ենթարկում է բռնակցման՝ որպես գեներալ-նահանգապետություն ընդգրկելով ճապոնական կայսրության կազմում: Բռնակցման Ենթարկելով Կորեան՝ Ճապոնիան հաստատվում է նաև Հարավային Մանջուրիայում:

Ռուս-ճապոնական պատերազմից հետո Ճապոնիան վերածվում է գաղութատեր տերության, որի հետևանքով արդեն փոխվում է ուժերի հարաբերակցությունը Հեռավոր Արևելքում՝ սրելով Ճապոնիայի հակասությունները Անգլիայի և ԱՄՆ-ի հետ:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ա/ Դիվանագիրական փաստաթղթերի ժողովածու

Гrimm Э. Д., Сборник договоров и других документов по истории международных отношений на Дальнем Востоке (1842-1925), М., 1927.

- № 4. Американско-японский договор о мире и дружбе, заключенный 31 марта 1854 г. в Канагаве, с. 14-16.
- № 5. Англо-японская конвенция, подписанная в Нагасаки 14 окт. 1854 г., с. 16-17.
- № 6. Русско-японский договор о мире и дружбе, заключенный в Симоде 7 февр. н. ст. 1855 г., с. 17-19.
- № 11. Американско-японский договор о дружбе и торговле, подписанный в Эдо 29 июля 1858 г., с. 38-45.
- № 23. Японско-китайский мирный договор (Симоносеки) 17 апреля 1895 г., с. 71-75.
- № 24. Русско-японский договор о торговле и мореплавании 8 июня (27 мая) 1895 г., (вошел в силу 17-5 июня 1899 г.), с. 75-79.
- № 57. Соглашение между Великобританией и Японией. В Лондоне 30 января 1902 года, с. 130-131.
- № 64. Англо-японское (союзное) соглашение от 12 августа 1905 г., с. 142-143.
- № 65. Мирный договор, подписанный между Россией и Японией в Портсмуте. 23 августа-5 сентября 1905 года, с. 143-146.

բ/ Գրականություն

Бедняк И. Я., Гальперин А. А., Очерки новой истории Японии (1640-1917), изд. Восточной литературы, М., 1958.

Бедняк И. Я., Япония в период перехода к империализму (Становление японского монополистического капитализма на рубеже XIX-XX вв.), изд. Восточной литературы, М., 1962.

Всемирная история, т. IV, Соцэкгиз, М., 1958.

- Великие географические открытия, с. 84-102.
- Японское феодальное государство, с. 670-684.
- Колониальная политика европейских держав и создание колониальных империй, с. 696-709.

Всемирная история, т. VI, Соцэкгиз, М., 1959.

- Разложение феодальных отношений в Японии. Революция 1868 г., с. 445-459.

Всемирная история, т. VII, Соцэкгиз, М., 1960.

- Капиталистическое развитие Японии, с. 246-254.
- Развитие империализма и обострение классовой борьбы в странах Европы, в Соединенных Штатах Америки и в Японии, с. 446-453.

Гальперин А., *Англо-японский союз. 1902-1921 гг.*, Госполитиздат, М., 1947.

Добров А., *Дальневосточная политика США в период Русско-японской войны*, Госполитиздат, М., 1952.

Жуков Е., *История Японии. Краткий очерк*, Соцэкгиз, М., 1939.

Зарецкая С. И., *Внешняя политика Китая в 1856-1860 годах: отношения с Англией и Францией*, изд. «Наука», М., 1976.

История дипломатии, т. I, под ред. В. А. Зорина и др., Госполитиздат, М., 1959.

- Изоляция Японии и Кореи, с. 639-641.
- Принудительное вовлечение Японии в дипломатические и торговые отношения с капиталистическими странами, с. 761-767.

История дипломатии, т. II. Дипломатия в новое время. 1871-1914. Автор тома В.М. Хвостов, Госполитиздат, М., 1963.

- Японо-китайская война, с. 297-332.
- На путях к русско-японской войне (1900-1903 гг.), с. 514-549.

- Русско-японская война и образование Антанты (1907-1907 гг.), с. 550-624.

История русско-японской войны 1904-1905 гг., изд. «Наука», М., 1977.

Клименко Н. П., *Колониальная политика Англии на Дальнем Востоке в середине XIX века*, изд. «Наука», М., 1976.

Кутаков Л. Н., *Портсмутский мирный договор*, Соцэкгиз, М., 1961.

Международные отношения на Дальнем Востоке. Книга первая. С конца XVI в. до 1917 г., изд «Мысль», М., 1973.

Нарочницкий А. Л., *Колониальная политика капиталистических держав на Дальнем Востоке. 1860-1895*, изд. Академии наук СССР, М., 1956.

Новая история стран Азии и Африки, изд. «Наука», М., 1982.

- Япония в период Токугавского сегуната, с. 92-102.
- Незавершенная буржуазная революция в Японии, с. 227-241.
- Капиталистическое развитие Японии в последней трети XIX в., с. 253-265.
- Япония в период довоенного империализма (1900-1914), с. 266-281.

Норман Г., *Становление капиталистической Японии. Экономические и политические проблемы периода Мэйдзи*, сокр. пер. с англ., изд. Иностранной литературы, М., 1952.

Очерки новой истории Японии (1640-1917), изд. Восточной литературы, М., 1958.

Петров Д. В., *Колониальная экспансия США в Японии в середине XIX в.*, М., Госполитиздат, 1955.

Романов Б. А., Россия в Маньчжурии (1892-1906). Труды Ленинградского восточного института, вып. 26, Л., 1928.

Романов Б. А., *Очерки дипломатической истории русско-японской войны (1895-1907)*, изд. Академии Наук СССР, М, 1955.

Светлов В. С., *Происхождение капиталистической Японии*, Соцэкгиз, М.-Л., 1931.

Файнберг Э. Я., *Внутреннее и международное положение Японии в середине XIX века*, изд. Московского института востоковедения, М., 1954

Файнберг Э. Я., *Начало экспансии европейских держав в Японии (1542-1640 гг.)*, в сб. Япония. Вопросы истории, изд. Восточной литературы, М., 1959.

Файнберг Э. Я., *Русско-японские отношения в 1697-1875 г.*, изд. Восточной литературы, М., 1960.

Хани Горо, *История японского народа*, пер. с. яп., изд. Иностранный литературы, М., 1957.

Эйдус Х. Т., *Очерки новой и новейшей истории Японии*, Госполитиздат, М., 1955.

Эйдус Х. Т., *История Японии с древнейших времен до наших дней.* Краткий очерк, изд. «Наука», М., 1968.

Գ. Ս. Քիլիմջյան

**Հնդկաստանի, Չինաստանի և Ճապոնիայի
միջնադարի ու նոր ժամանակների պատմություն
(Դասախոսություններ)**

Г. С. Килимджян

**Очерки средневековой и новой истории
Индии, Китая и Японии
(Курс лекций)**

**G. S. Qilimjyan
Aspects of Medieval and Modern History of
India, China, and Japan
(Lectures)**

**Գլխավոր խմբագիր՝ պ.գ.դ., պրոֆեսոր Ա. Ա. Ստեփանյան
Գրախոս՝ պ.գ.դ., պրոֆեսոր Ե. Գ. Մինասյան
Տեխնիկական խմբագիր՝ Զ. Կ. Կճանյան**